Էջմիածին



Ա

2001

ЯЖ146



ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

Յ«Ն«Ա«Ր
2001

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի
տարեմուտի խոսքը՝ ուղղված համայն հայ ժողովրդին 3
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ սրբատառ
Կոնդակը Հայոց Մեծ Դարձի 1700-ամյա հոբելյանի առիթով . . 6
Նոր տարվա և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ն.Ս.Օ.Տ.Տ.
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և քրիստոնյա
Եկեղեցիների պետերի, Հայ Եկեղեցու նվիրապետական
Աթոռների, պետական պաշտոնական անձանց միջև
փոխանակված ողջույնի և բարեմաղթանքների նամակներ,
բացիկներ ու հեռագրեր 11
Լուսավորչի Կանթեղը՝ ուղեցույց առ Աստված 14
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Եվրախորհրդի
պատվիրակությանը 17
Գարեգին Բ Կաթողիկոս. «Չկա՛ մեզ մահ, քանի դեռ մեր
գործերում ապրում է մեր հավատը» 18
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Բունդեսթագի անդամ
Ֆոլքեր Ռյուհեին 20
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց ՆԱՏՕ-ի գլխավոր
քարտուղար Ջորջ Ռոբերտսոնին 21
Նոր նշանակումներ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում և Վիրահայոց
թեմում 22
Ռավեննայի Դանթեի կենտրոնը կտրոնի Հայաստանում
քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյա
տարեդարձը 23

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ԴԱՎԻԹ ԴՊԻՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ - Ամանորի հանդիսություն Մայր Աթոռում 24
ՎԱՉԻԿ ՈՒՐԱՐՏԿԻՐ ՋԱՐԳԱՐՅԱՆ - Ամանորը և Ս. Ծնունդը Վազգենյան Դպրանոցում 31
ՀԱՅԿ ԴՊԻՐ ԲԱՐՄԵՂՅԱՆ - Քահանայական նոնագրություն և վեղարի փվչություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 36
Տ. Ավետիս աբեղա Սահակյան 42
Տ. Մկրտիչ աբեղա Պռոշյան 42
Տ. Վազգեն աբեղա Նանյան 42
Տ. Գևորգ աբեղա Սարոյան 43
Տ.Վիրապ քահանա Ղազարյան 43
Տ. Խորեն քահանա Կիրակոսյան 44
Տ. Մամբրե քահանա Պատուրյան 44

ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐՄԵՆ ԱՐՔԵՊՍ. ԲԵՐԲԵՐՅԱՆ - Անհրաժեշտ գիտելիքներ քրիստոնյաների համար 45
ԵՎՄԵՆԻ ՎԱՐԴԱՊԵՏ - Եսակենտրոնություն (էգոցենտրիզմ) . . 51

1700-ԱՄՅԱԿ

Էջմիածին» (խոսք՝ Հովհաննես Հովհաննիսյանի, երաժշտությունը՝ Կոմիտաս Գևորգյանի) 56

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

ԱՆԱՏՈԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ - Ս. Էջմիածնի Մայր Տաճարի սկզբնական հորինվածքը 68
ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - Հայոց պատմության առաջին քննությունը Ռուսաստանում. Սերգեյ Գլինկայի «Հայոց պատմության տեսությունը» 77
ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - ԺԹ դարի կեսերի Հայոց Եկեղեցու պատմության հարցերին նվիրված Նիկողայոս Ադոնցի նորահայտ հոդված-գրախոսությունը 91

ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

ԱՅԾԵՄԻԿ ԿՈՐԿՈՏՅԱՆ - Խաչպտուր վարդապետ
Կեսարացու հրապարակությունները 108
ԱՋԱՏ ԲՈՋՈՅԱՆ - Պրոֆ., դր. Յուլիուս Ասֆալգ 124

Եկեղեցական բեմ. լուրեր 127
"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата . 129
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin 132
"Etchmiadzine" organe officiel du Saint-siège d'Etchmiadzine 135

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՋԵՅԹՈՒՆՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала "Эчмиадзин"
Rédaction de la revue "Etchmiadzine", Etchmiadzine, Arménie

ԴԱՄԻՉ՝ 77764

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ-Ք

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏԱՐԵՄՈՒՏԻ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Սիրելի ժողովուրդ հայոց.

Տարեմուտի վերջին ռոպեներն են մեզ բաժանում նոր հազարամյակի սկիզբն ազդարարող 2001 թվականից: Ամենքս լավատեսությամբ համակված և հուսառատ հոգով. բարի ակնկալիքներով մուտք ենք գործում նոր դարաշրջան, որը ազգային մեր կյանքում բացվում է Հայոց Մեծ Դարձի՝ Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյակի փառաշուք հոբելյանով:

Ամանորի խորախորհուրդ այս գիշեր մեր հայացքները ուղղված են երկինք, քանզի հավատում ենք, որ քրիստոնեական մեր կյանքի մեծ հոբելյանը Աստծո կոչն է մեր ժողովրդին՝ վերստին դառնալու դեպի Փրկիչը մեր՝ Հիսուս Քրիստոս, և իբրև փոքր ժողովուրդ՝ մեծ լինելու Աստծո առջև, ինչպես 1700 տարիներ առաջ:

Փառք, պատիվ և երկրպագություն Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն, որ արժանի դարձրեց Մեզ՝ որպես Հայրապետ Ամենայն Հայոց, անկախ մեր Հայրենիքի խաղաղ երկնքի ներքո, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մեր ժողովրդի զավակներին ծանուցելու քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարությունների սկիզբը և բերկրանոք սրտի հրավիրելու մասնակցություն բերել հանդիսություններին:

Տարեմուտի բերկրալի այս պահին Մեր առաջին պարտքն է խոնարհվել լուսահոգի Վազգեն Ա և Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսների հիշատակի առջև, որ հորդորեցին մեր պետությանն ու ժողովրդին արժանավայել հանդիսավորությամբ տոնախմբել հայրենական մեր կյանքի մեծագույն իրադարձության 1700-ամյակը: Հուզմունքով ենք հիշում այն օրը, երբ Վազգեն Հայրապետը, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցու տեսիլքը հոգում ծրարած, օրհնեց հողը և ասաց. «Հա-

վանաբար. այսպեղ չեմ լինելու. բայց գուցե կհիշեք ինձ, համենայն դեպս, Երանի այն հայերին, որ այդ պահին, այդ օրը՝ 2001 թ., պիտի լինեն այստեղ»:

Երանին մեզ է տրված, ի Հայաստան ն ի սփյուռս ապրող հայորդիներիս, որ այս-օր, ահա, 2001 թվականի տարեմուտն ենք ապրում և մեր հայացքի առջև ոչ թե լուսնեն տեսիլքն ունենք Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու, այլ նրա հոյակերտ իրական սլացքը:

Սիրելի հայորդիք, հոբելյանական հանդիսությունների մեր առաջին քայլը թող լինի ուխտի կանգնել Հայոց 131 Հայրապետների ու մեր քրիստոնեական ժառանգությունը կերտած սուրբ նախնյաց հիշատակի առջև և ադոթել առ Աստված, որ մեր ժողովուրդը Առաքելական մեր Մայր Եկեղեցու օրհնության ներքո շարունակի հավատով վերածնված, միությամբ գորավոր ստեղծագործ իր կյանքը՝ սրբազան առաքելությունը հայրենաշինության:

20-րդ դարը պատմություն է այլևս՝ արձանագրած իր նվաճումներով ու կորուստներով, պարգևած բերկրանքով ու ցավերով, փառավոր ու ամոթալի էջերով: Նոր դարաշրջան է բացվում աշխարհի վրա՝ հասարակական կյանքի նորացող ընթացքով: Նոր դար և հազարամյակ մեր ժողովուրդը թևակոխում է ազատ Հայաստանի ու Արցախի 10-ամյա գոյության հպարտությամբ՝ շրկած եղեռնահար մեջքը, թոթափած խորհրդային բռնությունն ու անասպվածությունը, հաղթանակած ազատագրական պայքարում, բայց նաև՝ Հայրենիքում աղքատության, գործազրկության, արտագաղթի դեռ շարունակվող հոգսերով ու դժվարություններով, վճիռների սպառող բազում խնդիրներով ծանրաբեռն:

Արդարև, հայրենական մեր կյանքն այսօր կարոտ է վերաշինության, առողջացման, կառուցողական հաղթանակների, որոնց կենսավիշը միաբանությունն ու սերն է: Շաղախենք մեր կյանքը սիրով: Աստվածային Սուրբ Սիրով, որ բժշկում, ամոքում է վշտացած հոգիներ, կյանք պարգևում անկյալ մարդուն ու վերափոխում աշխարհը: Միրո նորոգությամբ գորացնենք ազատ ու անկախ մեր Հայրենիքը, բոլորվենք նրա շուրջ և միասնաբար կերտենք նորօրյա պատմությունը մեր՝ հայ կյանքը աշխարհասփյուռ:

Շաղախենք մեր կյանքը սիրով: Մերը իշխանավորի՝ բարիք ու շինություն է երկրին, սերը եկեղեցականի՝ հավատ, ապրելու բերկրանք ու արարելու կամք է ժողովրդին, համընդհանուր սերը՝ համազգային առաջընթացի ու ապահովության, վաղվա նրջանիկ օրվա պայման: «Սէր ոչ երբեք անկանի»: Ցուրաքանչյուրս առանձին և բոլորս միասին ազգային մեր կյանքում արժևորենք հոբելյանական նոր տարին: Հավատանք, ադոթենք ու ձգտենք, որ 1700-ամյակի վսեմ խորհուրդը արթնացնի մեր մեջ հայի Քրիստոնասերը, արի, արժանապատիվ հոգին: Նոր կյանք սկսենք՝ վերադառնալով մեր սուրբ հավատին, եկեղեցական-ազգային ավանդույթներին՝ պատեշելով խորթ ու օտար բարքերի հոսքը մեր դեպի Հայրենիք, հայ իրականություն: Բավարար չէ միայն անունով քրիստոնյա լինել, հավատավոր գործերով վկայենք, որ արժանի ենք «քրիստոնյա» անվանը և քրիստոնյա առաջին պետությունն ունենալու

պատվին ու պատասխանատվությանը, մեր հայրերի Աստծո օրհնությանն ու շնորհներին:

Մեր պատմության այս հանգրվանին, երբ բազմահազար հայորդիք, հեռու Հայրենիքի մաքուր երկնքից, Արարատի վսեմ հայացքից, Միածնաէջ Ս. Տաճարի սրբաբույր փեսքից, իրենց կյանքն են կառուցում աշխարհի տարբեր երկրներում, Հայրապետիս կոչն ու պատգամն է ի Հայաստան, Արցախ և ի սփյուռս ապրող մեր ժողովրդի զավակներին՝ արծարծ պահել Հայրենիքի սերը, հավատարմությունը Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն, լինել նախանձավոր ազգային գիտակցության և նրանից բխած պարտականությունների հանդեպ: Գիտենանք, թե մեր պարտքի հանձնառությամբ, համախումբ ջանքերով պիտի կերտենք նոր օրը մեր կյանքի, որպեսզի չկրկնվեն անցնող դարում մեր ժողովրդի հանդեպ գործված անարդարությունները, մեր կրած կորուստները, ապրած տագնապներն ու դժվարությունները:

Սիրելի աշխարհասփյուռ ժողովուրդ հայոց, զավակունք Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու. Ամանորի առիթով շնորհավորում ենք Մեր բարի մաղթանքներն ենք բերում ձեզ ի ծնգս աշխարհի: Թող նոր դարն ու հազարամյակը, Հայոց Մեծ Դարձի 1700-ամյակը ավետող 2001 թվականը բարիք ու երջանկություն բերի ամենքիս և լինի հոգևոր վերածննդի ու ազգային վերազարթոնքի տարի: Ջորանանք հավատով, որ կյանքն իմաստնանա Աստծո ներկայությամբ: Մեկտեղվենք մեր սիրելի Հայրենիքի շուրջ և ուխտավորի մեր գավազանն ի ձեռին՝ Սուրբ Էջմիածին գանք մեր ուխտը վերանորոգելու Աստծո հետ: Նա է Երկնավոր մեր Հայրը, հույսն ու ապավենը մեր. իսկ մենք՝ Նրա ժողովուրդը: Ծառայենք Աստծուն՝ ծառայելով մարդկանց, մեր ընտանիքներին, ժողովրդին ու Հայրենիքին:

Լուսավորչահաստատ Ամենայն Հայոց Հայրապետական Գահից աշխարհի խաղաղության, մեր երկրի ապահովության ու շենացման, մեր ժողովրդի բարօրության համար աղոթք առ Աստված վերառաքելով՝ բացված ենք հայտարարում Հայոց Մեծ Դարձի՝ Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակի պաշտոնական հանդիսությունները:

Շնորհավոր Ամանոր, բարի հռբելյանական տարի:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԴԱՐՁԻ 1700-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՓԱՌԴ ՄԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա»

Նոր Անդիս է Աստուածայայտնութեան: Արարչական Սիրով վերստին ջերմացել է աշխարհը համայն: Վերստին ունկնդիր ու ձայնակից ենք լուսազգեստ երեշտակների «Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» երկնաձայն օրհներգութեանը: Վերստին մեր հոգիներում բեթղեհեմեան Աստղի լոյսն է զուարթ, «զի ծնաւ մեզ այսօր Փրկիչ» եւ «Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա»:

Գոհութիւն եւ Փառք Ամենակալ Աստծուն:

Հայոց երկնքում՝ լոյսն ի լոյսին Բեթղեհեմի, մեծահանդէս շողարձակում է կանթեղը Ս. Լուսաւորչի եւ Սուրբ Ծննդեան հոգեւորոգութեամբ ու շնորհաբաշխութեան բարի սպասումներով լեցուն մեր հոգիները առաջնորդում դէպի երրորդ հազարամ-

նակ, որի առաջին տարին ազգային մեր կեանքում ոսկեդրոշմ կնքուած է Հայոց Մեծ Դարձի 1700-ամեայ յոբելեանով:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց ի սփիւռս աշխարհի.

Կանգնած Հայաստանի ազատ հողին, Հայոց խաղաղ երկնքի ներքոյ՝ որպէս շնորհընկալ Հայրապետ Ամենայն Հայոց, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Լոյս Խորանից բերկրանօք սրտի Սուրբ Ծննդեան բարի Աւետիսն ենք բերում ձեզ եւ զուարճացեալ մեծաւ ուրախութեամբ ծանուցում Հայոց Մեծ Դարձի՝ Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեակը:

Առաքելահաստատ է Հայ Եկեղեցին: 2000 տարի՝ Ս. Թադէոս եւ Ս. Բարդուղիմէոս առաքեալների մարտիրոսեալ արեամբ հիմնամուր, հովտում է Արարատի շուրջ մէկտեղուած Թորգոմի տան ժողովրդին եւ առաջնորդում նրան «ի խաւարէ ի լոյս, ի մահուանէ ի կեանս, յապականութենէ յանապականութիւն, յանգիտութենէ ի գիտութիւն ճշմարտութեան Իւրոյ»:

301 թուականին Ս. Լուսաւորչի անմէջ հայեացքով մեր ժողովուրդը արժանացաւ տեսնելու Ցարուցեալ Փրկչի լուսեղէն էջքը հայրենի իր հողում: «Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա» փառաբանութեամբ աշխարհը Հայոց առաջի Աստծոյ կանգնեց խոստովանութեան ու տեառնագրեց երկիրը իր հին՝ աշխարհում առաջինը հռչակելով քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն: Համայն ժողովրդով հաւատացինք համակ Սէր, Միակ Ճշմարիտ Աստծուն, Ս. Ծննդեանն ու Մարդեղութեան փրկչական առաքելութեանը Նրա: Հաւատացինք Գողգոթայի վրայ Խաչեալի յաղթական Յարութեանը: Եւ Յարութեան յոյսին խարսխուած կեանքն արմատացաւ Հայոց աշխարհում, Հաւատի, Յոյսի, Սիրոյ գոյներով դրոշմուեց մեր լեռներին, երկինք նայող մեր վանքերին, խաչքարերին, ծաղկոց աղօթախօս մատեաններին, փիեզերքը լուսերգութեամբ ազնուացնող տաղին, շարականին: Աստծոյ շնորհը գտանք՝ մարգարէի խօսքի եամաձայն. «Եւ տաց նոցա սիրտ այլ, եւ ճանապարհ մի՝ երկնչել յինէն զամենայն աւուրս ի բարութիւն իւրեանց եւ որդւոց իւրեանց յետ նոցա» (Երեմ. ԼԲ 39): Աստծոյ շնորհն ընդունեցինք ի բարութիւն մեզ եւ այն կեանքի ճանապարհ, շնորհ դարձրեցինք: Յոյս գտանք մեր անյուսութեան մէջ, անգիտութեան մէջ՝ իմացութիւն, մեր թուլութեան մէջ՝ ուժ, եւ օրհասի մէջ՝ վերածնունդ:

Այսպէս, սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց, ուխտ կապեցինք Աստծոյ հետ: «Ի վերայ Աջոյն եւ Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կայ» հաւատով ու գիտակցութեամբ եւ մեր յաւերժութեան խորհուրդ Մայր Տաճարով կամարեցինք Միածնի Էջքի Սուրբ Սեղանը՝ Խորանը Ուխտի՝ որպէս Աստծոյ ուրնաեպումի երկնահայեաց քարեղէն դրոշմ, որ 17 դար սերնդէ-սերունդ պատկերագրում է հայորդեաց հոգիներում:

Արդարեւ, մենք մեծաթիւ ժողովուրդ չենք եւ երբեք չենք եղել: Բայց մեր հաւատը՝ գործերի փոխուած, դարձրել է մեզ մեծագործ ժողովուրդ: Հաւատի գործերով մենք մարմնաւորել ու հաստատել ենք մեր սէրն առ Աստուած: Հաւատով մենք մէկ ենք որ-

պես Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, որ հաւատի կենդանի գործերով «դէպի երկինք բարձրացող գաղթի ճամբայ մը ունի»: Հայ Եկեղեցին հայ ժողովուրդն է՝ քրիստոնէական սուրբ հաւատով միասնական, ինքն իրեն Հայ Եկեղեցիով ճանաչող ու արտայայտող: Նայենք հայ կեանքի անդաստաններին: Քրիստոնէական համամարդկային արժէքներով, ազատութեան, արդարութեան, խաղաղութեան ձգտումներով է հանդերձաւորուած հայ ինքնութիւնը, որով, հակառակ մահաշունչ փորձութիւնների, դարերի մէջ արարել է միշտ, ի զօրս գտնուել հաղորդ լինելու եւ ներդրում բերելու մարդկային քաղաքակրթութեան առաջընթացին: Հայոց Սուրբ Եկեղեցուց աղբիւրացող հաւատով կեանք առած աշխարհաստիւռ հայ հոգիները հաւատով դարեր են կամրջել՝ հաստատուն ու կենսունակ պահելով մարդկային այն առանձնայատուկ ընդհանրութիւնը, որ «ազգ» եւ «ազգային» ենք կոչում: Հաւատն է ոգեշնչել ու թեւ տուել մեր բոլոր յաղթանակներին: Հարանց մեր հաւատով զինու�՝ մեր ժողովրդի զաւակունք չեն երկնչել մահից՝ յանուն հայրենեաց պայքարում մահկանացու իրենց կեանքը բազմիցս զարդարելով անմահ փառաց պսակով: Հաւատով մերժել ենք տուրն ու երեսպաշտութիւնը, վախկոտութիւնը, հաւատով սիրել ու նուիրուել մեր ընտանիքին, Հայրենիքին, Եկեղեցուն, հաւատով ապրել Աստծոյ հետ ու արժանացել ամենառատ օրհնութեանը Նրա: Այո՛, սիրելիներ, չկա՛ մեզ մահ, քանի դեռ մեր գործերում ապրում է մեր հաւատը, քանի դեռ հայոց պատմութեան ընթացքով յաղթականօրէն անցնում է լուսեղէն թափօրը Հայ Եկեղեցու՝ ճառագելով հաւատք ու խմորելով հոգի, հաւատարմօրէն պահելով մեր ժողովրդի ընթացքը դէպի Աստուած:

Այսօր մենք վերապրում ենք անցեալի մեր սուրբ յիշատակները եւ մեր կողքին զգում իրական ներկայութիւնը մեր նախնեաց, որ ապրել ու գործել են հոգու իրենց հայեացքի առջեւ քրիստոսատրոշմ մեր այսօրը ունենալով: Նրանք՝ յայտնի ու անյայտ անուններով, քիւր վկաներն են Քրիստոսի՝ հող հայրենին պաշտպանող զինուոր ու զօրավար, հող հայրենին շէնացնող շինական ու արհեստաւոր, երկիր կառավարող արքայ ու նախարար, շնորհալի կաթողիկոս, քերթող վարդապետ ու Ղեւոնդ Երէց, որ երկնային իրենց բարձունքներից աղօթակից են մեզ, որպէսզի հայոց ազգային կեանքի մեծագոյն իրադարձութեան դարադարձը նոր ելք դառնայ անհաւատութեան ու թերահաւատութեան խոր ու խաւար վիրապից, Աստուածային էջքի նոր տեսիլքով նոր դարձ դառնայ դէպի Քրիստոս:

Ազատութեան յուսաբեր շունչն է թեւածում հայրենի մեր եզերքներում: Հայաստանի նոր անկախութեան հաստատումով, Արցախի ազատութեան նուաճումով հայութեան հոգուց թօթափուել են եղեռնի մխացող վիշտը, խորհրդային անաստուածութեան տասնամեակների ճնշող բեռը, աներիւ երկրաշարժի կորուստների ցաւը, եւ ինքնարթնութեան ու ազգային մեր իրաւունքների պաշտպանութեան առաջին յաղթանակների բերկրանքով հաստատուել են լաւատեսութիւնն ու վստահութիւնը: Վերապրած տնտեսական ու քաղաքական կեանքի փորձութիւնների տագնապներ՝ մենք

«ՕՐՀՆԵՍՑԻ ԵՒ ՍՐԲԵՍՑԻ ՁՈՒՐՍ ԱՅՍ ՆՇԱՆԱՒ ...»

կանգնած ենք հոգևոր ու ազգային-հասարակական մեր կեանքի վերաշինութեան ճանապարհին:

Մեր պատմութեան որոշիչ այս շրջանում հարկ է, որ հաւատով ու քրիստոնէական ճշմարիտ արժէքներով իմաստաւորենք մեր կեանքը: Գիտակցենք Հայ Եկեղեցու դերակատարութիւնն իր կոչման բարձունքում, որպէսզի հասարակական մեր կեանքում Հայ Եկեղեցին իրապէս դառնայ խիղճը եւ երաշխաւորը բարոյականութեան, ժողովրդի կամքի արտայայտիչը պետութեան առջեւ եւ պետութեան ազդակիցը ժողովրդին ծառայելու սրբազան կոչման մէջ:

1700-ամեակի միաւորող ոգով եւ հաւատակերտ խորհրդով ընդառաջ գնանք ու վճիռներ գտնենք հոգեւոր-ազգային մեր կեանքի երատապ խնդիրներին ու մարտահրաւէրներին: Սրբագրենք մեր պատմութիւնը աղճատումներից ու շտկենք ժամանակների հարկադրանքները: Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնների միջեւ փարաձայնութիւնների հարթումով ձեռնամուխ լինենք Հայ Եկեղեցու ներքին բարեկարգութեանը, 2000-ամեայ քրիստոնէական ժառանգութեամբ գործուն մասնակցութիւն բերենք ազգերի, կրօնների ու եկեղեցիների եղբայրութեանը: Քայլենք նուիրական մեր իդեաների իրականացման վճռականութեամբ՝ որպէս մէկ Եկեղեցի, մէկ պետութիւն եւ ազգ:

Տիրաւանդ սիրով, Սուրբ Ծննդեան եւ Հայոց Մեծ Դարձի 1700-ամեայ յոբելեանի Անեփիսներով ողջունում ենք Հայ Եկեղեցու նուիրապետութեան Աթոռների Գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք, Ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանին, Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք, Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆեանին, Հայ Եկեղեցու գլխաւորեալ ողջ հոգեւոր դասին:

Հայրապետական Մեր ողջոյնն ենք բերում Հայաստանի եւ Արցախի Հանրապետութեանց Նախագահներին, պետական այրերին եւ բարեպաշտ հաւատացեալ մեր ժողովրդին ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփիւռս:

Հայրապետական պատգամ ու յորդոր ենք յղում աշխարհասփիւռ մեր զաւակաց 2001 թուականի ողջ ընթացքում արժանիօրէն տօնակատարել պանծալի յոբելեանը՝ արժեւորելով նրա խորհուրդը ազգային եւ համաքրիստոնէական կեանքում: Իւրաքանչիւրս վառենք մեր մոմը հայոց միասնականութեան խորհուրդ Տաճարում՝ Միածնաէջ Սուրբ Խորանի առջեւ: Հայ Եկեղեցու սուրբ աւագանը դարձնենք մեր հոգու ծննդավայրը: Քրիստոսադրոշմ կնքենք մեր զաւակներին՝ ունկնդիր լուսաբնակ Վազգէն Ա Հայրապետի հրաւէրին. «Միառնը տաք է, ձեզ է սպասում»:

Քրիստոնեայ առաջին պետութիւնն ու ազգը լինելու իրողութիւնն այսօր սոսկ հպարտութեան առիթ չպէտք է լինի մեզ համար, այլ պատասխանատուութեան քաջալերող ու ոգեղէն կոչ: Պարտք ունենք մեր Հաւատն ու Հայրենիքը պահպանած ու մեզ ժառանգած մեր նախնեաց, այս հողը մեզ շնորհած ու Միածնի Էջքով այն սրբացրած Աստծոյ առջեւ: «Եւ մի՛ լիցի մեզ» տկարանալ ու ընկրկել մեզ վիճակուած

հրամայականների ուղղի, թերանալ առ Հայրենին մեր պարտքի ու պատասխանատուութեան, առ Աստուած մեր սուրբ ուխտի մէջ: Թող մեր եռանդը կորովի փոխուի, ու մեր սէրը՝ անձնազոհութեան, թող հոգու, մտքի ու ձեռաց մեր հաւատաւոր ու հայրենաշէն գործերը լայնահուն բացեն հայութեան կեանքի նոր հազարամեակի ուղին եւ անցաւոր ժամանակի մեր այսօրը կապեն յաւերժին:

Փա՛ռք քեզ, հայրենաբնակ իմ ժողովուրդ, որ հակառակ կրածդ փորձութիւնների եւ ներկայ կեանքիդ բազում դժուարութիւնների, ձեռնամուխ ես հայրենաշինութեան սուրբ ու նուիրական գործին: Փա՛ռք քեզ, սփիւռքի իմ ժողովուրդ, որ հաստատուն ու ամուր կամքով սպառար ու գօրավիգ ես Մայր Հայրենիքի վերակառուցմանը, եկեղեցաշինութեանը, քաղաքների բարեկարգմանը, բանակի զօրացմանը, կրթութիւնն ու գիտութեան առաջընթացին՝ արդար քրտինքդ շաղախելով Հայաստանի ու Արցախի հարազատ քոյրերի ու եղբայրների մաքառումներին ու ազնիւ աշխատանքին: «Եկայք շինեսցուք սուրբ զիտարանն լուսոյ»՝ հայոց նոր ուխտի, ամենայն հայոց գալիքի:

Բեթղեհէմեան Աստղն է պայծառ շողում երկնքում եւ առաջնորդում մեր ճանապարհը դէպի ծնունդեան այրը Մանուկ Յիսուսի: Թող մեր սրտերը այսօր փրոփեն հայոց Բեթղեհէմ Սուրբ Էջմիածնի աւետարեր զանգերի կանչող ղօղանջով եւ առ Աստուած ձայնեն մեր հոգում հնչած բիւր աղօթքների երկնահաս խօսքով: Թող մեր մտքերը թափանցեն խորքը ժամանակների՝ իր մեծութեան մէջ ամբողջապատկեր տեսնելու համար յաւերժահայեաց սուրբ Մասեաց դիմաց հրաշակերտուած խորին խորհուրդը Հայոց Մեծ Դարձի՝ նորոգ հաւատով եւ նորոգ կեանքով այն փոխանցելու նոր սերունդներին: «Այսօր է, զոր արար Տէր, եկայք ցնծասցուք եւ ուրախ եղիցուք» (Սղմ. ՃԺԷ 24), «քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
Մեզ, Հեզ մեծ Աւետիս:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 6-ն Յունուարի
ի Տօնի Սուրբ Ծննդեան
Յամի Տեառն 2001 եւ ի թուին Հայոց ՌՆԾ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 34

ՆՈՐ ՏԱՐՎԱ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ, ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐ, ԲԱՑԻԿՆԵՐ ՈՒ ՀԵՌԱԳՐԵՐ

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ
Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍ Բ ՊԱՊ (Հռոմ)

Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք
Նորին Սրբություն
ԲԱՐԴՈՂԻՄԵՈՍ (Սպամբուլ)

Մոսկվայի և Համայն Ռուսիոց Պատրիարք
Նորին Սրբություն
ԱԼԵՔՍԻ Բ (Մոսկվա)

Անտիոքի և Համայն Արևելքի Ուղղափառ Եկեղեցու
Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ՋԱՔՔԱ Ա ԻՎԱՍ (Դամասկոս)

Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս
Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ (Թբիլիսի)

Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք
Նորին Սրբություն
ԹԵՈԿՏԻՍՏ (Բուխարեստ)

Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու
Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱՋԻՄ Դ (Դամասկոս)

Սերբիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԱՎԼԵ (Բելգրադ)

Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍ (Նիկոզիա)

Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Պապ և Պատրիարք
Նորին Սրբություն
ՊԵՏՐՈՍ Է (Եգիպտոս)

Շվեյցարիայի Եկեղեցիների Միջօգնության Մարմնի
(EPER) քարտուղար
ՌՈՒԴՈԼՖ ՌԵՆՖԵՐ

*
* *

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻՑ

Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, Նորին Սուրբ Օծություն
ԱՐԱՄ Ա (Անթիլիաս)

Պատրիարք Հայոց Երուսաղեմի, Նորին Ամենապատվություն
ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Երուսաղեմ)

Պատրիարք Հայոց Կ. Պոլսի, Նորին Ամենապատվություն
ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Ստամբուլ)

Թեմական առաջնորդներից և Թեմական խորհուրդներից ու համայնքներից

Բացի հոգևոր պետերից, բազմաթիվ նամակներ և հեռագրեր են ստացվել նաև քույր Եկեղեցիների հոգևոր հայրերից՝ կարդինալներից, միտրոպոլիտներից և առաջնորդներից, էկումենիկ կազմակերպությունների ներկայացուցիչներից:

*
* *

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻՑ

Հայաստանի Հանրապետության նախագահ, վսեմաշուք
ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի
նախագահ, մեծահարգ
ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետ
մեծահարգ
ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Սահմանադրական դատարանի նախագահ
մեծահարգ
ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
նախագահ, վսեմաշուք
ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
վարչապետ, մեծահարգ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Շնորհավորականներ են ստացվել նաև Հայաստանի Հանրապետության նախարարներից, մարզպետներից, քաղաքապետերից, ակադեմիական, համալսարանական հաստատություններից, իրավագետներից և քաղաքական գործիչներից, Հայաստանում գործող քաղաքական կուսակցություններից և հասարակական կազմակերպություններից, Միջազգային Կարմիր Խաչի կենտրոնից, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների հայաստանյան գրասենյակներից, «ՀԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Հիմնադրամից, ՀԲԸՄ-ից, Հայկական Համագումարից, ՀՕՄ-ից, Կյուլպենկյան հաստատությունից, Կարագյոզյան հիմնարկությունից, սփյուռքահայ մի շարք այլ կառույցներից և հաստատություններից, PRO ORIENTE կազմակերպությունից (Ավստրիա), Ավստրալիայի Ազգային Եկեղեցիների խորհրդից, Իրանի Ազգային Մշակութային Միությունից:

Շնորհավորականներ են ուղարկել Հայաստանում գործող դիվանագիտական հաստատությունների ներկայացուցիչներ, արտասահմանյան երկրներում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանները, Սփյուռքում գործող հասարակական և համայնքային կազմակերպությունները:

ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԱՌ ԱՍՏՎԱԾ

2001 թ. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, համայն հայության ու քրիստոնեական աշխարհի համար հոբելյանական տարեթիվ է՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տարեդարձը:

Նշանակալի այս տարեդարձի սկիզբը ազդարարվեց դեկտեմբերի 31-ի տարեմուտի գիշերը՝ Հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ս. Գրիգոր Լուսավորչի Լուսավոր Կանթեղի լույսից տարածված սրբազան մոմավառությամբ:

Դեկտեմբերի 31-ի երեկոյան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետական Աթոռների ներկայացուցիչների, արքեպիսկոպոսների ու եպիսկոպոսների հանդիսավոր թափորի ուղեկցությամբ մեկնեց Խոր Վիրապ՝ Ս. Գրիգոր Լուսավորչի չարչարանաց գուբից հանելու հայ ժողովրդի դարավոր հավատքի և գոյատևության խորհրդանիշը՝ Լուսավորչի Լույս Կանթեղը:

Հայերի պաշտելի սրբավայրը՝ Խոր Վիրապը, լեցուն էր հավատացյալներով: Մարդիկ խումբերում բազմությամբ եկել էին սրբազան ուխտավայր՝ դիմավորելու Հայոց 132-րդ Կաթողիկոսին՝ Գարեգին Երկրորդին, ու նրան ուղեկցող հոգևորականաց թափորը, վառելու իրենց հավատքի մոմը Սրբալույս Կանթեղի Լույսով:

Թեմական առաջնորդների, բարձրաստիճան հոգևորականների և հավատավոր իր հոտի ուղեկցությամբ Նորին Սրբությունն առաջնորդվեց դեպի չարչարանքների վիրապ, ուր 13 օր շարունակ չդադարող աղոթասացության ու սաղմոսերգության ներքո նվիրականացել էր Լուսավորչի խորհրդանշական Կանթեղը: Համատեղ աղոթքից հետո Վեհափառ Հայրապետը «Մուտն ի վիրապ» շարականի երգեցողության ուղեկցությամբ և Լուսավորչի մուտն ի Վիրապի խորհրդի յուրատեսակ վերապրումով իջավ չարչարանաց վիհ:

Կանթեղից վերցնելով օրհնյալ լույսը, Վեհափառ Հայրապետը փառք ու գոհություն առաքեց Բարձրյալին՝ հայցելով, որ ամենակարող Աստված իր բարեխնամ աջի ներքո աներեր պահի քրիստոնեական հավատի լույսը Հայոց աշխարհում, անխոով պահի ժողովուրդը, Եկեղեցին և պետությունը Հայոց:

Սրբալույս Կանթեղը ներկաները դիմավորեցին փառաբանությամբ, «Ելն ի վիրապէն» շարականի ու «Հրաշափառի» երգեցողությամբ: «Հավատքի շքեղ հրավառություն».- այսպես նկատեց բազմաթիվ հավատացյալների ներկայությունը Վեհափառ Հայրապետը՝ հորդորելով ներկաներին միշտ վառ պահել հոգու լույսը, որ հավատքն է առ Աստված: Շնորհավորանքի և ողջույնի խոսքեր ասացին նաև Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ներկայացուցիչ Տ. Սեպուհ եպս. Սարգսյանը և Ե-

ռուսաղեմի հայոց պատրիարքության միաբան Տ. Մնան եպս. Ղարիբյանը: Այնուհետև երկնային լույսը բաշխվեց հավատավոր ժողովրդին:

Խոր Վիրապից հոգևորականները, Նորին Սրբության հանդիսապետությամբ, առաջնորդվեցին դեպի Մայր Աթոռ՝ իրենց հետ տանելով Հայոց հավատքի Հոր Սրբավառ Կանթեղը: Ճանապարհին թափորը մի քանի կանգառներ կատարեց՝ գյուղերի բնակիչներին ողջունելու և Կանթեղից ճառագող օրհնությունն ու լույսը բաշխելու համար: Հայոց Հայրապետը և բարձրաստիճան հոգևորականներն իրենց պատգամներն ու մաղթանքները հղեցին հավատացյալներին: Հազարավոր մարդիկ այդ օրը Լուսավորչի Կանթեղից վառեցին իրենց մոմերը և խորհրդանշական լույսը տարան տուն՝ փառաբանելով երկնային Տիրոջը և նրա հավատարիմ վկա Ս. Գրիգոր Լուսավորչին:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Տրդատա կամարի մոտ, Վեհափառ Հայրապետին դիմավորեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Ըստ ավանդության, դարեր առաջ այդ նույն տեղում են հանդիպել Գրիգոր Լուսավորիչը և Հայոց Տրդատ Երրորդ արքա՝ի նշան համերաշխության և քրիստոնեական հավատի որդեգրման:

Հայոց հոգևոր և աշխարհիկ պետերը Լուսավորչի Կանթեղի առաջնորդությամբ ու հանդիսավոր թափորի ուղեկցությամբ մուտք գործեցին Մայր Տաճար և կանգնեցին Իջման Սուրբ Սեղանի առջև: Այստեղ է Գրիգոր Լուսավորչի տեսիլքով երևացել Միածիները ու ցույց տվել այն վայրը, ուր պիտի կառուցվեր հայոց սուրբ հավատքի վեմը:

1700 տարի հետո այդ նույն վայրում, Իջման Սուրբ Սեղանի առջև, երկրպագության ու փառաբանության էին հավաքված Հայոց Եկեղեցու և պետության բարձրաստիճան այրեր: Աշխարհի բոլոր ծայրերից Մայր Աթոռ էին ժամանել նվիրապետական Աթոռների ներկայացուցիչներ, թեմական առաջնորդներ, եպիսկոպոսներ: Ներկա էին նաև ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը, վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, նախարարներ, պատգամավորներ:

Վեհափառ Հայրապետը և Հանրապետության նախագահը տարեմուտի իրենց շնորհավորանքն ու մաղթանքը հաղորդեցին ներկաներին ու համայն հայությանը:

«Ամանորի խորախորհուրդ այս գիշեր մեր հայացքները ուղղված են երկինք, քանզի հավատում ենք, որ քրիստոնեական մեր կյանքի մեծ հոբելյանը Աստծո կոչն է մեր ժողովրդին՝ վերստին դառնալու դեպի Փրկիչը մեր՝ Հիսուս Քրիստոս, և իբրև փոքր ժողովուրդ՝ մեծ լինելու Աստծո առջև, ինչպես 1700 տարիներ առաջ»,- ասաց Հայոց Հայրապետը՝ նշելով, որ նոր դարն ու հազարամյակը հայ ժողովուրդը դիմավորում է ազատ Հայաստանի ու Արցախի 10-ամյա գոյության հպարտությամբ, շրկած եղեռնահար մեջքը, թոթափած խորհրդային բռնությունն ու անաստվածությունը, բայց նաև ծանրացած աղքատության, գործազրկության, դեռ շարունակվող արտագաղթի ու այլ դժվարությունների խնդիրներով:

Նորին Սրբության պատգամն էր հայ ժողովրդին՝ ուխտի կանգնել հայոց քրիստոնեական ժառանգությունը կերտած հայոց 131 Հայրապետների ու առաքելական նախնյաց հիշատակի առջև և հավատով վերածնված, սիրով ու միաբանությամբ շարունակել հայրենաշինության սրբազան առաքելությունը:

Կեսգիշերին Մայրավանքի տոնական դողանջները ավետեցին Քրիստոսի Ծննդյան 2001 թվականը: Հանդիսավոր այդ պահին Վեհափառ Հայրապետի ձեռամբ Լուսավորչի Կանթեղի լույսով նորոգվեց Իջման Սուրբ սեղանի անշեջ Կանթեղը, ապա լույսը փոխանցվեց Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանին: Հայոց Եկեղեցին և պետությունն ազդարարեցին հոբելյանական 1700-ամյակի սկիզբը:

Ապա Վեհափառ Հայրապետը եղբայրական սիրո ողջույններ հղելով Կիլիկիո Աթոռի գահակալ Արամ Ա-ին ու Երուսաղեմի Պատրիարք, Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանին, Կ. Պոլսի Պատրիարք, Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանին, Սրբազան լույսը փոխանցեց նվիրապետական Աթոռների ներկայացուցիչներ Մեսրուռ և Սեան Արբազաններին, այնուհետև՝ թեմական բոլոր առաջնորդներին, որպեսզի նրանց միջոցով Լուսավորչի օրհնությունը տարածվի աշխարհասփյուռ թեմերում ու հայ օջախներում որպես հոգևոր վերարթնության, վերազարթոնքի ու լուսավոր ապագայի խորհրդանիշ:

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Հայրապետն ու ՀՀ նախագահը Մայր Աթոռ Ս. Էջմիածնից ուղևորվեցին Երևան՝ Լուսավորչի Կանթեղի լույսով լուսավորելու Հանրապետության հրապարակում տեղադրված պետությունը խորհրդանշող կերոնը և մասնակից դառնալու Ամանորին ու 1700-ամյակին նվիրված մեծ տոնակատարությանը:

«Լուսավորչի կանթեղը՝ ուղեցույց առ Աստված» նշանաբանով սկսված հանդիսությունը սկիզբն էր Հայոց հոգևոր մեծ դարձին նվիրված տոնակատարությունների, որոնք շարունակվելու են 2001 թ. ողջ տարվա ընթացքում:

Լուսանկարչուհի Լիլիթ Սարգսյանը

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 4 հունվարի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց Եվրախորհրդի նախարարների կոմիտեի պատվիրակությանը՝ կոմիտեի նախագահ, Լատվիայի ԱԳ նախարար Ինդուլիզ Բերզինշի գլխավորությամբ:

Ողջունելով հյուրերին, Նորին Սրբությունը մատնեց, որ նոր հազարամյակը լինի խաղաղության և ազգերի ու պետությունների միջև համագործակցության գեղեցիկ մի ժամանակաշրջան: Վեհափառ Հայրապետը ուրախությամբ նշեց, որ նոր դարաշրջանը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի համար նշանավորվում է Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունման 1700-ամյա հոբելյանական տարեդարձով:

Հանդիպման ընթացքում խոսվեց Եվրախորհրդին Հայաստանի անդամակցության հարցի մասին, որի քննարկումը Եվրախորհրդում տեղի է ունենալու հունվար ամսին: «*Հավատում ենք, որ Հայաստանի ընդգրկումը Եվրախորհրդին պիտի նպաստի երկրում ժողովրդավարական սկզբունքների զարգացմանը*»,- ասաց Նորին Սրբությունը՝ նշելով, որ եղբայրական համագործակցության պայմաններում Հայաստանը հաստատաքայլ կընթանա առաջընթացի ուղիով: Նորին Սրբությունը նշեց, որ հարցի դրական լուծումը իր նպաստը կբերի նաև տարածաշրջանում կայունության ապահովմանը:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաև Հայ Եկեղեցու ներկա կացությանը, 1700-ամյա հոբելյանական միջոցառումներին:

[illegible]

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ՉԿԱ՛ ՄԵՋ ՄԱՀ, ՔԱՆԻ ԴԵՌ ՄԵՐ ԳՈՐԾԵՐՈՒՄ ԱՊՐՈՒՄ Է ՄԵՐ ՀԱՎԱՏԸ»

Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 8 հունվարի 2001 թ.:

Հունվարի 6-ին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին տոնեց Ս. Ծննդյան և Աստվածահայտնության հրաշափառ տոնը: Դեռ նախորդ օրը, հունվարի 5-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում բազմահազար հավատացյալներ Ճրագալույցի արարողությամբ հաղորդակից դարձան Ս. Ծննդյան ավետիսին: Մատուցվեց Ս. Պատարագ: Վերականգնումից հետո անկրկնելի շքեղությամբ էին երևում Մայրավանքի որմնանկարները, լույսերով էր ողողված նաև Մայր Տաճարի շրջափակը:

Հունվարի 6-ին Մայր Տաճարում մատուցվեց Հայրապետական Ս. Պատարագ:

Պատարագի ընթացքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Ս. Ծննդյան իր պատգամն ուղղելով համայն հայ ժողովրդին, ընթերցեց Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյա մեծ հոբելյանին նվիրված Հայրապետական սրբատառ կոնդակը, որ նույն օրը հնչեց նաև Հայաստանյայց Առաքելական մյուս բոլոր եկեղեցիներում:

«Կանգնած Հայաստանի ազատ հողին, հայոց խաղաղ երկնքի ներքո՝ որպես շնորհընկալ Հայրապետ Ամենայն Հայոց, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Լույս Խորանից բերկրանոք սրտի Սուրբ Ծննդյան բարի Ավետիսն ենք բերում ձեզ և զվարճացյալ մեծավ ուրախությամբ ծանուցում Հայոց Մեծ Դարձի՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյան:

301 թվականին Ս. Լուսավորչի անմեղ հայացքով մեր ժողովուրդը արժանացավ տեսնելու Հարուցյալ Փրկչի լուսեղեն էջքը հայրենի իր հողում: «Էջ Միածին ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա» փառաբանությամբ աշխարհը Հայոց առաջի Աստծո կանգնեց խոստովանության ու տեսառնագրեց երկիրը իր հին՝ աշխարհում առաջինը հռչակելով քրիստոնեությունը որպես պետական կրոն: Համայն ժողովրդով հավատացինք համակ Մեր, Միակ Ճշմարիտ Աստծուն, Ս. Ծննդյանն ու Մարդեղության փրկչական առաքելությանը Նրա»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ նշելով, որ փորձություններով լի պատմության դարավոր ընթացքի մեջ հավատն է հային հաղորդել արարման ու ապրելու կամք, «հավատն է ոգեշնչել ու թև տվել մեր բոլոր հաղթանակներին»:

«Այո՛, սիրելիներ, չկա՛ մեզ մահ, քանի դեռ մեր գործերում ապրում է մեր հավատը, քանի դեռ հայոց պատմության ընթացքով հաղթականորեն անց-

նում է լուսեղեն թափորը Հայ Եկեղեցու՝ ճառագելով հավատք ու խմորելով հոգի, հավատարմորեն պահելով մեր ժողովրդի ընթացքը դեպի Աստված»,- շարունակեց Վեհափառ Հայրապետը՝ պատգամելով 1700-ամյակի միավորող ոգով ընդառաջ գնալ հոգևոր-ազգային կյանքի մարտահրավերներին ու խնդիրներին:

«Սրբագրենք մեր պատմությունը աղճատումներից ու շտկենք ժամանակների հարկադրանքները: Ամենայն Հայոց և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունների միջև տարաձայնությունների հարթումով ձեռնամուխ լինենք Հայ Եկեղեցու ներքին բարեկարգությանը. 2000-ամյա քրիստոնեական ժառանգությամբ գործուն մասնակցություն բերենք ազգերի, կրոնների ու Եկեղեցիների համերաշխությանը: Քայլենք նվիրական մեր իղձերի իրականացման վճռականությամբ՝ որպես մեկ Եկեղեցի, մեկ պետություն և ազգ», - ասաց Վեհափառ Հայրապետը:

Ամենայն Հայոց Հայրապետը Ս. Ծննդյան և 1700-ամյա հոբելյանի առիթով ողջույն հղեց Հայ Եկեղեցու նվիրապետության Աթոռների գահակալներին՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, Նորին Սրբություն Արամ Ա-ին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանին, Կ. Պոլսո Հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանին, Հայ Եկեղեցու ողջ հոգևոր դասին:

Վեհափառ Հայրապետն իր ողջույնը հղեց նաև Հայաստանի Հանրապետության և Արցախի նախագահներին, պետական այրերին և բարեպաշտ հավատացյալ հայ ժողովրդին՝ փառաբանելով հայրենաբնակ ժողովրդին, որ, հակառակ ամեն տեսակի դժվարությունների, լծված է հայրենաշինության տուրք գործին՝ փառաբանելով նաև սփյուռքահայությանը, որ սատար ու զորավիգ է Մայր Հայրենիքի վերակառուցմանն ու եկեղեցաշինությանը: Նորին Սրբությունը մեկ անգամ ևս հորդորեց աշխարհասփյուռ հայությանը արժանիորեն տոնակատարել 1700-ամյա պանծալի հոբելյանը:

Հավարտ Ս. Պատարագի Հայոց Հայրապետը, ավանդույթի համաձայն, կատարեց Ջրօրհնեքի արարողությունը, որ խորհրդանշում է Քրիստոսի Մկրտության:

Ս. Պատարագին և Ջրօրհնեքի արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանը, Հայաստանի Հանրապետության վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Ազգային Ժողովի պատգամավորներ, կառավարության անդամներ, նախարարներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, Հայաստանում միջազգային, բարեսիրական կազմակերպությունների ներկայացուցիչներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, հյուրեր:

Սրբազան Պատարագի արարողությունից հետո Վեհարանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն և հյուրասիրություն, որի ընթացքում Վեհափառ Հայրապետին Ս. Ծննդյան շնորհավորանքներ հայտնեցին երավիրյալները:

Ս. Պատարագի և Ջրօրհնեքի ողջ արարողությունը ուղիղ եթերով հեռարձակվեց Հայաստանի Հանրապետության Ազգային հեռուստատեսությամբ:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԲՈՒՆԴԵՍԹԱԳԻ ԱՆԳԱՄ ՖՈԼՔԵՐ ՌՅՈՒՀԵԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 10 հունվարի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի ՔԴՄ/ՔՍՄ խմբակցության փոխնախագահ Ֆոլքեր Ռյուհեին՝ Հայաստանում Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Ֆոլքեր Զայթցի ընկերակցությամբ:

Ողջունելով հյուրերի այցը 1700-ամյա հայոց հոգևոր կենտրոն՝ Վեհափառ Հայրապետը նշեց, որ այս տարին հոբելյանական է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու համար՝ առանձնահատուկ ուրախությամբ նշելով նաև, որ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու մեծ տարեդարձը տոնվում է հայրենի երկրի անկախության պայմաններում: Միաժամանակ Վեհափառ Հայրապետը անդրադարձավ հայրենական կյանքում առկա դժվարություններին ու խնդիրներին՝ նշելով, որ ամեն տեսակի դժվարություն հայ ժողովուրդը հաղթահարում է վճռականությամբ, հավատքով ու բարեկամ ժողովուրդների աջակցությամբ:

Ի պատասխան հյուրերին հետաքրքրող հարցերի, հայոց Հայրապետն անդրադարձավ Հայաստանի անկախացումից հետո հոգևոր-կրոնական կյանքին, Հայ Եկեղեցու ներկա կացությանը: Այս առիթով Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նշեց, որ խորհրդային անաստվածության տարիներից հետո համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորմամբ Հայ Եկեղեցին վերագտնում է սեփական տեղն ու դերը իր ժողովրդի կյանքում:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՆԱՏՕ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՋՈՐՋ ՌՈԲԵՐՏՍՈՆԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 16 հունվարի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ջորջ Ռոբերտսոնին:

Վեհափառ Հայրապետը ողջունեց ՆԱՏՕ-ի խաղաղասիրական ջանքերը՝ գոհունակությամբ նշելով, որ այդ գործընթացի մեջ ներգրավված Հայաստանը փարեցփարի ընդլայնում է իր գործունեությունն այդ ոլորտում: Վեհափառ Հայրապետը նշեց, որ հայ ժողովուրդը մեծ ջատագովն է խաղաղության և, իր դարավոր պատմության ընթացքում հաճախ զրկված լինելով Աստծո այդ մեծ պարգևից, գիտե գնահատել նաև նրա արժեքը, որի հարատևության գրավականն են նաև արդարությունն ու ճշմարտությունը:

Նորին Սրբությունը նշեց նաև, որ խաղաղությունը, որպես քրիստոնեական վարդապետության առանցքային մաս, հիմնական տեղ է զբաղեցնում նաև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու քարոզչության մեջ: Դրն Ռոբերտսոնը, ներկայացնելով իր այցի նպատակը կովկասյան երկրներ, կարևորեց Հայաստանի դերակատարությունը տարածաշրջանի խաղաղության ամրապնդման գործում: ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը բարձր գնահատեց Հայաստանի ներդրումը համաշխարհային քաղաքակրթության ասպարեզում կարևորագույն իրադարձություն համարելով նաև Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյա հոբելյանը:

Ինչպես նշեց ՆԱՏՕ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության ղեկավար, Բելգիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վիգեն Չիտեչյանը, 1700-ամյակի տոնակատարություններին անմասն չի մնա նաև ՆԱՏՕ-ն, որի շենքում կկազմակերպվի ցուցահանդես՝ նվիրված Հայ Եկեղեցու մեծ տարեդարձին:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԵՎ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ. 17 հունվարի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական բարձր տնօրինությամբ Գերաշնորհ Տ. Փառեն եպս. Ավետիքյանը նշանակվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարչակազմակերպական գործերի կառավարիչ՝ պահպանելով Մայր Աթոռի թանգարանների վարիչ-տնօրենի իր պաշտոնը:

Նորին Սրբության մեկ այլ տնօրինությամբ Հոգեշնորհ Տ. Արշակ աբեղա Խաչատրյանը նշանակվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ:

* * *

Հայրապետական տնօրինությամբ Հոգեշնորհ Տ. Գուրգեն վրդ. Աղաբաբյանն ազատվել է Վիրահայոց թեմի Սամցխե-Ջավախքի առաջնորդական տեղապահի պաշտոնից՝ Գերմանիա ուսման մեկնելու կապակցությամբ:

Սամցխե-Ջավախքի առաջնորդական տեղապահ է նշանակվել Հոգեշնորհ Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանը:

ՌԱՎԵՆՆԱՅԻ ԴԱՆԹԵԻ ԿԵՆՏՐՈՆԸ ԿՏՈՆԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ ՀՌՉԱԿՄԱՆ 1700-ԱՄՅԱ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 19 հունվարի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռավեննայի Ս. Ֆրանցիսկո եկեղեցու աբբահայր, Դանթեի կենտրոնի տնօրեն հայր Էնցո Ֆանտինիին:

Ի նշանավորումն Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյա մեծ տարեդարձի, Դանթեի մշակութային կենտրոնը նախատեսել է մի շարք միջոցառումներ: Մասնավորապես, բիենալեներով հայտնի կենտրոնը այս տարի կազմակերպելու է հայ արվեստագետների ստեղծագործությունների ցուցահանդես՝ նվիրված 1700-ամյա հոբելյանին: Մեծ հոբելյանին, ինչպես նաև Ռավեննայի Ս. Պոլիեարե եկեղեցու հիմնադրմանն է նվիրված հուլիսի 22-ին Լա Մակալայի նվագախմբի համերգը Ռիկարդո Մուտտի ղեկավարությամբ:

Այս առիթով աբբահայրը Վեհափառ Հայրապետին հաճենեց Ռավեննայի եպիսկոպոսի հրավերը՝ հանդիսապետելու օրվա ծիսակատարությանը:

Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց հրավերի համար և իր օրհնությունը տվեց կենտրոնի ձեռնարկներին՝ նշելով, որ դրանք գեղեցիկ առիթ են՝ զորացնելու Հայ և Կաթոլիկ քույր Եկեղեցիների կապերը:

«Ուրախ ենք, որ Կաթոլիկ Եկեղեցին մեծ ներկայություն և մասնակցություն պիտի ունենա Հայոց Մեծ Դարձի տոնակատարություններին»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ 1700-ամյակի հոբելյանին կարևոր ներդրում համարելով նաև անցած տարի Վատիկան կատարած այցի առիթով Հովհաննես Պողոս Բ Պապի կողմից Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքի հանձնումը Նորին Սրբությանը:



ԱՄԱՆՈՐԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ամանոր է: Դարձյալ մի անգամ ևս մեր ազգը համայն մարդկության հետ դեմ հանդիման կանգնած է հին և նոր հազարամյակների հանդիպման սահմանագծին: Կարծես մի աներևույթ ձեռք մեզ է փոխանցում անցած տարիների ձեռքբերումները, որպեսզի մենք անխոնջ կերպով էլ ավելի հարստացնենք, գեղեցկացնենք և իմաստավորենք դրանք: Չէ որ լեցուն անցյալը մեծ մղիչ ուժ է ներկայի համար, ամուր հենք՝ սպասված լուսավոր ապագայի համար:

Ժամանակների փոփոխման այս նշանակետը առավել հատկանշական է քրիստոնյա հայ ազգի համար, որն իր հավատով լեցուն անցյալի հաստատուն հիմքի վրա նոր տարում, նոր դարում, նոր հազարամյակում գալիս է կառուցելու մի շենք, որի սրբատաշ քարերից յուրաքանչյուրը լինելու է մեր ազգի հոգևոր, մշակութային և գիտական ասպարեզների ձեռքբերումներից: Սրանք ձեռքբերումներ են եղել, որոնք ոչ միայն հաստատել են մեր, իբրև ազգի, երկրագնդի վրա գոյատևելու իրավունքը, այլև մեծ ազդեցության են թողել համամարդկային պատմության գրքի էջերում: Այս ամենը մեզ իրավունք է տալիս հպարտորեն հայտարարելու Քրիստոսի հավատքը 1700 տարիներ առաջ մեր ազգային դավանանքը դարձնող իրադարձությունների տոնախմբությունների մասին: Իրապես, 301 թվականից քրիստոնեական կրոնը նոր շունչ ու որակ է հաղորդել մեր ազգային նկարագրին, և մենք, իբրև ժառանգորդները և շարունակողները այդ պերճաշուք պատմության, մեր անբողջ եռանդն ու կարողությունները պետք է ի նպաստ դնենք այդ նկարագրի անեղծ, անաղարտ պահպանմանը: Այս գաղափարները մեր սրտերում ամրագրած՝ աննկարագրելի հպարտություն ապրեցինք դեռևս մի քանի օրեր առաջ, երբ Հայոց Եկեղեցու բարձրաստիճան հեղեղցականաց դասը, ի գլուխ ունենալով Ամենայն Հայոց Հայրապետին, խոր Վիրապից Ս. Էջմիածին բերեց Ս. Գրիգոր Լուսավորչի քարոզած Քրիստոսի լույս հավատքը խորհրդանշող կանթեղը, որի լույսով օրհնվեց ողջ հայ ազգը Հայաստանում և սփյուռքում: Այդ լույսն առավելաբար ջերմացրեց մեր հոգիները, որի բարերար ներգործությամբ էլ պատրաստվում ենք հազարամյա մեր Եկեղեցու սպասավորները դառնալու:

Պատմությունն է անցյալի գործերի դարավոր դատավորը, իսկ մեզ վստահված «տնտեսության» մեջ համեստ գործերի հաշվետվությունը կատարում ենք այնպիսի հավաքույթներում, որոնցից մեկն էր 2001 թ. Տարեմուտի ավանդական հանդիսությունը Մայրավանքի միաբանական սեղանատանը՝ Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ:

Հանդիսությունը բացվեց «Տերունական աղոթք»-ով: ՀՀ-ի Օրհներգը և Հոգևոր Ճեմարանի քայլերգը կատարեցին ճեմարանի սաներ՝ Ռ. Ծարբաթյանի ղեկավարությամբ: Այնուհետև հանդես եկավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ, Արժանապատիվ Տ. Եղիշե ավ. քհն. Սարգսյանը, որն էլ վարեց ողջ երեկոն: Իր խոսքում նա ասաց.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ, Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր, շնորհնունակ սարկավագ եղբայրներ, դասախոսներ, հյուրեր և շատ սիրելի ուսանողներ.

Մի քանի օր առաջ աշխարհի տարբեր հորիզոնականներում շատ ժողովուրդներ, որոնց համար ընդունելի է օրացույցում նշված Նոր տարվա մեր տարբերակը, ուտեստեղենի տեսակներով ծանրաբեռնված սեղանների շուրջ խմբված, իրար շնորհավորելով և կենացներ խմելով, ճանապարհեցին հին՝ 2000-ը և դիմավորեցին նոր՝ 2001 թվականը:

Իմ կարծիքով նոր տարին հավիտենականությունից պայմանականորեն առանձնացրած մի ակնթարթ է, որ տրված է անհատներին, հասարակությանը՝ մի պահ կանգ առնելու, սթափվելու և անցյալ տարվա արածների և չարածների հաշվետվության մատյանը տիեզերքի Արարչի և սեփական խղճի առջև բանալու, որովհետև Աստված մարդուն ստեղծելով՝ տվեց նաև գործելու համար և՛ ժամանակ, և՛ հնարավորություն:

Հովհաննես Ավետարանիչը այս առթիվ ասում է. «Ինձ պարտ է գործել... մինչեւ աւուր կա գիշեր, յորժամ ոչ ոք կարէ գործել»: Ուրեմն մեզանից ամեն մեկս պարտավոր է հետևել Աստուծո պատգամին, աշխատելու, քանի դեռ մեզ համար ցերեկ է, կգա գիշերը և այլևս մենք հնարավորություն չենք ունենա ավարտելու մեզ վստահված գործը:

Այս տարվա նոր տարին ժողովուրդների համար բացառիկ է, քանի որ ճանապարհեցին հին տարին, հարյուրամյակը և հազարամյակը: Հայ ժողովրդի և մեր առաքելահաստատ Ս. Եկեղեցու համար կրկնակի բացառիկ է, որովհետև 3-րդ հազարամյակի առաջին տարին մեզ համար հոբելյանական է: 1700 տարի առաջ մեր Եկեղեցին ճանաչվեց որպես պետական ճանաչում ունեցող առաջին Եկեղեցին քրիստոնյա աշխարհում:

Սրբությանդ սրբատառ Կոնդակով ողջ 2001 թվականը հայտարարված է հոբելյանական, և մի ամբողջ տարի մեր ժողովուրդը և Եկեղեցին պիտի ապրեն տոնակատարությունների բերկրանքը հայրենիքում և ողջ սփյուռքի տարածքում, որն էլ կլինի մի նոր խթան հայրենիքի և մեր Ս. Եկեղեցու շուրջ համախմբվելու լավագույն առիթ:

Զերդ Վեհափառություն. 3-րդ հազարամյակի Նոր տարվա և Ս. Ծննդյան այս երեկոյան միաբանական պատմական այս կամարների ներքո, շրջապատված Մայր Աթոռի հոգևոր և աշխարհիկ պաշտոնյաներով, այս առթիվ պատիվ ունեմ ասելու, որ, Զերդ Սրբություն, Դուք մեր երջանիկ այն Հայրապետն եք, որ Հայոց Առաքելական Ս. Եկեղեցին, անկախ պետականության պայմաններում, առաջնորդում եք 3-րդ հազարամյակ՝ ի շինություն և ի պայծառություն մեր հազարամյա Ս. Եկեղեցու և ի վայելումն մեր հավատավոր ժողովրդի:

Ասում են, թե հազարամյակի խաչմերուկում ապրող սերունդը անեծք ունի իր վրա: Ես չգիտեմ, իրապես այդպես է, թե ոչ, բայց մի բան հաստատ է, որ հայ ժողովուրդը 20-րդ դարը, վերջին հարյուրամյակը, սկսեց ազգային մեծ ողբերգությամբ, եղեռնով:

Շուրջ երկու միլիոն հայորդիներ յաթաղանի գոռ դարձան սեփական հայրենիքի մի մասի վրա: Այդ նահատակ սերնդի խլյակները կամ մնացորդացը քշվեց անապատ և օտարություն:

Դարավերջը մեր ժողովուրդը իրականացած տեսավ իր 600 տարվա երազը՝ ազատ, անկախ հայրենիքը: Ճիշտ է, անկախության գաղափարը երբեմն մեզանում վարկաբեկվում է, բայց պետք է արդար լինել ասելու, որ անկախության ճանապարհը միշտ էլ փշոտ է եղել: Թվում էր, թե հարյուրամյակների ընթացքում առաջին անգամ ռազմի դաշտում փայլուն հաղթանակ ապահովող սերունդը, որը դարձավ նաև կորցրած Հայրենիքի մի մասի միավորողը, այսօր գտնվում է բարոյական ու տնտեսական անելանելի կացության մեջ, որն էլ, դժբախտաբար, հասցրեց պատմության մեջ նմանը չունեցող հայրենիքից արտագաղթի:

Շատ սիրելի Վեհափառ Հայրապետ. թույլ տվեք հանդիսավոր այս երեկոյին խոնարհ աջահամբույրով, հանուն Առաքելական մեր Ս. Եկեղեցու, Մայր Աթոռի միաբանության և պաշտոնեության, ինարկե նաև Ձեր շատ սիրած Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ուսանողության, դասախոսական կազմի, ջերմագինս, ի սրտե շնորհավորել Ձերդ Սրբության նոր հազարամյակը սկզբնավորող տարին և Ս. Ծնունդը մեր Փրկչի՝ ցանկանալով քաջառողջություն և գալիք 3-րդ հազարամյակի տասնամյակներում նորանոր հաջողություններ՝ ի շինություն մեր Ս. Եկեղեցու և ի վայելումն մեր հավատացյալ ժողովրդի:

Նոր հազարամյակի սկզբնավորումով, երբ արդեն տեսանելի են նոր հորիզոնները, թող Աստված իր սքանչելի հովանին պահի սրտաչափ մեր սքանչելի հայրենիքի և Ս. Եկեղեցու, մեր ժողովրդի վրա: Եթե վերջին տասնամյակում աշխարհի տարբեր հորիզոններ արտագաղթեցին այս փոքրիկ հողակտորից մի քանի հարյուր հազար հայորդիներ, նոր հազարամյակի սկիզբը և մեր Ս. Եկեղեցու պետականորեն ճանաչման 1700-ամյակի տոնակատարությունները թող ազդարարեն տունդարձի ժամանակաշրջանը, որը պիտի նպաստի մեր երկրի հարստացմանը և ամրապնդմանը:

Եվս մեկ անգամ խոնարհ աջահամբույրով թույլ տվեք շնորհավորել Սրբության Նոր տարին և Ս. Ծնունդը»:

Տեսչի խոսքին հաջորդեց օրը խորհրդանշող շարականը՝ «Ծագումն երաշալի», որից հետո միաբանության անունից ներկաներին խոսք ուղղեց Գերաշնորհ Տ. Շահե արքեպս. Աճեմյանը: Սրբազանի խոսքից հետո ուսանողների կատարմամբ հնչեց «Կենաց երգ»-ը: Այնուհետև դասախոսության անունից ելույթ ունեցավ պրն Դավիթ Գյուրջինյանը: Նա Նորին Սրբությանը շնորհավորելով իր և իր դասախոս ընկերների անունից՝ խոստացավ Վեհափառ Հայրապետին, որ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը ամեն կարելին կանի՝ բարձրացնելու 3-րդ հազարամյակ մտնող մեր Սուրբ Եկեղեցու ապագա պաշտոնյաների մտավոր և բարոյական նկարագիրը, որպեսզի կարողանան որպես կատարյալ հոգևորական հավատարմությամբ նվիրվել և ծառայել մեր ժողովրդին:

Ուսանողական պարտականությունների հաշվետվությամբ Վեհափառի և բոլոր ներկաների առջև խոսք ասաց Ջ լսարանի սան Արթուր սրկ. Կարապետյանը.

«Վեհափառ Տեր.

Գերաշնորհ Սրբազան Հայրեր, Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր, Քարեշնորհ սարկավագներ, ի Քրիստոս սիրելի ճեմարանական եղբայրներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի պատվարժան անդամներ, հարգելի ներկաներ.

Քիչ առաջ մեր Մայր Եկեղեցին «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ» ավետիսով համայն հայությանը տվեց մանուկ Հիսուսի Սուրբ Ծննդյան բարի լուրը: Ուստի և ամանորյա խնդությամբ լեցուն ու Ս. Ծննդյան խորհրդով օծուն այս երեկո անհնար է կրկին չվերապրել մեզանից 2000 տարի առաջ Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում կատարված մեծախորհուրդ իրադարձությունը:

20 դար առաջ երկիր մոլորակի երկնակամարում մի աստղ էր փայլատակել: Մի աստղ, որը նման չէր անթիվ-անհամար լուսատուներին, մի աստղ, որն իր լույսով մրցում էր նույնիսկ մեծ լուսատու Արեգակի հետ:

Աստղագետներն ու երկնքի խորհուրդները «բացահայտող» մոգերը շփոթվել էին տարօրինակ աստղի ծագումով. միայն արդար հոգիներն էին, որ ճանաչել էին երկնային, աստվածային նշանը. «Իբրեւ տեսին զաստղն, խնդացին յոյժ ուրախութիւն մեծ» (Մատթ. Բ 10):

Տեսանելի լույսով հեղեղված աշխարհը խարխափում էր անաստվածության, անօրենության, անբարոյականության, անարդարության խավարում: Սակայն միայն արդար հոգիներն էին, որ անհետևում հույսով սպասում էին... սպասում էին Արարիչ Աստծո օգնությանը. Երկնքից փրկություն էին ակնկալում: Եվ, արդարն, նրանք չէին սխալվում, և, իրավամբ, նրանց այդ երկարամյա սպասումն իզուր չէր:

Մի լուռ գիշեր, մի սուրբ գիշեր բացվեցին Երկնքի ողորմության դռները, և իմանալի լույսը հորդառատ գետի պես հեղվեց երկիր ու ողողեց աստվածարար երկրագունը: Ցնծում էր երկինքը, ուրախանում էր երկիրը, որովհետև երկուսն էլ գիտեին, որ կատարվելու է անճառելի մի իրադարձություն: Առավելս բերկրում էր Բեթղեհեմ-

յան մսուրը, որտեղ էլ իրականացավ անմեկնելի աստվածային տնօրենությունը. «Նոր սքանչելիք եղեն այսօր ի Բեթղեհեմ ի յայրին. կուսի ծնանիլ Աստուած եւ մարդ» (Շարակնոց):

«ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵԾ ԵՒ ՍՔԱՆՉԵԼԻ». ԱՍՏՎԱԾ ՍԱՐԴԵՂԱՑԱՎ...

Այսդեն 2000 տարի է, ինչ ամեն անգամ Ս. Ծննդյան ավետիսը լսած յուրաքանչյուր հավատավոր քրիստոնյայի հոգին ԲԵԹՂԵՀԵՄԱՆՈՒՄ Է: Եվ ամեն ոք շտապում է իջնել իր հոգի-մսուրը՝ այնտեղ ողջունելու մանուկ Փրկչի Լույս Ծնունդը: Եվ ամեն ոք ջանում է գեթ մի քանի ակնթարթ կտրվել աշխարհի իմաստությունից՝ իր մսուրում ընդունելու աստվածային ու երկնային շնորհները, որոնք Սուրբ Ծնունդն ավետելու պահին լիաբար վայթում են անձն յուր հոգի-մսուրի մեջ: Ինչպես Աստվածորդու մարդեղացմամբ նորոգվեց մարդկային անկյալ բնությունը, այնպես էլ ամեն տարի մեր Տիրոջ Ս. Ծնունդը տոնախմբելով՝ նորոգվում են մեր քրիստոնեական հավատքը և մեր քրիստոնեական կյանքը: Ուստի և վերանորոգված մեր հոգիներում նորանոր ուժեր ենք գտնում՝ հանապազօրյա հոգևոր պատերազմում հաղթական պայքար մղելու համար:

Վեհափառ Տեր.

Աստծո անքննելի կամքով ամեն մարդ երկրավոր կյանքի ընթացքում իր կոչումն ու առաքելությունն է ունենում: Սակայն, ցավոք, շատ-շատերը չեն կարողանում իրենց կոչումը պարզել, ուստի և այս անցավոր կյանքում ձախողվում է նրանց առաքելությունը:

Փառք Ամենասուրբ Երրորդությանը, որ մենք՝ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաներս, «Ձեր փոքր ածուն», Վեհափառ Տեր, մեր «յերեւելի ու յաներեւոյթ» դաստիարակների շնորհիվ ի զորու ենք լինում ճեմարանական տարիներին ճշտելու մեր կոչումն այս կյանքում և անձանձիր աշխատանքով ինքներս մեզ պատրաստելու գալիք մեծ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ: Այո՝ մեծ, որովհետև հոգևորականի առաքելությունից զատ չկա՛ մեծագույն մեկ ուրիշը: Եվ սա ունայն մեծամտություն չէ և ոչ էլ մյուսների կոչման ու առաքելության թերագնահատություն: Պարզապես եթե այլք կոչված են սոսկ մարմնի ու մարմնավոր կյանքի բարօրությանը նպաստելուն, ապա հոգևորականի առաքելությունը՝ թե՛ մարմնի, և թե՛ առավելաբար հոգու կյանքի քրիստոնեացմանն է ուղղված. չէ՞ որ մեր Տերն Ինքը վկայեց. «Ո՞չ ապաքէն ոգի առաւել է քան զկերակուր» (Մատթ. Զ 25), ինչպես նաև՝ «Հոգին է կենդանարար, մարմին ինչ ոչ օգնէ» (Հովհ. Զ 64):

Ձերդ Սրբություն.

Ս. Ծննդյան լույսով օծուն այս պահին, որպես ճեմարանի ուսանողության խոսնակ, հոգու պարտք ենք համարում անսուտ վկայությամբ Ձեզ հավաստիացնել, որ մենք՝ բոլորս, ամեն ինչից վեր դասելով մեր Մայր Եկեղեցու շահն ու հեղինակությունը և ամեն օր մեր աչքերի առջև ունենալով մեր ժողովրդի հոգեխռով պատկերը՝ մեր մարդկային բնությանը հատուկ թուլությունների սահմաններում ջանում ենք

սիրով հնազանդվել մեր մեծավորներին, հույսով աղոթել առ Աստված և հավատքով աշխատել:

Միավասիկ այս հույզերով ու խոհերով, հանուն Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ուսանողության, մեր սրտաբուխ աղոթքն ենք առաքում առ Բարձրյալն Աստված, որ Տերն Իր ամենազոր Ս. Աջով ու ամենահաղթ Ս. Խաչով ցկտրարած աշխարհի անսասան պահի-պահպանի մեր հայրենի պետության ու Իր իսկ հիմնած Հայաստանյայց մեր Եկեղեցին, այլև քաջառողջություն ու երկար տարիների արգասաբեր հովվապետական առաջնորդություն պարգևի Ձերդ Սրբությանը և կատարյալ հաջողությամբ պսակի Ձեր եկեղեցաշեն, հայրենանվեր ու հոգեխեամ բոլոր ձեռնարկները՝ «ի փառս Ամենասուրբ Երրորդութեան եւ ի պայծառութիւն Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի»:

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ. օրհնեալ է Յայտնութիւնն Քրիստոսի». ամեն»:

Ապենաբանություններից հետո երգչախումբը կատարեց «Լուռ գիշեր» երգը, որին հաջորդեց ուսանողների սպասած Կաղանդչեքի և Վիճակահանության պահը:

Հավարտ «Էջ Միածին ի Հօրէ» երգի, միջոցառումը Հայրապետական օրհնությամբ եզրափակեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսը: Նա իր խոսքով կոչ արեց նոր հազարամյակում անվերապահորեն նվիրվել Մեր Սուրբ Եկեղեցուն, ժողովրդին ու մեր նորանկախ Հայրենիքին և ի մասնավորի ասաց.

«Ինձ համար ուրախության, բերկրանքի պահ է և ես հոգուս այդ ցնծուն զգացումները աղոթք դարձրած առ Աստված եմ բարձրացնում՝ գոհություն հայտնելով, որ արժանացրեց անձս այդ շնորհին՝ 2001 թվականը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեր հոգևորականաց դասի, մեր պաշտոնեության հետ դիմավորելու և առաջնորդելու մեր ժողովրդին դեպի 1700-ամյակի տոնակատարությունները, որ համազգային շուքով, միասնական ոգով պատրաստվում ենք նշել այս տարի: Նոր տարին մենք դիմավորեցինք՝ հայտարարելով սկիզբը այդ տոնակատարությունների, խոր Վիրապից բերելով Լուսավորչի կանթեղի լույսը, հավատով, որ այդ լույսը պիտի զա ջերմացնելու հայ մարդու, հայ ընտանիքի, հայ օջախի սիրտը, հոգին, հարկը, ինչպես նաև պիտի զա շաղախելու յուրաքանչյուր հայորդու էությունը սիրով, այն սիրով, որ բաշխվում է աշխարհին և մարդկությանը Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առիթով՝ այս գեղեցիկ օրով, երբ Աստուծո Միածին Որդին, որպես սեր Աստուծո՝ մարմին է առնում և բնակվում մեր մեջ, և ես ուզում եմ մասնավորապես կանգ առնել այսօր այդ սիրո կարևոր հասկացության գաղափարի վրա և պիտի ուզեի, որ 1700-ամյակը մենք նշանավորենք մեր կյանքում այդ սիրով, սիրուց բխած գործերով, որովհետև անկարելի է որ մենք կարողանանք 1700-ամյակը բոլորիս ակնկալությունների համաձայն դարձնել վերափոխության, վերածնունդի, վերանորոգության, ձեռքբերումների մի ժամանակաշրջան մեր կյանքում:

Երբ մենք փորձում ենք մեր մտքի հայացքով ընկալել մեր ժողովրդի, մեր հայրերի կերտած արժեքները, տեսնում ենք, որ իրապես այն, ինչ որ բնորոշում ենք որպես արժեք մնայուն մեր կյանքից ներս, մեր պատմությունից ներս, ծնունդ են առել անհատի սիրուց դեպի հայրենին, դեպի Աստված, դեպի իր առաքելությունը, դեպի իր կոչումը: 2001 թվականն էլ այդ իմաստով, ես կարծում եմ, կդառնա բոլորիս համար օրհնյալ տարի, կդառնա բոլորիս համար մեր իղձերի, ցանկությունների, նպատակների իրագործման տարի: Այլապես 1700-ամյակը խորհրդանշող հոբելյանական այս տարին սովորական տարիների նման պիտի անցնի մեր կյանքում, և մեր հիշողության մեջ պիտի մնան միայն տոնական հանդիսավոր միջոցառումները՝ որևէ էական հետք չթողնելով մեր կյանքից ներս, որևէ արժեք չծնելով մեր կյանքում և չմարմնավորվելով իրագործումներով: Ես չեմ ուզում հայացքս ուղղել դեպի անցյալը պատմական՝ մի տեսակ հանրագումարի բերելով հաշվետվության, հայտարարի բերելով անցնող տարվա ձեռքբերումները, վրիպումները, կատարածն ու չկատարածը, այլ ուզում եմ հայացքս ուղղել դեպի գալիքը, դեպի 1700-ամյակը, ուր մենք մեծ պարտավորություններ ունենք ծանրացած մեր ուսերին, որպեսզի 1700-ամյակը իրապես կերպարանափոխի և՛ հոգևոր, և՛ ազգային մեր դիմագիծը, և դա կարող ենք այսօրվա բոլոր դժվարությունների մեջ իրագործել, իրականություն դարձնել, եթե մեր հոգում ունենք սեր դեպի մեր կոչումը, առաքելությունը, դեպի մեր Եկեղեցին, մեր ժողովուրդը, մեր հայրենիքը, դեպի Աստված: Մենք համախ ենք տրտնջում, որ աշխատանք կատարելու ծրագրեր իրականացնելու համար բազում չբավարարված պահանջներ ունենք, միջոցները չեն բավարարում, նյութականը չի բավարարում: Բայց կարծում եմ, որ այդ բոլորը ի չիք կդառնան, եթե իրապես սիրով և հավատով շաղախված լինի մեր հոգին և մեր էությունը»:

Երբ արդեն հայոց երկնքում աստղերն էին փայլփլում, նոր հազարամյակի առաջին արշալույսը նույնքան ջերմ դիմավորելու հույսով մենք հեռացանք վանական սեղանատնից՝ լցված լավատեսությամբ և նոր ակնկալիքներով:

Թող բարի լինի երրորդ հազարամյակը մեր ազգի, Հայրենիքի և Ս. Եկեղեցու համար:

ԴԱՎԻԹ ԴՊԻՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Գևորգյան Հոգևոր Ճեմարանի
Ե լսարանի սան

ԱՄԱՆՈՐԸ ԵՎ Ս. ԾՆՈՒՆԴԸ ՎԱՋԳԵՆՅԱՆ ԴՊՐԱՆՈՑՈՒՄ

Սեանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցը սույն թվականի հունվարի 13-ին, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Անվանակոչության տոնի օրը, ավանդույթի համաձայն մեծաշուք հանդիսավորությամբ նշեց Ամանորը և Ս. Ծնունդը՝ բարձր նախագահությամբ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի, մասնակցությամբ Հոգեշնորհ Տ. Սիոն վարդապետ Ադամյանի, Տ. Արշեն աբեղա Սանոսյանի, Տ. Ղուկաս աբեղա Ջաքարյանի, տեսչական ու դասախոսական կազմի, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի մի խումբ սաների, այլ հյուրերի և դպրանոցի ողջ ուսանողության:

Սուրբ և կենարար Պատարագի արարողությունից հետո դպրանոցի հանդիսությունների սրահում ցերեկույթն սկսվեց Տերունական աղոթքով, Հանրապետության հիմնով և դպրանոցի օրհներգով՝ կատարմամբ դպրանոցի քառաձայն երգչախմբի:

Հանդիսության բացման խորհրդաձևական խոսքով հանդես եկավ դպրանոցի տեսուչ Հոգեշնորհ Տ. Բագրատ աբեղա Գալստյանը.

«Հոգևոր եղբայրներ, սիրելի դասախոսներ, շատ սիրելի սաներ և հյուրեր.

Միավասիկ կանգնած ենք նոր հազարամյակի սեմին, մեր Եկեղեցու 1700-ամյա կյանքի և մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Բեթղեհեմյան մատրուն տեղի ունեցած հրաշալի Ծննդյան ավետիսը ևս մեկ անգամ ունկնդրելու ուժականություն, հույս և ներշնչանքին կենսավորում հաղորդող անփոփոխելի իրադարձության առջև: Միայն ունկնդրությունը, սակայն, գեղարվեստական ներկայացումների միջոցով այդ հեղափոխիչ դեպքի հիշեցումն ու վերհիշումը բավարար չեն մտնելու Քրիստոսի խորհրդի մեջ և ըմբռնելու այն:

Հստակ պատգամ է տրված մեզ «երկրում խաղաղություն և մարդկանց մեջ հաճություն» սերմանելու Գո՛րծ: Սա է իրականն ու վավերականը. եթե այն բացակա է մեր կյանքից, ուրեմն ավա՜ղ և ապարդյուն են անցել մեր կյանքի օրերը: Այն քաղցրություն, հավատքի անսասանություն և վերջապես սիրո արտահայտություն ունեցած առաքելության հանդեպ, որի սկիզբը և վերջը համագործակցությունն է Աստծու հետ: Ամբողջ Ս. Գիրքը մարդու և Աստծու համագործակցության պատմությունն է՝ մարդն իր աշխատանքով և ձգտումով դեպի վերադարձը իր նախանկյալ վիճակին, համագործակցում է Աստծու և նրա շնորհի հետ: Այս իմաստով է աստվածային Պողոսը շեշտում, թե «բոլորից ավելի աշխատեցի, բայց ոչ թե ես, այլ Աստծու շնորհը, որ ինձ հետ էր» (Ա Կորնթ. ԺԵ 10): Նա նշում է Աստծու դերը և իմաստը իր կյանքում Տիրոջ շնորհի հետ և մեզ համագործակից լինելու առարկայականությունը: Այն չի ենթադրում կրավորական վիճակ, Աստծու շնորհի գործունեության համար դաշտ ապահովելու նպատակով, այլ, ճիշտ հակառակը, գործել ծայրագույն աստիճանով,

մեկնակետ ունենալով շնորհն արծարծելու և Աստծու կամքը կատարելու նախանձախնդրությունը. որը մարդուն բարձրացնում է մի վեհ գիտակցության, ըստ որի «մենք Աստծու գործակիցն ենք. Աստծու այգին ենք. Աստծու կառույցն ենք» (Ա Կորնթ.Գ 9): Այս սկզբունքն է եղել մեր գործունեության առանցքը Ամենայն Հայոց Հայրապետ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառի կողմից այն թվականի օգոստոսի 1-ին Մեսրոպ Վազգենյան Դպրանոցի տեսուչ նշանակվելուց ի վեր:

Համագործակիցներ Աստծու հետ. այս է մեր խորքային առաջնորդողը որպես տեսչություն և ուսանողություն. մեր ուսումնակրթական, հոգևոր, կրոնական, աղոթական կյանքի. մեր ապագայի իրականացնելիք ծրագրերի հիմքում: Այս գիտակցությունը խտացված արտահայտել ենք երեք բառերի միջոցով. որոնք փակցված են ուսանողական ինքնարանային բաժնի ներքին ճակատին.

Հանձնառություն, Պատասխանատվություն, Նախանձախնդրություն:

Այսպես ենք սկսել մեր կյանքը, այսպես ենք ցանկանում դիմավորել նոր հազարամյակը, մեր ազգի մկրտության և քրիստոնեության որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակը և մեր Տեր Հիսուս Քրիստոսի մարդեղացման խորհուրդը:

Հուսկ, իմ սրտի խորքից շնորհավորանքի և շնորհակալության խոսք եմ ուղղում մեր դասախոսական կազմին, ովքեր առանց նշույլ իսկ տատամսելու և երկմտելու, դպրանոցի ստեղծման առաջին օրվանից ներ եկել են դպրանոց, սիրով, հավատքով, գուրգուրանքով լցրել այս պատերը՝ իրենց վաստակը, տաղանդը, շնորհները փոխանցելով մեր ուսանողությանը:

Իմ շնորհավորանքը և շնորհակալությունը նաև մասնավորապես այս տարի Վազգենյան Դպրանոց հաճախող հոգևորականներին և նրանց, ովքեր աղոթքով, սիրով և իրենց մշտական ներկայությամբ կանգնած են եղել այս դպրանոցի կողքին:

Եվ գալիս եմ բոլորիդ սրտի խորքերից որպես մի ծաղկեփունջ հավաքելու և մեր շնորհավորանքն ու երախտագիտությունը ընծայելու Ամենայն Հայոց Հայրապետին՝ այս դպրանոցի հիմնադրին: Թող Աստված իր մականը անսասան և ծաղկյալ պահի, և մենք էլ, որպես դպրանոցի սաներ, իր երազներն ու տեսիլքը՝ վերաբերյալ այս դպրանոցին և այս դպրանոցի միջից դուրս եկող մեր Եկեղեցու կյանքին, կենսավորենք մեր գործի, մեր հանձնառության, մեր սիրո միջոցով:

Շնորհավոր Նոր տարի և Սուրբ Ծնունդ»:

Տեսուչ Հայր Սուրբի խոսքին հետևեցին «Ով զարմանալի», «Այսօր ձայնն հայրական» Ծննդյան հոգեզմայլ շարականները՝ ընդմիջարկվելով Ղուկասի Ավետարանի՝ Քրիստոսի ծննդյանը վերաբերող հատվածով: Պարույր Սևակի «Դիմում եմ պահանջելու պես» սքանչելի բանաստեղծության արտասանությամբ հանդես եկավ Բ լսարանի սան Հմայակ դպիր Մանուկյանը, որից հետո երգչախումբը կատարեց «Առաւօտ լուսաբեր» երգը:

Հանուն ուսանողության իր սրտի երախտագիտության ու շնորհավորական խոսքը ներկաներին ուղղեց Ե լսարանի սան Վիգեն սարկավագ Շիրվանյանը.

«Գերաշնորհ Սրբազան Հայր, Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր, հարգելի դասախոսներ և սիրելի ներկաներ ու սաներ.

Այսօր ինձ համար միաժամանակ ծանր ու քաղցր պարտականություն է ողջ ուսանողության անունից խոսք ասել:

Մեզ համար հունվարի 13-ը՝ Տիրոջ Անվանակոչության տոնը, ավանդական ու ամենասիրելի օրերից մեկն է: Այս ժամանակահատվածը ոչ միայն դարձել է դասավանդվող առարկաների մի քննաշրջան, այլև հատկապես հաշվետվության, խղճի ու Աստծո առջև հաշվետու լինելու մի շրջան:

Անցած տարին, մանավանդ որա վերջին ամիսները, բուռն ու ժամանակային առումով շատ կարևոր էին դպրանոցի համար: Նոր տեսուչ Հայր Սուրբի գլխավորությամբ կազմավորվեց բազմաձայն երգչախումբ, նշվեց դպրանոցի 10-ամյա հոբելյանը, ուսանողների մի մասը լծվեց Սնան քաղաքի դպրոցներում դասավանդելու գործին:

Նոր՝ 2001 թվականն արժևորվում և մեզ համար առավել կարևոր է դառնում քրիստոնեության՝ որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակի կապակցությամբ: Այս տարի մենք ոչ միայն պիտի նշենք, վերհիշենք ու տոնի վերածենք այն, այլև մեզ ընձեռված առիթը լավագույնս օգտագործենք, որպեսզի այն դառնա մեր ազգի համար վերածննդի, վերազարթոնքի ու նորոգության տարի: Եվ ինչպես Պողոս առաքյալն է ասում, «Նորոգվենք մեր մտքի նորոգությամբ, որպեսզի կարողանանք քննել լավը և իմանալ, թե ինչ է Աստծո կամքը, այսինքն՝ բարին, հաճելին ու կատարյալը: Միայն մտքի լույսով և հոգու զորությամբ կարող ենք իմաստալից դարձնել մեր կյանքը և երջանկացնել մեր ժողովրդին: Սակայն ամենից առաջ մեր մտքերն ու հոգիները պիտի լուսավորվեն ու պարուրվեն Աստվածային լույսով՝ Քրիստոսով, առանց որի չկա կյանք, չկա երջանկություն, չկա երանություն...

Հավատքը Աստծո հանդեպ, նվիրվածությունը հայկազյան ազգին, հայրենիքին ու լուսավորչահաստատ Սուրբ Եկեղեցուն և սերը միմյանց նկատմամբ դարձնենք մեզ համար սուրբ երդում, որին հետևելով միայն այս նոր դարաշրջանում արձվաթուչ կթնածենք երկնակամարում և ռեալ ու մշտամնա իրականություն կդառնա սիրելի Հայր Սուրբի այն խոսքը, որ Սնանում արձիվներ են մեծանում:

Ամփոփելով խոսքս՝ ուզում եմ շնորհավորել Վեհափառ Հայրապետի Նոր տարին և Ս. Ծնունդը, մաղթել երան արևշատություն և քաջառողջություն: Թող նրա լուսավորչյան մականը միշտ ծաղկի, և իր սրբազան գլխավորությամբ մեր Եկեղեցին ու ազգը պայծառ օրեր տեսնեն: Շնորհավորում եմ միաբանության բոլոր անդամներին, ցանկանում եմ, որ իրենց կարգի մեջ հաստատ մնան և մեզ համար լինեն քաջալերիչ օրինակներ հոգևոր մարդու և հայ հոգևորականի: Շնորհավորում եմ դասախոսական և տեսչական կազմին և շնորհակալություն հայտնում, որ երանք անձնդիր նվիրումով բաշխում են իրենց ունեցած գիտելիքներն ու փորձը: Շնորհավորանքս և շնորհակալությունս եմ հայտնում նաև դպրանոցի ողջ անձնակազմին, որ իր ծնողական վերաբերմունքով ու զուրգուրանքով շահել է ուսանողության հարգանքն ու սերը»:

Այնուհետև երգչախումբը կատարեց «Մարալ. մարալ» ժողովրդական երգը, որին հաջորդեցին Եղիշե Չարենցի «Կուզեմ եիմի փչի գուռնեն» և Վահագան Հովհաննիսյանի «Մեր կոթողները» բանաստեղծությունները՝ Դ լսարանի սան Վահե դպիր Կռոպեդյանի և Ա լսարանի սան Հայկ Հարությունյանի գեղեցիկ արտասանությամբ:

Ողջ դասախոսության անունից շնորհավորանքի խոսքով հանդես եկավ դպրանոցի դասախոս Խորեն Պալյանը.

«Սրբազան Հայր, Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր, սիրելի հյուրեր ու դասախոսներ և շատ սիրելի սաներ.

Ինձ համար մեծ պատիվ է այսօր մի քանի խոսք ասել հանուն Գևորգյան Հոգևոր Ճեմարանի և Վազգենյան Դպրանոցի դասախոսական կազմի և շնորհավորել նախ ձեր Ամանորը՝ հին տոմարով, և ապա Քրիստոսի Հրաշափառ Ծնունդը: Արդեն 5-րդ, թե 6-րդ տարին է, ինչ ես մեծ հաճույքով գալիս եմ Սևանա Դպրանոց: «Հունձք բազումք են եւ մշակք՝ սակաւք». սա չի նշանակում, թե մենք ծովի նման մշակներ պետք է աճեցնենք, այլ «մշակ առանց ամօթոյ», որովհետև այսօր, առավել քան երբեք, Հայաստանյայց Եկեղեցին կարիք ունի վերանորոգվելու, բուժվելու, վերակապելու իր վերքերը, լցնելու այն մեծ անջրպետը, որ բացվեց կոմունիստական հասարակարգի ստեղծման օրվանից: Այնքան մեծ էր այդ անջրպետը, որ մեր ժողովուրդը օտարվում էր Եկեղեցուց: Եվ մոռացել ենք, որ մենք պետք է գնանք դեպի ժողովուրդը և ոչ թե հակառակը: Սիրելի սաներ, երկու բան եմ այսօր ուզում կտակել ձեզ: Առաջինը, որ դուք լավ սովորեք և շատ բան սովորեք, և երկրորդը՝ շատ սիրեք Հայաստանյայց Եկեղեցին, Էջմիածինը, ոչ միայն սիրեք, այլև պաշտեք Ս. Էջմիածինը՝ որպես մեր առաջին աշխարհամատուռը, իբրև Հայոց Ընդհանրական Հայրապետության կենտրոնը, Քրիստոսի կողմից կերտված աշխարհում միակ հրաշակերտ տաճարը: Եվ եթե այս սերը ձեր մեջ կարողանաք արմատավորել, կլինեք ամենահայրենասեր մարդիկ, որովհետև եկեղեցասիրությունը, էջմիածնասիրությունը հավասարազոր են հայրենասիրությանը, և կարծում եմ՝ այդ երկու հասկացությունները ձուլվել են արդեն մեր քրիստոնեության ընդունման առաջին մեկ օրվանից:

Թող Աստված զորացնի բոլորիդ, ձեզ հաջողություն և աստվածային իմաստություն եմ մաղթում»:

Սրամիտ կատակներ և վիճակահանությունը ներկաներին թարմություն հաղորդեցին: Ապա հնչեց «Ամեն շաբաթ կամ կիրակի» երգը: Հանդիսության վերջում օրհնության խոսք ասաց Սեպուհ Սրբազանը.

«Սիրելի հոգևոր եղբայրներ, դասախոսներ և, մանավանդ, շատ սիրելի սաներ.

Իրապես մեծ է հոգևոր հաստատությունների դերը հայ ժողովրդի կյանքում, առավել ևս այս դժվարին ու փորձություններով լի ժամանակահատվածում: Հայ ժողովուրդը աղանդավոր է, անհավատ է, այս է կամ այն է,- այս ամենի մեջ մեր մեղքի մեծագույն բաժինը կա:

Մենք, իբրև Եկեղեցի, ազգ կամ պետություն, իրավունքը չունենք հպարտանալու կատարած քայլերով: Քանի դեռ Հայաստանում առկա են աղանդավորական եզոր և լուրջ հոսանքներ, որոնց թիկունքին կանգնած են ոչ միայն օտար, այլև, դժբախ-

փաբար, հայրենի զավակներ, ազգն ազգ չի դառնա, և Եկեղեցին՝ Եկեղեցի: Դարձյալ մենք ենք մեղավոր, մենք է, որ, իբրև Եկեղեցի, պետք է գործանանք, գիտակցենք մեր առաքելությունը: Ուրախ եմ, որ Վազգենյան Դպրանոցն այդ առաքելության իրականացման ճանապարհին է:

Սիրելի սաներ.

Ցավոք, Հայ Եկաղեցին պատմության շատ քիչ փուլերում է ընդհանրական մտածելակերպ և գործելակերպ ունեցել: Առավելաբար անհատներն են Հայ Եկեղեցին, իբրև փրկարար նավ, առաջնորդել ու նավարկել: Բայց մենք ուղղակի իրավունք չունենք այդ կերպ շարունակելու. մենք, իբրև միաբաններ, պետք է գործենք՝ որպես Գևորգյան, Վազգենյան, Ծիրակի ճեմարաններ և համախմբված ու միասնական գործունեությամբ: Մենք, իբրև Եկեղեցի, ամուր կառչած մեր պապերի հավատքին, Վեհափառ Հայրապետին, մեր առաջնորդներին, մեկ շունչ, մեկ մարմին, մեկ բռունցք դարձած՝ հասնենք մեր ժողովրդին՝ հանուն նրա բարօրության և հավատքով մեկ լինելու գաղափարախոսության: Սա մեր սեպուհ պարտքն ու պարտականությունն է: Այս Եկեղեցին չի ընդունում անօրենություն, սրբապղծություն, այս Եկեղեցին սիրում է նվիրյալների, Քրիստոսի հետևորդներին՝ հավատարիմ Տիրոջ Ավետարանին:

Հայր Սուրբ, շնորհակալ եմ այս հրավերի համար: Ի սրտե շնորհավորում եմ ձեր Ամանորը և Ս. Ծնունդը և մաղթում եմ ուժ, կարողություն՝ փոխտեսուչների հետ ձեռք-ձեռքի տված շարունակելու պատասխանատու և սրբազան պարտականության իրագործումն այս դժվարին պայմաններում:

Սիրելի՛ դասախոսներ, շնորհավորում եմ նաև ձեր Ամանորը և Ս. Ծնունդը: Իրոք շատ դժվար է, երկար ճանապարհ եք կտրում, գալիս Սևան և ուսանողներին ձեր գիտելիքները փոխանցում: Դա հմուտ վարպետի ձեռքի գործ է: Եթե նրանք կավ են, հումք, ապա դուք վարպետներն եք, որ ձեռք եք տալիս և հաներությանը ներկայացնում ձեր պտուղն ու արգասիքը:

Սևանի Վազգենյան Դպրանոցի կենացը՝ իր հիմնադրի՝ Գարեգին Վեհափառի գլխավորությամբ:

Շնորհավոր Ամանոր և Ս. Ծնունդ»:

«Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողությամբ և Սրբազան Հոր «Պահպանիչ»-ով եզրափակվեց Ամանորի և Ս. Ծննդյան հանդիսությունը Վազգենյան Դպրանոցում:

ՎԱՀԻԿ ՈՒՐԱՐՏԻՐ ԶԱՐԳԱՐՅԱՆ
ՄԵԴՐԱՆԻԿ ՈՒՐԱՐՏԻՐ ՊՈՂՈՍՅԱՆ
Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի
Ե լսարանի սաներ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՂԱՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

«Գնացէք այսուհետեւ, աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»:

(Մատթ. ԻԸ 19)

Սույն թվականի հունվարի 14-ին, Ս. Հովհաննես Կարապետի տոնի նախօրյակին, Մայր Տաճարի վեհաշուք և լուսեղեն կամարների ներքո տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն՝ բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի:

Ձեռնադրության այդ հիասքանչ խորհուրդը փոխանցվել է դեռևս մեր Տեր Հիսուս Քրիստոսից: Մեր Փրկչի հրաշափառ համբարձումից հետո առաքյալները «հրամանաւն Սրբոյ Հոգւոյն» և Պետրոս առաքյալի ձեռամբ Հակոբոս Տյառնեղբորը կարգեցին Երուսաղեմի առաջին եպիսկոպոս ու քահանայապետ:

Առաքելավանդ այդ կանոնների պահպանման և ժողովրդի հոգևոր պետքերը բավարարելու համար էր, որ յոթ շնորհալի սարկավագներ, որոնք իրենց պատրաստակամությունն էին հայտնել աշակերտելու և հետևելու Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կանոններին, «կամօքն Աստուծոյ» արժանացան քահանայական ձեռնադրության՝ Արտակ սրկ. Մահակյան, Աշոտ սրկ. Ղազարյան, Սամվել սրկ. Կիրակոսյան, Հայկ սրկ. Պոռշյան, Արսեն սրկ. Պապուրյան, Բաբկեն սրկ. Նանյան և Արման սրկ. Սարոյան՝ խարտվիլակությամբ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանի:

Ըստ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ձեռնադրության Մաշտոցի, հունվարի 13-ին, Անվանակոչության տոնի իրիկնամուտին, Մայր Տաճարի Իջման Ս. Սեղանի առջև տեղի ունեցավ բարեշնորհ սարկավագների ընծայման կարգը՝ «կոչումն քահանայութեան»:

Քաղցրալուր «Նայեաց ի մեզ» շարականի հնչյունների ներքո ընծայացուները ծնրադիր մոտեցան Եպիսկոպոսապետին և, խարտվիլակ Սրբազան Հոր «Հրամայեա Տէր օրհնութեամբ ասել» ազդակից հետո, ձեռնադրող Հայրապետն ընծայացուների համար հայցեց Սուրբ Հոգու շնորհը՝ դրան ավելացնելով նաև իր հայրապետական օրհնությունը: Արարողության խարտվիլակ Եզնիկ եպս. Պետրոսյանը վկայեց ընծայացուների հոգևոր ու մտավոր պատրաստականության, ինչպես նաև Հայաս-

Ս. Գրիգոր Լուսաւորչի Ս. Գրիգորիսներ՝ Գարեգին Գրիգոր Ս. Գրիգոր Ս. Գրիգոր Ս.

տանյայց Առաքելական Եկեղեցու որպես քահանա անձնազոհ պատրաստակամության մասին: Այնուհետև «ի ծունկս... առաջի սեղանոյ իջման տեղւոյն» ընծայյալները հանդիսավոր ընթերցեցին Ս. Գրիգոր Տաթևացու սահմանած «Հաւատոյ խոստովանութիւնը», իբրև ուխտի նշան. «...Ճշմարտութեամբ եւ ուղղութեամբ խղճի մտացս եւ սրտիս երդնում զերդումն սուրբ ըստ առաջիկայ պայմանաց»:

Խորհրդավոր ծիսակատարությունն ավարտվեց «Պահպանիչ»-ով և Տերունական աղոթքով:

Հաջորդ օրը, կիրակի առավոտյան, Մայր Տաճարի Սուրբ Սեղանի վրա մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը: Հրնթացս Սուրբ Պատարագի, «Զի ողորմած եւ մարդասէր ես» աղոթքից հետո, խարտավիլակ Սրբազան Հայրն ընծայացուներին ձեռադիր առաջնորդեց Ավագ Խորան՝ առ ոտս ձեռեադրող Հայրապետի: Վկայելով նրանց հոգևոր ու մտավոր հասունության մասին՝ «Գիտեմք եւ վկայեմք զսոսա արժանաւոր զոյ՝ առ ի բառնալ զլուծ աստիճանաց», խնդրեց Եպիսկոպոսապետին, որպեսզի սարկավագներին արժանացնի սրբալույս խորհրդին՝ ձեռնադրությանը: Խարտավիլակ Սրբազան Հոր «Ընկալցի զքեզ Տէր» ազդարարությունից հետո նվիրյալները «ձեռս ի վեր առեալ» շրջվեցին դեպի ժողովուրդը և կնքեցին իրենց սրբազան ուխտը՝ հրաժարվելով աշխարհիկ կյանքից: Այս ընթացքում հնչեց հոգեպարար և ոգեշունչ «Աստուածային եւ երկնավոր շնորհ...» շարականը, և նվիրյալները կոչվեցին «ի սարկաւագութենէ ի քահանայութիւն»: Այնուհետև նորընծաները ծնկաչոք մոտեցան Եպիսկոպոսապետին, և նա ձեռնադրելով յուաքանչյուրին՝ արտասանեց. «Ես դնեմ զձեռս ի վերայ սորա, եւ դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զասպիճան քահանայութեան» աղոթքը: Նորընծաներին, որպես քահանայական իշխանության խորհրդանիշ, շնորհվում է փիլոն, շուրջառ և սաղավարտ, որից հետո Ավագ Սուրբ Սեղանի վարագույրը փակվում է, ուր նորընծաները զգեստավորվում են:

Համապատասխան երգեցողություններից և սաղմոսասացություններից հետո, մոտենում է այդ սրբազան արարողության ամենախորհրդավոր պահը: Հանդիսավորապես Ավագ Սուրբ Սեղան է բերվում Կենարար Ե Սրբալույս Մյուռոնով լի Աղավնին, որն էլ իր անջնջելի կնիքն է թողնում նորընծաների վրա: Հայոց Հայրապետը Սրբալույս Մյուռոնով օծում և օրհնում է յուրաքանչյուրի ճակատը, աջ և ձախ ձեռքերը՝ անվանակոչելով Արտակ սրկ. Սահակյանին՝ Տ. Ավետիս քահանա, Աշոտ սրկ. Ղազարյանին՝ Տ. Վիրապ քահանա, Սամվել սրկ. Կիրակոսյանին՝ Տ. Խորեն քահանա, Հայկ սրկ. Պողոյանին՝ Տ. Մկրտիչ քահանա, Արսեն սրկ. Պատուրյանին՝ Տ. Մամբրե քահանա, Բաբկեն սրկ. Նանյանին՝ Տ. Վազգեն քահանա, և Արման սրկ. Սարոյանին՝ Տ. Գևորգ քահանա: Օծման արարողությունից հետո նորընծաները Ավագ Խորանից հեռացին իրենց անդրանիկ օրհնությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

Եկեղեցում հավաքված հոգևորականաց դասին և հավատավոր ժողովրդին համակել էր ուրախությունն ու բերկրանքը, քանզի նս յոթ հոգի հոժարակամորեն իրենց

կորովն ու եռանդը ներդրեցի՛ն ի նպաստ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Ազգիս Հայոց:

Ցավարտ Սուրբ Պատարագի ՆԱԼՈՏՏ. Գարեգին Բ Կաթողիկոսն իր հայրապետական օրհնությունն ու շնորհավորանքի խոսքն ուղղեց նորընծաներին և հավատացյալներին:

«Փա՛ռք քեզ, Աստուած, փա՛ռք քեզ, յաղագս ամենայնի. Տէ՛ր, փառք քեզ»:

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ.

Օրհնությունների այս բառերը մեր շուրթերից որպես գոհաբանական աղոթք ենք առ Աստված բարձրացնում՝ ունենալով, արդարև, փառաբանության բազում առիթներ: Մենք փառք ենք տալիս Աստծուն, որ ձեզ հետ միասին շնորհին արժանացանք դիմավորելու երրորդ հազարամյակը, որ բացվում է հայոց կյանքում քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակով: Մենք փառաբանություն ենք առ Աստված բարձրացնում, որ խորհրդային անաստվածության դարիները փլուզվեցին, և մենք նոր դար, նոր հազարամյակ մուտք ենք գործում Հայոց անկախ պետականությամբ, հավատքի Լուսավորչի կանթեղի ջահը վերստին վառված: Մենք փառք և գոհություն ենք առ Աստված բարձրացնում, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին այսօր վերստին նորացած իր առաքելությունն է իրականացնում մեր ժողովրդի կյանքից ներս՝ կրթական հոգևոր հաստատություններից նոր սերունդ հասցնելով մեր ժողովրդի սպասավորության նվիրական և սուրբ գործին: Մենք փառք և գոհություն ենք առ Աստված բարձրացնում այսօրվա համար, որ արժանի դարձրեց մեզ աղոթքով, խնդրանք ու հայցով մասնակիցը լինելու ձեռնադրության սրբազան այս արարողությանը, որին յոթ ուխտյալներ իրենց վճռականությամբ ծնրադրեցին Սուրբ Սեղանի առջև Միածնաէջ՝ իրենց ծառայության ուխտը կատարելով մեր ժողովրդին և մեր Եկեղեցուն: Նրանցից չորս սիրելիներ պիտի երեկոյան մասնավոր արարողությամբ որպես վեղարներ՝ լինելով Հայ Եկեղեցու անդաստանից ներս որպես կուսակրոն քահանաներ, իսկ երեքը, որպես ամուսնացյալ սպասավորները մեր Եկեղեցու, իրենց ծառայությունը պիտի բերեն Հայաստանյայց թեմերից ներս:

Արդարև՝ «Բազում են հունձք, եւ սակա մշակք»: Հիշատակեցինք խորհրդային անաստվածության դարիները, որոնք իրենց ավերիչ դրոշմը թողեցին մեր եկեղեցական կյանքից ներս. խոնարհվեցին բազում եկեղեցիներ, աքսորվեցին բազում հոգևոր սպասավորներ սիբիրյան խորքերը, ոմանք և կնքեցին իրենց մահկանացուն: Փակվեցին աղոթքի բազում տներ մեր ժողովրդի առջև, սակայն հայոց հավատքը երբեք չդադարեց ճառագելուց, երբեք չդադարեց լուսավորելուց մեր ժողովրդի ճանապարհը առ Աստված ձգվող՝ շնորհիվ այն նվիրյալ Հայրապետների, որոնց անուններով կնքե-

ցինք այսօր մեր նոր ձեռնադրյալ, օծյալ զավակներին, շնորհիվ Մկրտիչ Խրիմյան, Խորեն Մուրադբեկյան, Գևորգ Չորեքչյան, Վազգեն Առաջին և նաև Ի դարավարտին գահակալած Գարեգին Առաջին երանելի Հայրապետների:

Միրելի նոր ձեռնադրյալ զավակներ մեր Եկեղեցու.

Հայրապետներ, որոնց անունները մենք քիչ առաջ թվարկեցինք, կերտեցին քսաներորդ դարի մեր ժողովրդի և մեր Եկեղեցու պատմությունը, կերտեցին անմնացորդ նվիրումով, անհուն զոհաբերություններով, իրենց հավատքով և իրենց հայրենասիրությամբ, դժվարին պայմաններում. ծանր վիճակներում հանձնառու եղան կրելու ամեն զրկանք, ամեն չարչարանք, ամեն լրատապանք, վասն ազգի և վասն Հիսուսի Քրիստոսի: Նրանք իրենց առջև ունեին կերպարը մեծ վարդապետի, որ Գողգոթա բարձրանալով և խաչի վրա կանգնելով հաղթեց, հաղթանակեց իր սիրով, հաղթանակեց երբեք չնվազող և չմահացող հույսով ու անսասան հավատքով առ Աստված: Այդպես էլ մեր Հայրապետները, պահելով իրենց հավատարմությունը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին, և պատգամներին մեր Սուրբ Հայրերի, կարողացան դարը լուսավոր հավատքի առաջնորդել և նոր հազարամյակը մեր առջև բանալ հույսով, հավատով, երազներով ու տեսիլքով լեցուն:

Մենք անունները մեր Հայրապետների դրեցինք ձեզ վրա՝ հավատալով, որ, օրինակն ունենալով նրանց կյանքի և հավատավոր գործերի, պիտի նույն նվիրումով և նույն սիրով ձեր ծառայությունը մատուցեք մեր ժողովրդին, պիտի կարողանաք, Քրիստոսին ունենալով ձեզ առաջնորդող, Նրա ծանր լուծը թեթևությամբ կրել ձեր ուսերի վրա՝ երբեք չդիմանալով ձեր հավատքի մեջ, երբեք չդիմանալով տեսնելու այն ճշմարիտ ուղին, որ առաջնորդում է մեր ժողովրդին դեպի փրկություն և դեպի իր դարավոր երազների իրականացում: Ինձ համար և, վստահաբար, մեր ժողովրդի բոլոր զավակաց համար ցնծության, բերկրանքի, ուրախության պահ է այս պահը, երբ Մայր Աթոռի Սվազ Խորանի վրա կանգնած են յոթ ուխտյալներ, որ պիտի գան լրացնելու, համալրելու շարքերը հայ եկեղեցականաց, որ նոսր է և անբավարար՝ այսօրվա մեր հոգևոր առաքելությունը մեր ժողովրդի կյանքում ամբողջապես, արդյունավետ, արդյունաբեր կերպով իրականացնելու համար: Ժողովուրդը պետք ունի սպասավորի, սակայն այն սպասավորի, որը գիտե դարման անել նրա կարիքներին, նրա ցավերին, նրա տառապանքներին, ժողովուրդը պետք ունի սպասավորի, որը գիտե առաջնորդ լինել անհուսության ու անորոշությունների մեջ՝ դուրս բերելով լուսավոր ճանապարհներ, հույսի ճանապարհի վրա կանգնեցնելով մեր ժողովրդի զավակաց: Ժողովուրդը պետք ունի հանձնառու, նվիրյալ, անձնազոհ, ծառայասեր եկեղեցականի, որպեսզի կարողանա իր հավատքը

միշտ վառ պահել և իր քայլքը միշտ ուղղյալ դեպի մեր արքազան տանարները. դեպի վանքերը. որոնք առաջնորդում են մեր ժողովրդին ահա 1700 տարիներ դեպի Աստված: Մենք այս վստահությամբ և հավատքով մեր ձեռքը դրեցինք ձեզ վրա և օծեցինք ձեզ, կնքելով մեր երանաշնորհ Հայրապետների անուններով ձեզ, որպես պարտավորություն պիտի ընկալեք արժանացումը ձեր այդ մեծ շնորհին՝ Հայոց Հայրապետների լուսավոր անունների կրումին, և պիտի կարողանաք ձեր կյանքով, ձեր վարքով ու ընթացքով միշտ փառավորել նրանց անունները, լույսի պսակ հյուսել նրանց անվան շուրջ հավատո ձեր գործերով:

Այս ուրախ, այս բերկրաշատ առիթով ես իմ շնորհավորանքն եմ բերում մեր բարեպաշտ հավատացյալ ժողովրդին, շնորհավորում եմ նաև մեր միաբանությանը, որոնք սիրով, ուրախությամբ պիտի գրկեն ձեզ՝ իրենց շարքերում ընդունելով: Մեր գնահատանքը, մեր շնորհավորանքը ուզում ենք բերել նաև ծնողաց, բարեկամներին, հարազատներին ձեր, որոնք տարիներ շարունակ իրենց սպասումներն են ունեցել, թե ե՞րբ պիտի արժանի լինեն այս օրվան, տեսնելու ձեզ կանգնած խորանի առջև ձեր ուխտը կատարելիս: Մենք այս առիթով նաև մեր գնահատանքն ենք ուզում բերել մեր մանկավարժներին կրթական հաստատությանց, նրանց տնօրեն վարչություններին և բոլոր, բոլոր այն անձանց, որոնք մաս ու բաժին, լումա ունեն ձեր ամի, ձեր հասակի, մտքով ու հոգով ձեր զորացման ազնիվ գործի մեջ:

Մեր աղոթքն է, որ Տերն արգասաբեր դարձնի ավազանը մեր Մայր Եկեղեցու, որտեղից պիտի ծնվեն սպասավորներ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և հավատավոր մեր ժողովրդի, մեր աղոթքն է, որ մեր սպասավորները արժանիորեն վաստակեն տերն ու հարգանքը հավատացյալ հարորդաց և իրենց հավատքի կենդանի՛ գործերով, իրենց նվիրումով, իրենց սիրով: Մեր աղոթքն ու մաղթանքն է նաև, որ մեր բարեպաշտ ժողովրդի զավակունք գիտնական, գնահատեն հանձնառությունը իրենց սպասավորող եկեղեցեկրոնաց, որոնք Միածնաէջ Սուրբ Խորանի առջև ծնրադրել և ուխտել են ծառայելու ձեզ անվերապահորեն և ի պահանջել հարկին նաև զոհաբերել իրենց կյանքը ձեր հոգևոր շինության, ձեր կյանքի բարօր խաղաղ ընթացքի համար: Միածնաէջ սուրբ այս Տաճարի Ավագ Խորանից մեր աղոթքն ենք նաև առ Աստված բարձրացնում, որ Տերը պահի մեզ միասնական, ամբողջ ու անխոով. ժողովուրդ և պետություն այս համամիասնությամբ է նոր հազարամյակը սկսել՝ կյանքը դարձնելու համար երջանկաբեր, բարեբեր, հայոց զավակաց համար ի սիրուս աշխարհի, որպեսզի այս դարում, այս հազարամյակում չկրկնվեն մեր ժողովրդի կյանքում այն աղետները, այն ողբերգությունները, որ անդամահատեցին մեզ ու պանդուխտ դարձրեցին, ցրիվ տվեցին ողջ աշխարհով մեկ մեր բեկորները, որպեսզի մենք ապավինենք ազգային միասնական մեր այդ ու-

ժին. կարողանանք մեր առջև բարձրացող. մեր առջև հառնող բոլոր տնասակի դժվարություններն ու խոչընդոտները՝ ապավինած մեր հայրերի Աստծուն. ապավինած մեր սուրբ հայրերին. սրբազան հավատքին՝ հաղթանակել և փառքը միշտ մեր շուրթերի վրա կրել, որպես գոհաբանական աղոթք առ Աստված միշտ արտասանելով. «Փա՛ռք քեզ. Աստուած. փա՛ռք քեզ. յաղագս ամենայնի. Տէր. փա՛ռք քեզ»:

Տիրոջ սերը. շնորհը և խաղաղությունն եմ հայցում. որ լինի մեզ հետ այժմ և միշտ և հավիտյանս. ամեն»:

Նուն օրը. երեկոյան ժամերգությունից առաջ. Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ տեղի ունեցավ նորաձև Տ. Ավետիս. Տ. Մկրտիչ. Տ. Վազգեն և Տ. Գևորգ քահանաների վեղարի փվչությունը: Համաձայն Հայ Եկեղեցու կարգաց և կանոնաց. կուսակրոն քահանաները. ի տարբերություն ամուսնացյալների. կրում են վեղար՝ ի նշան կուսակրոնության. և ապրում վանական կյանքով:

Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչությունն ու ուսանողությունը նույնպես ջերմագին շնորհավորում են նորապսակ քահանաներին և մաղթում. որ անսասան մնան իրենց առաքելության մեջ. այն հույսով ու հավատով. որ նրանք ողջ ուժերն ու եռանդն ի սպաս կդնեն ի ծառայություն և ի բարօրություն Հայաստանյայց Եկեղեցու և նրա հավատավոր զավակաց:

«Եւ նոքա ելեալ քարոզէին ընդ ամենայն երկիր Տեառն գործակցութեամբ եւ զբանն հաստատէին ամենայն նշանօք. որ երթայր զհետ նոցա» (Մարկ. ԺԶ 20):

ՀԱՅԿ ԴՊԻՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Բ լսարանի սան

Տ. ԱՎԵՏԻՍ ԱԲԵՂԱ ՍԱՀԱԿՅԱՆ
(ավագանի անունը՝ Արտակ)

Ծնվել է 1975 թ. նոյեմբերի 22-ին Երևան քաղաքում:

1983-1993 թթ. սովորել և ավարտել է Զվարթնոցի № 12 միջնակարգ դպրոցը:

1993 թ. ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց և ավարտել 1998 թ.:

1997 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի:

1998-1999 թթ. ուսումը շարունակել է Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2000 թ. Գևորգյան Հոգևոր Ճեմարանում պաշտպանել է ավարտաճառ՝ «Սուրբ Գրիգոր Նյուսացին և նրա «Մովսեսի կյանքը» երկը» թեմայով:

2001 թ. հունվարի 14-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի:

Տ. ՄԿՐՏԻՉ ԱԲԵՂԱ ՊՈՂՈՍՅԱՆ
(ավագանի անունը՝ Հայկ)

Ծնվել է 1975 թ. օգոստոսի 13-ին Էջմիածին քաղաքում:

1982-1992 թթ. սովորել և ավարտել է տեղի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը:

1993 թ. ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց և ավարտել 1998 թ.:

1998-1999 թթ. ուսումը շարունակել է Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալֆայանի:

2000 թ. Գևորգյան Հոգևոր Ճեմարանում պաշտպանել է ավարտաճառ՝ «Խոսքով Անձևացու «Դատարագի մեկնության» աստվածաբանությունը» թեմայով:

2001 թ. հունվարի 14-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի:

Տ. ՎԱՉԳԵՆ ԱԲԵՂԱ ՆԱՆՅԱՆ
(ավագանի անունը՝ Բաբկեն)

Ծնվել է 1976 թ. հոկտեմբերի 15-ին Երևան քաղաքում:

1983 թ. ընդունվել է տեղի Զերժինսկու անվան № 20 միջնակարգ դպրոցը և 1993 թ. ավարտել № 114 միջնակարգ դպրոցը:

1993 թ. ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց և ավարտել 1998 թ.:

1998-1999 թթ. ուսումը շարունակել է Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանի:

2000 թ. Գևորգյան Հոգևոր Ճեմարանում պաշտպանել է ավարտական՝ «Սուրբ Հոգու եզրաբանությունը և «Բիտում» եզրի արտացոլումը հայ դավանաբանական աստվածաբանության մեջ» թեմայով:

2001 թ. հունվարի 14-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի:

Տ. ԳԵՎՈՐԳ ԱԲԵՂԱ ՄԱՐՈՅԱՆ

(ավագանի անունը՝ Արման)

Ծնվել է 1977 թ. հուլիսի 28-ին Մասիս քաղաքում:

1983-1993 թթ. սովորել և ավարտել է Մարմարաշենի միջնակարգ դպրոցը:

1993 թ. ընդունվել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց և ավարտել 1998 թ.:

1998-1999 թթ. ուսումը շարունակել է Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանի:

2000 թ. Գևորգյան Հոգևոր Ճեմարանում պաշտպանել է ավարտական՝ «Գրիգոր Խլաթեցու Հայսմավուրքն ըստ Էջմիածնի մատենադարանի ձեռագրերի» թեմայով:

2001 թ. հունվարի 14-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի:

Տ. ՎԻՐԱՊ ՔԱՀԱՆԱ ՂԱՋԱՐՅԱՆ

(ավագանի անունը՝ Աշոտ)

Ծնվել է 1973 թ. Էջմիածին քաղաքում:

1980-1990 թթ. ուսանել է Զվարթնոցի № 10 միջնակարգ դպրոցում:

1991 թ. ընդունվել է Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան և ավարտել 1997 թ.:

1996 թ. ձեռնադրվել է սարկավագ:

2000 թ. դեկտեմբերի 15-ին պաշտպանել է ավարտական՝ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դպրանոցը 1771-1800 թթ.» թեմայով:

2001 թ. հունվարի 14-ին ձեռնադրվել է քահանա՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի:

Տ. ԽՈՐԵՆ ՔԱՀԱՆԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

(ավագանի անունը՝ Սամվել)

Ծնվել է 1975 թ. մարտի 15-ին Էջմիածին քաղաքում:

1980-1990 թթ. սովորել և ավարտել է Աթափաշենի միջնակարգ դպրոցը:

1992 թ. ընդունվել է Մանանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց և ավարտել 1997 թ.:

1997-1998 թթ. ուսումը շարունակել է Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

1998 թ. սեպտեմբերի 20-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանի:

2000 թ. Գևորգյան Հոգևոր Ճեմարանում պաշտպանել է ավարտաճառ՝ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Էջմիածին» շաբաթաթերթը» թեմայով:

2001 թ. հունվարի 14-ին ձեռնադրվել է քահանա՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի:

Տ. ՍԱՄԲՐԵ ՔԱՀԱՆԱ ՊԱՏՈՒՐՅԱՆ

(ավագանի անունը՝ Արսեն)

Ծնվել է 1976 թ. ապրիլի 6-ին Էջմիածին քաղաքում:

1983-1993 թթ. սովորել և ավարտել է տեղի Ռ. Պատկանյանի անվան № 9 միջնակարգ դպրոցը:

1993 թ. ընդունվել է Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան և ավարտել 1999 թ.:

1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան արքեպս. Գալֆաքյանի:

2000 թ. Գևորգյան Հոգևոր Ճեմարանում պաշտպանել է ավարտաճառ՝ «Ռուսաստանի հայկական գաղթօջախները և թեմի հաստատումը» թեմայով:

2001 թ. հունվարի 14-ին ձեռնադրվել է քահանա՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի:

ԱՌՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐՄԵՆ ԱՐՔԵՊՍ. ԲԵՐԲԵՐՅԱՆ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ա. Անհրաժեշտություն Աստվածաշնչի ընթերցման

Աստվածաշունչ մատյանը, հակառակ իր հազարամյակների հնության, մնացել է զարմանալիորեն արդիական, դարձել է բոլոր ժամանակների ամենաշատ ընթերցված գիրքը: Ազգեր են եկել և անցել, պետություններ կազմավորվել և կործանվել, մոդայիկ հայտնագործություններ կատարվել և դուրս մղվել, երբեմնի քաղաքակրթություններ և խոսակցական լեզուներ են անհետացել, բազում հասարակարգեր ցնցումներ ապրելով ենթարկվել են արմատական փոփոխությունների, մինչդեռ Աստվածաշունչը, չնայած այն հանգամանքին, որ դարերի ընթացքում ենթարկվել է քննադատությունների, անհավատների կողմից ոչնչացման վտանգին, մնացել է անփոփոխ և կարողացել է կատարել իր առաքելությունը. մարդկանց փոխանցել Աստծուն ճանաչելու փրկաբերությունը:

Սրանով են պայմանավորված Աստվածաշնչի հարատև արդիականության գաղտնիքն ու պատճառը: Բացի այդ, որ մարդկությունը Աստված ճանաչելով վերահմաստավորել է իր իսկ առեղծվածային գոյությունը երկրագնդի վրա, նա այդ հրաշք գոյության մեջ տեսել է բացառիկ պատգամը, որն ուղղված է յուրաքանչյուրիս և միևնույն ժամանակ ողջ մարդկությանը՝ անկախ նրանց աշխարհագրական,

ռասսայական, սոցիալական, պատմական դարաշրջանի կամ մշակութային առանձնահատկությունների, պատգամ բյուրեղացման, աստվածացման:

Այս գիրքը կոչվում է նաև Ս. Գիրք, քանի որ չի խոսում միայն անցյալի մասին, այլ Աստված նրա միջոցով դիմում է բոլոր ժամանակների մարդկության:

Այն Աստծուց ներշնչված խոսք է, որի շնորհիվ նրա բովանդակությունը դառնում է կենդանի, արդիական (Բ Պետրոս Ա 20, 21)

Աստվածաշունչ մատյանը, լինելով մեկ գիրք, իր մեջ ընդգրկում է շատ գրքեր՝ թվով 66: Հունարեն այն հնչում է հոգնակի τα biblia-գրքեր, biblion-գիրք բառից: Աստվածաշնչի պարունակության մեջ գտնվող գրքերը գրվել են տարբեր դարաշրջաններում և իրենց վրա կրում են տվյալ դարաշրջանի ոճը, բայց «Ծննդոցից» մինչև «Հայտնություն» բոլոր գրքերը հրաշալիորեն կապված են միմյանց ներքին միասնությամբ և ծառայում են մեկ նպատակի, այն է՝ մարդուն աստվածային ներգործության ճանապարհով դեպի կատարելություն տանելու նախատեսված անհրաժեշտ, ի սկզբանե որոշված ծրագիրն է իրականացնում:

Աստվածաշունչը բաժանված է 2 մասի՝ Հին Կտակարան և Նոր Կտակարան:

Հին Կտակարանը Աստծու խոսքն է մինչև Քրիստոս, իսկ Նոր Կտակարանը սկսվում է Քրիստոսի ծնունդով:

Նոր Կտակարանի 27 գրքերը, իբրև «սուրբ գրքեր», Եկեղեցու կողմից միավորվեցին մ. թ. 2-րդ դարի վերջին և ստացան «Նոր Ուխտ» անվանումը, որով Աստված իր Որդի Հիսուս Քրիստոսով մարդկանց հետ կնքեց վերջնական դաշինք: Եթե նախքան Քրիստոս մարդկանց հետ Աստծո կնքած «Հին ուխտը» միշտ արատավորվել է մարդու անհնազանդության պատճառով (հիշենք Ադամին, Նոյին, Մովսեսին, Դավթին), ապա Աստված Հիսուս Քրիստոսով Նոր Ուխտում ոչ միայն խոստանում է փրկության ուխտ՝ դաշինք կնքելով, այլ դառնում այդ փրկությունը իրականացնող: Փրկությունը իրականացավ Քրիստոսի կյանքով և մահվամբ, նրա տանջանքներով ու հարությամբ, իսկ թողություն ու հավիտենական կյանք կստանան նրանք, ովքեր կխնդրեն ու կհավատան: Ահա սա է վերջնական ու կատարյալ «Նոր Ուխտը», որի մասին խոսվում է Նոր Կտակարանում:

Նոր Կտակարանը սկսվում է Քրիստոսի ծնունդը ավետող ավետարաններից: «Ավետարան» բառը նշանակում է «Բարի լուր»: Եվ այդ լուրը Քրիստոսով աշխարհին բերված փրկության բարի լուրն էր: Քրիստոսի ծնունդի, սերնդաբանության գործունեության և Մեսիայի մասին են պատմվում չորս Ավետարաններում: Իսկ «Գործք առաքելոցում» պատմվում է առաքյալների կողմից Քրիստոսի Եկեղեցու ստեղծման ու հաստատման մասին:

Նոր Կտակարանի մեծ մաս են կազմում քրիստոնեական համայնքներին և նորաստեղծ Եկեղեցիներին ուղղված առաքելական թուղթ-նամակները: Նոր Կտակարանը եզրափակվում է Հովհաննու «Հայտնության» մարգարեական գրքով: Աստված իր լուրը շարադրելիս օգտվել է տարբեր տարիքի և սոցիալական պայ-

մանՆերում գտնվող մարդկանցից, որոնք ներշնչված ու մղված են եղել Աստծո Սուրբ Հոգով:

Քրիստոնեական եկեղեցին Աստվածաշունչը ընդունում է իբրև Աստծո խոսք և հավատում նրա զորությանը: Սուրբ Գրքի զորությունը կայանում է նրա ունեցած բացարձակ կարողության մեջ, քանի որ նրա միջոցով Աստված ինչպես անցյալում, այնպես էլ այսօր խոսում է մեզ հետ: Այն իր զորությունը չի կորցնում, եթե մենք ոչ թե կարդում, այլ լսում ենք:

Աստված մեկն է: Նա հոգևոր, հավերժ, անտեսանելի, անփոփոխ, անսահման, անհասանելի, ամենակարող, ամենագետ, շատ բարի, արդար և շատ ողորմած էություն ունի:

Աստված իրեն հայտնում է նախ իր գործերով՝ արարումով, պահպանմամբ, կառավարման եղանակներով, ապա նաև իր խոսքով, որն անվանում ենք Սուրբ Գիրք: Բոլոր գրքերը, որոնք ընդգրկված են Աստվածաշնչում, կանոնական են և դրանք մեր հավատքի հստակ կանոնն են Սուրբ Հոգու վկայությամբ ու ներքին համոզմունքով: Այդ գրքերի բովանդակված խոսքի հիմքում Աստվածն է: Այն իր մեջ խտացնում է Աստծո զորությունը: Նրա խոսքը բովանդակ ճշմարտության կանոնն է, քանի որ բովանդակում է այն ամենը, ինչ անհրաժեշտ է Աստծուն ծառայելու և մեր փրկության համար: Այդ իսկ պատճառով մարդկանց, անգամ հրեշտակներին թույլատրված չէ որևէ բան ավելացնել, կրճատել կամ փոխել: Այս բոլորից հետևում է մի միտք, որ ոչինչ չի կարող հակադրվել Ս. Գրքին, այլ հակառակ՝ ամեն բան պետք է հարմարեցվի, վերափոխվի, կարգավորվի և քննվի ըստ նրա:

Որոշ դավանաբանություններ, կրոններ միշտ չէ, որ Ս. Գրքի զորությունը կապել են Հիսուս Քրիստոսի զորության հետ: Հիսուս Քրիստոսը Աստծու խոսքն է, նրանով է Աստված ստեղծել ամեն բան, նրանով է դիմում մեղավորներին և հաշտվում նրանց հետ: Հիսուս Քրիստոսի քարոզները, նրա ողջ անձն ու մարդկության մեղքերի թողության միջնորդությունը Աստծու խոսքն է: Առանց Քրիստոսի նկատմամբ ունեցած հավատքի մենք չենք կարող հասկանալ ո՛չ Հին Ուխտի, և ո՛չ էլ նրա մարդեղության իմաստը: Իր երկրավոր կյանքի ժամանակ Քրիստոսն ընտրեց առաքյալներին և նրանց ուղարկեց մարդկանց մեջ՝ քարոզելու Աստծու թագավորությունը: Այս երևույթը՝ ընտրելու, կանչելու և ուղարկելու, հիշեցնում է հրեայական իրավաբանական shaliach հասկացությունը, ըստ որի առաքելություն ստացած անձը ներկայացնում է իրեն ուղարկողին և նրանից է ձեռք բերում իշխանություն: Հետևաբար Հիսուս իր առաքյալներին էր փոխանցել թե՛ իր իշխանությունը, և թե՛ Աստծո պատգամը: Առաքյալների խոսքի մեջ, նրանց հաղորդած պատգամի մեջ Քրիստոսն է խոսում, Աստծու կամքը կատարվում, Աստված է բացահայտվում:

Համբարձվելուց հետո էլ Քրիստոսը շարունակում է առաքյալներ ուղարկել, որոնց Սուրբ Հոգին օգնեց ավետելու Քրիստոսի խոսքը: Նրանց քարոզը, Սուրբ Հոգով առաջնորդված, մարդկանց համոզեց այն ամենում, ինչը վերաբերում էր մեղ-

քին, արդարությանն ու վերջին դատաստանին: Այդ իսկ պատճառով էլ առաքյալների թե՛ քարոզած, և թե՛ գրած խոսքը նույնքան զորեղ և ազդու է, որքան Քրիստոսինը:

Հին և Նոր Կտակարաններում Քրիստոսն ինքն է խոսում իր Եկեղեցու հետ, որի հիմքը առաքյալներն են: Քրիստոսը, որպես Աստծո խոսք, ներկայացել է, որպեսզի Աստվածաշնչի հեղինակները փոխանցեն այն ամենը որպես պատգամ, որը գալիք դարերի ընթացքում Եկեղեցին պետք է իմանար իր գոյության, վկայության և ծառայության մասին, որպեսզի լիներ Տիրոջն իսկապես հավատարիմ Եկեղեցի: Այն պետք է ոչ թե հարց բարձրացնի, այլ բերի համոզմունքներ: Կարդալով Աստվածաշունչը՝ մենք հանդիպում ենք Քրիստոսին, լսում նրա ձայնը, սփոփիչ խոսքերն ու հովվական հորդորները: Աստվածաշնչի միջոցով մենք հաղորդակցվում և միանում ենք նրա հետ (խորհուրդներով՝ Մկրտություն, Սուրբ Հաղորդություն, Ս. Պսակ, Թաղման կարգ և այլն):

Ամփոփելով ասենք, որ Ս. Գրքի զորությունը Քրիստոսի զորությունն է, քանի որ նրանց միջև անբաժանելի կենսունակ կապ գոյություն ունի: Աստվածաշնչի և Քրիստոսի տված վկայությունները իր անձի վերաբերյալ նույնն են: Քրիստոսով Աստծու խոսքը վերաբերում է մեր և աշխարհի փրկությանը, հաշտությանը և վերջնական հաստատմանը, որը կարող է իրականանալ Քրիստոսի միջոցով՝ ի փառս Հոր Աստծու:

Բ. Ընթերցման ոգին

Աստվածաշունչը անհրաժեշտ է ընթերցել ոչ թե որպես հետաքրքիր պատմություն հետազոտող կամ իբրև հին ձեռագրերի հավաքածուի ուսումնասիրող գիտնական, այլ այն պետք է կարդալ որպես Քրիստոսին հավատացող աշակերտ, որպես նրա կյանքի հաղորդակից Եկեղեցու անդամ, որը ձգտում է հասկանալ աստվածային պատգամի ուսմունքը: Այն պետք է ուսումնասիրել ամբողջությամբ, առանց անտեսելու Հին կամ Նոր Ուխտերը, և օգտվել այն թարգմանություններից, որոնք չեն քողարկում բնագիրը (ինչպես Եհովայի վկաների աստվածաշունչը), այլ հավատում են դրան: Աստվածաշունչը պետք է կարդալ շատ ակնածանքով, որը կարելի է հասկանալ ամբողջ խորությամբ և հիշել գլուխները ցանկության պարագային, կարդացած տողերի վրա խորհրդածելով մտքում, սրտում՝ Աստծո ներկայությունը յուրացնելու միջոցով: Նախքան կարդալը մեր հայրերը անհրաժեշտ են համարել աղոթել, որով Ս. Հոգին առաջնորդել և օգնել է՝ հասկանալու և լսելու Աստծո պատվիրանները: Կարդալու նպատակը պետք է լինի նաև սեփական հավատքի սնուցումը: Կարդանք՝ իմանալու համար, իմանանք Քրիստոսի կյանքով ապրելու սկզբունքները (Մատթ. Դ 4): Քրիստոնյա լինելով պետք է հոգով զգանք, որ մեկ մասնիկն ենք նրա հիմնած Եկեղեցու կազմի մեջ, և նրա պարգևած հոգևոր կյանքը

մարմնից և հոգուց անկախ չի կարող բնականոն զարգանալ: Այդ իսկ պատճառով պետք չէ գոհանալ լոկ Աստվածաշունչը ինքնուրույն ընթերցելով, այլ դրա հետ միաժամանակ քրիստոնյային անհրաժեշտ է ամրացնել կապը Եկեղեցու հետ և օգտվել Եկեղեցու առաջարկած բոլոր այն միջոցներից, որոնք կօգնեն ավելի լավ հասկանալ Սուրբ Գիրքը: Այդ միջոցները սրբազան պաշտամունքներն են՝ ծեսերով և քրիստոսավանդ սովորություններով զարդարված:

Գ. Աստվածաշնչի այժմեականությունը եկեղեցում

Ասացինք, որ Աստվածաշունչը, լինելով իր նմանը չունեցող հոգևոր բնագրերի ժողովածու, չի կորցրել իր այժմեականությունը: Դա պայմանավորված է նրանով, որ Աստվածաշունչը չի սահմանափակվում միայն նկարագրելով այն բոլոր հնարավոր իրավիճակները, որոնցում կարող է հայտնվել մարդը, այլ մատնանշում է աշխարհ եկող յուրաքանչյուր մարդու վերաբերմունքը Աստծո նկատմամբ:

Դրա այժմեականությունը փաստող ամենագերազանց վայրը քրիստոնեական Եկեղեցին է, որի գործունեության հիմքում ընկած է Աստվածաշնչի ուսուցումը, քրիստոնյա պատրաստելու առաքելությունը: Հավատացյալները անհատապես կամ ընտանյոք ընթերցում և խորհրդածում են դրա բովանդակության մասին՝ ստանալով ուժ, ներշնչանք, լույս, հոգու սնունդ, Քրիստոսով՝ նոր կյանքով ապրելու նկարագիր:

Այսօր հասարակական բարոյագիտության մեջ պրոբլեմներ են ծագում քրիստոնեական գիտակցության և ժամանակակից մտածելակերպի մեջ (մահվան հեշտացում, արհեստական վիժումներ, սեռական սանձարձակություն): Այս խառնաշփոթի մեջ միակ ճշմարիտ խորհրդատուն և ուղեցույցը, իհարկե, մնում է Աստվածաշունչը: Աստծո կողմից տրված 10 պատվիրանները և Քրիստոսի բերած ընկերային հարաբերությունները զոդող սկզբունքները որպես ուղեցույց են ոչ միայն Եկեղեցուն, այլ նաև աշխարհի ամբողջ մարդկությանը: Աստվածաշնչում մենք կգտնենք ճշգրիտ կանոններ բոլոր դավանանքների պատկանող մարդկանց, նրանց տնտեսագիտության, քաղաքակրթության, նաև մշակութային ոլորտների վերաբերյալ: Այսինքն՝ Աստվածաշունչը ի զորու է այսօր էլ մեզ օգնելու ճանաչելու աշխարհը և կողմնորոշվելու, ինչպես արտահայտվել է մի աստվածաբան. «Աստծուն ճանաչելով՝ ինքներս մեզ ենք ճանաչում»: Ուրեմն այս ամենից կարելի է եզրակացնել, որ Ս. Գիրքը յուրաքանչյուր դարաշրջանի, յուրաքանչյուր նոր սերնդի համար տալիս է կատարյալ և գործնական գիտելիքներ ինքնահաստատման-աշխարհաճանաչման և ընկերային հարաբերությունների կարգավորման, անհատական փրկության հասնելու համար:

Ս. Գրքի ընթերցման ժամանակ խիստ անհրաժեշտ է զգալ Ս. Հոգու ներկայությունն ու առաջնորդությունը: Եթե հավատացյալը հոգով ներթափանցում է Ս. Գըր-

քի մեջ. ապա թույլ է տալիս, որ այն ամբողջապես իշխի իր մտածողության վրա՝ վերափոխելով իր մտածելակերպը: Աստծո խոսքը կարող ենք հասկանալ միայն այս դեպքում:

Ինչպես ասվեց, Ս. Գիրքը տարբեր իրավիճակներում և ժամանակներում գրված գրքերի ժողովածու է, որի հեղինակը Աստված է, որն ունի եզակի ներգործություն:

Ս. Գրքի մեկնիչը իր դատողությունները երբեք չպետք է կառուցի այնպես, որ հակադրվի տեքստին և բովանդակությանը: Այդ իսկ պատճառով նա Ս. Գրքին պետք է մոտենա հավատով և համակրանքով:

Եթե Աստվածաշունչը ընթերցվի աղոթքի ու հավատքի ոգով, դրա ամեն մի խոսքը կընկալվի որպես Աստծո խոսք:

ԵՎՄԵՆԻ ՎԱՐԴԱՊԵՏ

ԵՍԱԿԵՆՏՐՈՆՈՒԹՅՈՒՆ (ԷԳՈՑԵՆՏՐԻԶՄ)*

Վանքերում և համայնքներում շատ հաճախ կարելի է հանդիպել մարդկանց, որոնք այն վստահ համոզումն ունեն, որ իրենցից բացի չկա մեկը, ով այդքան ուժեղ աղոթաներ և իրենցից ավելի դժբախտ լիներ: Նրանց ուրիշների տառապանքների մասին պատմելը միանգամայն դատարկ բան է: Եվ եթե այսպիսի տրամադրությամբ մեկը հայտնվում է հովվի խնամակալության ներքո, ապա առավորաբար մեծ ջանք է պահանջվում նրան հանգստացնելու և համոզելու՝ իր մշտական նվնվոցով համայնքային մթնոլորտը և կամ վանքի կյանքը չթունավորելու համար: Եսակենտրոն տրամադրվածություն ունեցող մարդկանց անմիջապես կարելի է ճանաչել «ես», «իմ» դերանունների և իրենց ներքին ապրումների ծանրությունը մանրամասնորեն նկարագրող ածականների հաճախակի գործածությամբ:

Նրանց հետ զրուցելիս տպավորություն է ստեղծվում, թե նրանք ամբողջովին ներփակված են իրենց տառապանքներից, միջադեպերից և վիրավորանքներից հյուսված կեղևի մեջ: Նրանք չեն կարողանում դուրս գրծնել այդ կեղևից, իսկ արտաքին աշխարհը հաղորդակցվում է նրանց հետ՝ իրենց արատավոր ապրումների բազմիցս խճճված հյուսվածքի միջով:

Արտաքին աշխարհի իրականությանը վերադառնալու իրենց շրջադարձային կետը՝ այդ եսակենտրոն կեղևը տապալելու փորձն է: Եթե մարդը տեսնի ուրիշների՝ իրենից ավելի դժբախտների տառապանքը, ապա կարելի է եզրակացնել, որ հաստատվել է նրա եսակենտրոն տրամադրության բեկման պահը, և նա կսկսի ավելի քննադատաբար մոտենալ սեփական անձին:

«Եսակենտրոն մարդն իր համար, իր հարմարության և իր շահի համար ձգտում է օգտագործել աշխարհը, ընդ որում՝ նաև երկինքը»:

---

* **Игумен Евмений.** Пастырская помощь душевнобольным, (Свет православия, 1999, № 48, стр. 71-76).

Եսակենտրոնությունը կարող է ոչ միայն ճնշել, այլև գրգռել շրջապատի մարդկանց և որոշակի կերպով խոցել նրանց: Յուրաքանչյուր մարդ անհատականություն է, սակայն ներքին աշխարհների համագումարն է, որ ստեղծում է հասարակությունը, մեր պարագայում՝ Եկեղեցու հասարակությունը: Հասարակական հարաբերությունները պահանջում են որոշակիորեն հրաժարվել անձնական կարիքներից և մասնակից լինել մերձավորների կարիքներին: Եթե մարդը չափից ավելի շրջափակվում է իր ապրումների և դժվարությունների մեջ, ապա նա կարող է հայտնվել ուրիշների հետ հաղորդակցության շրջանակից դուրս՝ լիակատար մենության մեջ:

Յուրաքանչյուր մարդու կյանքում էլ լինում են վիրավորանքներ, միջադեպեր, տարբեր դրական և բացասական զգացմունքների արտահայտություններ: Եսակենտրոն մարդկանց առանձնահատկությունը, սակայն, այն է, որ նրանք *մշտապես ընդգծում են իրենց տառապանքների և ապրումների տարբերությունը* և այդպիսով մշտապես իրենց վրա ուշադրություն դարձնել տալիս:

Խոստովանահայրը և մտերիմ մարդիկ նրանց խորհուրդ են տալիս. «Խելքդ գլուխդ հավաքի՛ր», «Ամենքի հետ էլ այդպիսի բան պատահում է», կամ «Չպե՛տք է միայն քո մասին մտածես», սակայն նման խորհուրդները այսպիսի մարդկանց չեն օգնում, իսկ երբեմն էլ ավելի ջարացնում և ներփակվել են ստիպում:

«Հոգեբանություն» գիտության մեջ հայտնի է «տեղափոխություն» կոչվող մեխանիզմը, որի արտաքին դրսևորումները կարող են գրավել հովվի ուշադրությունը: Իր կյանքի ճանապարհին հոգատար և արթուն խոստովանահայր ձեռք բերող մարդը մի տեսակ նահանջ (ռեգրեսիա) է կատարում դեպի «մանկական» վիճակն ու վարվեցողությունը: Ուրախությամբ ընդունելով իր վրա խոստովանության բեռը վերցրած մարդու հոգևոր խնամքը՝ նա որոշ ժամանակով գրավում է «վերցնում եմ» դիրքը: Այդ իսկ պատճառով հոգեխնամության մի պահին հովիվը պետք է պատրաստ լինի խնամվողի կողմից իր հանդեպ որդիական զգացմունքների արտահայտմանը: Որոշ պարագաներում, սակայն, այս հարաբերությունը կարող է արտահայտվել իբրև մանկական եսակենտրոնություն և գերազանցի թույլատրելի բոլոր սահմանները: Բանը հասնում է մինչև հոգևորականին միանգամայն անպատշաճ պահանջներ ներկայացնելը:

Մեղսական եսակենտրոնությունը սովորաբար արտահայտվում է այսպիսի բառերով. «Ինձ ոչ ոք չի հասկանում», «Ոչ ոք ինձ չի ուզում օգնել», «Բոլոր հոգևորականներն էլ նույնն են», «Խոստովանահայրը դաժան և անմարդկային է»: Ընդ որում խոստովանահոր կամ այլ մարդկանց բոլոր դրական դրսևորումներն այդ պահին ամբողջովին մոռացվում են:

Եսակենտրոն մարդն այս աշխարհում իրեն անվստահ է զգում՝ շրջապատող բոլորին ավելի առողջ ու երջանիկ համարելով: Նա ուշադրություն և ըմբռնում է պենջում մարդկանցից, մշտապես ակնկալում է իր կյանքին, հոգեվիճակին և առողջությանը վերաբերող մտահոգ հարցեր: Եթե օրվա ընթացքում նա որոշակի քանակությամբ այդպիսի հարցեր չի ստանում, եթե նա հնարավորություն չի ունենում որոշա-

կի թվով մարդկանց պատմել իր դժբախտության մասին, ապա իր օրն ավարտվում է կատարյալ անհաջողությամբ և ճնշվածությամբ:

Այսպիսի մարդկանց շփումներն արտաքին աշխարհի հետ միշտ էլ ցավագին են: Չէ՞ որ այսպիսի մարդն, ի տարբերություն մարմնապես հիվանդի, որի մոտ հիվանդ է միայն մեկ անդամը՝ ձեռքը, ոտքը կամ գլուխը, հիվանդ է ամբողջությամբ: Իր հոգեկան վիճակն այնպիսին է, որ հոգում կարծես բացակայում է այն մասը, որը նրա թշվառ վիճակում կարող էր իր առողջ հենարանը լինել:

Մեղսական եսակենտրոնությունը կարող է դառնալ մարդու կենսական դիրքորոշումը: Հիվանդության զգացումը ժամանակի ընթացքում փիրում է իր ողջ մարմնին: Մարդն սկսում է միայն սեփական անձով զբաղվել: Նա ժամանակ չի ունենում ոչ ոքի հետ և ոչնչով զբաղվելու, քանի որ իր շփումներն ուրիշ մարդկանց հետ դժվար են և ցավագին:

Երբեմն այսպիսի մարդուն թվում է, թե նրա վրայից քերթել են կաշին, ամեն ինչ նրան խոցում է. քանզի յուրաքանչյուր հարաբերություն, յուրաքանչյուր հանդիպում պետք է անցնի իր հոգու միջով, իսկ այն վիրավոր և հիվանդ է:

Մեղսական եսակենտրոնությունը հատկապես ուժեղ է գրգռում շրջապատին՝ նրանց ճնշող մթնոլորտի մեջ զցելով: Անհնար է ապրել լիարժեք կյանքով, ունենալ նպատակ և ձգտել դրան հասնել, եթե քեզ մշտապես հիվանդ ես զգում: Իրեն հիվանդ զգալով՝ մարդն ի վիճակի չէ կենտրոնանալ, ի վիճակի չէ ոչինչ անել: Թեև եթե հոգևորականը նրան բժշկի մոտ ուղարկի, ապա առարկայական սպուգման ժամանակ վերջինս ախտաբանական ոչ մի շեղումներ չի հայտնաբերի՝ ոչ մարմնում, ոչ էլ հոգե-կլինիկական համակարգում:

Ո՞րն է, ուրեմն, այս մեղսական եսակենտրոնության զգացումը, որը սպիպում է մարդուն զբաղվել միայն իրենով՝ իր փառասանքներով, և որը մեկուսացնում է նրան բնականոն կյանքից: Եսակենտրոնության պատճառը սեփական «Ես»-ի ապրումն է: *«Ես հիվանդ եմ,- սովորաբար ասում է այսպիսի մարդը,- ինչ եք կպել ինձանից, ինչ եք ուզում ինձանից»*:

Մեղսական եսակենտրոնությունն արտահայտում է բողոք ընդդեմ Աստծու նախախնամության և ընդդեմ սեփական կյանքի: Նրանում պարունակված է հարձակում (ագրեսիա) սեփական անձի և ամբողջ աշխարհի նկատմամբ: Եսակենտրոնությունը էգոիզմ չէ, որի ժամանակ սեփական իրավունքների համար պայքար է մղվում հաճախ ուրիշ մարդկանց հաշվին: Եսակենտրոնության պարագային վերաբերմունքը սեփական անձի նկատմամբ երկակի է. «Սիրում եմ» և «Ատում եմ» միաժամանակ: Չափից ավելի հիվանդագին զգացմունքային այս զուգակցությունն ի հայտ է գալիս այն պատճառով, որ մարդու զգացմունքներն իրենց դուրս գալու պահին շրջափակվում են:

Հովվի՝ եսակենտրոն մարդկանց հետ հարաբերության ընթացքում կարևոր է հասկանալ նրանց՝ իրենց մտերիմ մարդկանց հետ զգացմունքային բախման էու-

թյունը: Մերձավորների հանդեպ բացասական զգացմունքների լիցքաթափումը, անվերջ բողոքները, թե՝ «Որքան նրանք անզգա են», հոգևորականի հետ զրույցի ժամանակ որոշակի թեթևության զգացում է պարգևում այս մարդկանց:

Հաճախ կարելի է հանդիպել մարդկանց, որոնք փառապում են մեղսական եսակենտրոնությամբ և գալիս են հոգևորականի մոտ, որպեսզի դուրս թափեն վիրավորանքը, դառնությունը, զայրույթն ուրիշ եղբայրների կամ քույրերի նկատմամբ: Եվ հենց որ վիրավորանքը դուրս է թափվում, նրանց վիճակը նկատելիորեն լավանում է, թեև այդ պահին նրանց մոտ չի առաջանում միջադեպում մեղքի իրենց բաժին ունենալու գիտակցությունը:

Հոգևորականի հետ պարբերաբար խաղաղ-վստահավատ հարաբերության ժամանակ եսակենտրոնական տրամադրությունը կարող է նվազել, որից հետո ի հայտ կգա ավելի անաչառ կարծիք սեփական անձի մասին:

Եսակենտրոնությունը, հակառակ ձևավորված կարծիքի, չի կրում ինքնասիրահարվածության գծեր: Սեփական «Ես»-ը, որով մարդը մշտապես տարված է և պահանջում է բոլորից, որպեսզի իրենք նույնպես ուշադրություն դարձնեն իր վրա, չի արժևորվում իբրև հաճելի զգացումների աղբյուր, այլ անհանգստություն և հակասական զգացմունքներ է առաջացնում, որոնցում գերիշխում են բացասական զգացմունքները: Սեփական անձի նկատմամբ զգացմունքային որոշակի կայունությունը, որն առաջ է գալիս զգացմունքների և հոգեկան վիճակի կարգավորման միջոցով՝ իմաստուն և սիրող հոգևորականի հետ շփումից հետո, ազդում է եսակենտրոն մարդու՝ շրջապատի հանդեպ իր զգացմունքային հարաբերության դրական փոփոխության վրա: Եթե մարդն ինքն իր հանդեպ գտնվում է ճիշտ հարաբերության մեջ, նրա համար ավելի հեշտ է սիրել ուրիշ մարդկանց: Եվ այդ պատճառով այսպիսի մարդկանց անհրաժեշտ է լինում հաճախ զգուշացնել, որ *սիրիր մերձավորդիդ* կարելի է միմիայն, անպայմանորեն, սեփական անձդ, քո միջի լավագույնը, հոգևորը, աստվածապարգևը սիրելու միջոցով: Այսպիսով, մեղսական եսակենտրոնությունն իրենից ներկայացնում է սեփական անձի նկատմամբ ճիշտ հարաբերության խախտում:

Մեղսական եսակենտրոնությամբ տառապող մարդու համար, տարածության և ժամանակի մեջ չափման կենտրոնական կետը սեփական «Ես»-ն է: Եվ այդ կետից է հաշվվում ժամանակի և տարածության հեռավորությունը:

Իրականում սեփական անձի նկատմամբ այսպիսի հարաբերությունը վտանգի տակ է դնում մարդու թե՛ հասարակական, և թե՛ կրոնական կյանքը: Դժվար կացության մեջ այսպիսի մարդը ընտրում է իր «Ուզում եմ»-ը, «Դժվար է»-ն, որոնք իր մոտ գերիշխում են այս կամ այն «պետք է»-ների, «անհրաժեշտ է»-ների նկատմամբ: Սեփական անձը «Երկրի կենտրոն» զգալը այնքանով է զորեղ, որքանով որ «Վերցնում եմ» վիճակը գերիշխում է «Տալիս եմ» վիճակի նկատմամբ:

Առաջին պարագայում թվում է, թե շրջակա աշխարհը «տալիս է», կատարում է մարդու բոլոր ցանկությունները, ծառայում է նրան: Երկրորդի դեպքում՝ շրջակա աշխարհը, ընդհակառակը, ներկայանում է իբրև մի աշխատակից, որից չի կարելի մի-

այն «վերցնել», սակայն որին կարելի է անձնականից ինչ-որ բան տալ՝ այսպիսով հաղթահարելով մեղսական եսակենտրոնությունը: Եթե եսակենտրոն մարդն արտաքին աշխարհում սկսի ճանաչել հարազատներին, իր նման ուրիշ մարդկանց, ապա նա անպայմանորեն հավասարակշռություն ձեռք կբերի «Վերցնում եմ»-ի և «Տալիս եմ»-ի միջև:

Եսակենտրոն մարդու հարաբերությունները շրջակա աշխարհի հետ հարկավոր է ուղղորդել ըմբռնման, սիրո, համագործակցության, հարաբերություններ կառուցելու անհրաժեշտության գիտակցության և եսակենտրոն մեղսական վիճակների նվազեցման վրա: Եսակենտրոն լարվածությունը նվազեցնող ևս մի գործոն կարող է լինել ստեղծված փակուղուց ելքի ուղիներ փնտրելը: Մեղսական եսակենտրոնությամբ տառապող որոշ մարդկանց մոտ տպավորություն է առաջանում, թե իրենք ինչ-որ մի փակուղու մեջ են հայտնվել: Հովիվը պետք է հմուտ և զգոն կերպով մարդու սրտի ընկալման մեջ ներարկի այն գիտակցությունը, որ ցանկացած փակուղի կանգառ է հաջորդ, թերևս ավելի բարձր աստիճանի առջև: Սակայն եթե մարդը հաշտվի այդ փակվածության հետ, ապա դա կլինի վար իջնող մի աստիճան: Այս վիճակում ցանկացած ստեղծագործական աշխատանք, թեկուզև *մարմնական հնազանդության* սահմաններում, նվազեցնում է եսակենտրոն վիճակը և ծառայության միջոցով հեշտացնում մարդու ելքը մեղսական եսակենտրոնության վիճակից: Արդ, նախ մարմնական, արտաքին ծառայություն, ապա և՝ մարդկային կարեկցանք ուրիշ մարդկանց կյանքերում:

Եսակենտրոն մարդկանց օգնելու համար հովվին անհրաժեշտ է մեծ համբերություն և ջանասիրություն: Միայն մեղսական եսակենտրոնության կեղևից դուրս գալուց հետո մարդը կարող է ձեռք բերել այս աշխարհում իր առաքելության և Աստծու ու մերձավորների հանդեպ իր հարաբերությունների ճշմարիտ ըմբռնումը:

Ռուսերենից թարգմանեցին՝

Տ. ՄԿՐՏԻՉ ԱԲԵՂԱ ՊՈՈՇՅԱՆԸ
և Տ. ՎԱՉԳԵՆ ԱԲԵՂԱ ՆԱՆՅԱՆԸ

1700-ԱՄՅԱԿ

ԷՋՄԻԱԾԻՆ*

Էջմիածնի 1700-ամեակին առնչուած եւ Գարեգին Բ Վեհափառին ձօնուած այս երգի խօսքերը քաղուած են Յովհաննէս Յովհաննիսեանի «Սուրբ Էջմիածին» ոտանաւորից.
Երաժշտութիւնը՝ Կոմիտաս Գէորգեանի:

Փարիզ-Երեւան 2000



* «Էջմիածին» երգը քառաձայն խառն երգչախումբի համար՝ դաշնակի ընկերակցութեամբ:


Քո ոյժմն ամն - շարժ ու ամն - սա - սամն, Էշ - մի - ա - ծին,
Քո ոյժմն ամն - շարժ ու ամն - սա - սամն, Էշ - մի - ա - ծին,
Էշ - մի - ա - ծին,
Էշ - մի - ա - ծին,


Էու - սա - տոր - շի տն - սի - թից ծը - ցուցող ա - ռած,
Էու - սա - տոր - շի տն - սի - թից ծը - ցուցող ա - ռած,
Էու - սա - տոր - շի տն - սի - թից ծը - ցուցող ա - ռած,
Էու - սա - տոր - շի տն - սի - թից ծը - ցուցող ա - ռած,


S
A
T
B


S
A
T
B

S
Դու Շո - դա - կաթ լու - սոյ խո - բաց, Էջ - մի - ա - ծին:

A
Դու Շո - դա - կաթ լու - սոյ խո - բաց, Էջ - մի - ա - ծին:

T
Դու Շո - դա - կաթ լու - սոյ խո - բաց, Էջ - մի - ա - ծին:

B
Դու Շո - դա - կաթ լու - սոյ խո - բաց, Էջ - մի - ա - ծին:

S
որ - սէս կաց - թեղ,

A
որ - սէս կաց - թեղ,

T
Խա - տա - բի մեջ դու վառ - ե - ցար որ - սէս կաց - թեղ,

B
Խա - տա - բի մեջ դու վառ - ե - ցար որ - սէս կաց - թեղ,


S
A
T
B
32


S
A
T
B
41
Գրի - գո - ի սուրբ օրհ - նու - թեամբ ծաղ - կիր խա - ղաղ,
Գրի - գո - ի սուրբ օրհ - նու - թեամբ ծաղ - կիր խա - ղաղ,
Գրի - գո - ի սուրբ օրհ - նու - թեամբ ծաղ - կիր խա - ղաղ,
Գրի - գո - ի սուրբ օրհ - նու - թեամբ ծաղ - կիր խա - ղաղ,


Աչ - շէջ վա - բաս մեր հա - տատ - քի, Էջ-մի - ա - ծին:
Աչ - շէջ վա - բաս մեր հա - տատ - քի, Էջ-մի - ա - ծին:
Աչ - շէջ վա - բաս մեր հա - տատ - քի, Էջ-մի - ա - ծին:
Աչ - շէջ վա - բաս մեր հա - տատ - քի, Էջ-մի - ա - ծին:


Գրի - գո - ի՛ սուրբ օրհ - նու - թեամբ ծաղ - կեր խա - դաղ,
Գրի - գո - ի՛ սուրբ օրհ - նու - թեամբ ծաղ - կեր խա - դաղ,
Գրի - գո - ի՛ սուրբ օրհ - նու - թեամբ ծաղ - կեր խա - դաղ,
Գրի - գո - ի՛ սուրբ օրհ - նու - թեամբ ծաղ - կեր խա - դաղ,



Դարեր եկան, դարեր անցան, Էջմիածին,
Քո հիմն անշարժ ու անսասան, Էջմիածին,
Լուսաւորչի տեսիլքից ծնունդ առած,
Դու Հողակաթ լուսոյ խորան, Էջմիածին:
Խաւարի մէջ դու վառեցար որպէս կանթեղ,
Վառ պահեցիր մեր սրտերում կայծն երկնային,
Գրիգորի սուրբ օրհնութեամբ ծաղկիր խաղաղ,
Անշէջ փարոս մեր հաւատքի, Էջմիածին:
Գրիգորի սուրբ օրհնութեամբ ծաղկիր խաղաղ,
Փառք, ապաւէն մեր անսասան, Էջմիածին:

ԷՋՄԻԱԾԻՆ**

Էջմիածնի 1700-ամեակին առնչուած եւ Գարեգին Բ Վեհափառին ձօնուած այս երգի խօսքերը քաղուած են Յովհաննէս Յովհաննիսեանի «Սուրբ Էջմիածին» ոտանաւորից.
Երաժշտութիւն՝ Կոմիտաս Գէորգեանի:
Փարիզ-Երեւան 2000



** «Էջմիածին» երգը մեներգիչի համար՝ դաշնակի ընկերակցութեամբ:


Ամ - շարժ ու ամ - ուս - ուած, Էջ - մի - ա - ծին,


Լու - սա - ւոր - շի սուս - նիկ - ներ ծր - ճուճդ ա - ռած,


Դու ծա - դա - կաթ լու - սոյ խո - թաց, Էջ - մի - ա - ծին:


Լու - սա - ւոր - շի սուս - նիկ - ներ ծ - ճուճդ ա - ռած,


Դու Ծո - զա - կաք լու - սոյ խո - սաց, Էջ - մի - ա - ծին։
խա - ղա - յի մէջ դու վաղ - ա - ցար որ - պէս կաց - թեղ,
վաղ պա - հա - ցին մեր սր - տա - սում կայնի երկ - նա - յին,
Գոհ - զա - յի սաթը երգ - ում - ՝ ձեռքդ ձաղ - կիր թա - ղող,


Ամ - շէջ գա - ղտ մեր ծա - սատ - ին, Էջ - մի - ա - ծին:
Գրի - գո - ին սուրբ օրհ - նու - թեամբ ձաղ - կիր խա - դաղ,
Փառք, ա - պա - ւէն մեր ամ - ա - սամ, Էջ - մի - ա - ծին:

ԷՋՄԻԱԾԻՆ***



***«Էջմիածին» երգը մեներգիչի համար՝ նուագարանային ընկերակցությամբ:

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

ԱՆԱՏՈԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀՈՐԻՆՎԱԾՔԸ

Մայր Տաճարի և նրա ճարտարապետական ձևի խնդիրներին անդրադարձել են բազմաթիվ ճանապարհորդներ, հայագետներ և հայ ճարտարապետության պատմության ուսումնասիրությամբ զբաղվող գրեթե բոլոր գիտնականները: Այդ ուսումնասիրությունների արդյունքը եղավ այն, որ արտահայտվեցին բազմաքանակ, հակամետ ու իրարամերժ կարծիքներ: Բայց միաժամանակ նրանք բոլորն էլ նշել են Մայր Տաճարի բացառիկ տեղն ու դերը հայ և ընդհարապես քրիստոնեական ճարտարապետության պատմության մեջ: Մայր Տաճարը վաղ միջնադարի այն եզակի հուշարձաններից է, որի հիմնադրման օրից ի վեր պատմական և մատենագրական բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ մինչև 17-րդ դարը հասած տեղեկությունները սակավ են և կցկտուր, որոնք, բայց և այնպես, հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում կազմելու Մայր Տաճարում կատարված փոփոխությունների մասին: 5-րդ դարի պատմիչ Ագաթանգեղոսի կողմից Մայր Տաճարի սկզբնական հորինվածքի նկարագրությունը և նրա կառուցումը Գրիգոր Լուսավորչին վերագրելը ոչ մի դեպքում կասկածի տեղիք չի թողնում, որ այն հավաստի է: Այսուամենայնիվ վաղ միջնադարի հայ պատմիչների տեղեկությունները այլ տեսակետ արտահայտելու հիմքեր չեն տալիս: Ժողովրդական ավանդությունը ևս համընկնում է Մայր Տաճարի մասին հայ պատմիչների հայտնած տեղեկությունների հետ:

Այսպիսով, ըստ պատմական տեղեկությունների և ժողովրդական ավանդության, Մայր Տաճարը Գրիգոր Լուսավորչի կառուցածն է և իր հատակագծային ու

ծավալատարածական հորինվածքով (ի բացառյալ գմբեթի) հիմնադրման օրվանից վերաշինական կամ սկզբունքային որևէ փոփոխության չի ենթարկվել: Այս տեսակետը իշխող է եղել մինչև 19-րդ դարի վերջը:

20-րդ դարում, հայ ճարտարապետության գիտական հետազոտության հենց սկզբից, գիտական միտքը անհիմն կերպով մերժեց մինչ այդ գոյություն ունեցած տեսակետը և պնդեց, որ լուսավորչաշեն կառույցը վաղ միջնադարում քանդել են և կառուցել նորը: Միաժամանակ որդեգրվեց այն տեսակետը, որ հայ եկեղեցական ճարտարապետությունը սկսել է պարզից և ընթացել քայլ առ քայլ՝ բարդացման ճանապարհով[1]: Ելնելով այս տեսակետից, Մայր Տաճարի՝ Ագաթանգեղոսի նկարագրած հատակագծային ձևը համարվեց բարդ և մերժվեց այն: Դրա հետևանքով ստեղծվեց կոահումների, վարկածների, ենթադրությունների մի անվերջ շղթա, որն ավելի մշուշոտ և անորոշ դարձրեց Մայր Տաճարի ներկայիս հորինվածքի և կառուցման ճշգրիտ ժամանակի հարցը: Այժմ բազմաթիվ գիտական կարծիքներից առավել ընդունված է այն տեսակետը (Ալ. Սահինյան, Ստ. Մնացականյան և այլք)[2], որի համաձայն Վահան Մամիկոնյանը քանդել է լուսավորչաշեն Կաթողիկեն և կառուցել նորը: Եվ, ըստ նրանց, այս նորն է հասել մեզ: Դրա համար նրանք նախ անտեսում են Ագաթանգեղոսի պատմության մեջ բերված փաստերը, այնուհետև հիմնվում երկու այլ փաստարկի վրա. Ա) փորձում են Ղազար Փարպեցու Կաթողիկեի նորոգման մասին վկայությունը մեկնաբանել իբրև Վահան Մամիկոնյանի կողմից Մայր Տաճար վերաշինելու, նոր տաճար կառուցելու փաստ, և Բ) տաճարի ներսում պեղումների (1955, 1956, 1959) հետևանքով հայտնաբերված շենքի մնացորդները համարում են լուսավորչաշեն տաճարի քանդված լինելու վկայություն: Հակառակ տեսակետ է պաշտպանում Արվեստի ինստիտուտի աշխատակից, ճարտարապետ Վահագն Գրիգորյանը: Ըստ նրա, այսօրվա Մայր Տաճարը Գրիգոր Լուսավորչի կառուցածն է[3]: Միջին տեսակետ է պաշտպանում ճարտարապետ Արմեն Զարյանը: Նա մի կողմից համաձայն է, որ Կաթողիկեն ըստ Ագաթանգեղոսի, գմբեթավոր է կառուցվել, մյուս կողմից համամիտ է Ալ. Սահինյանի տեսակետին, որի համաձայն Կաթողիկեն խաչաձև է դարձել 480-ական թվականներին՝ Վահան Մամիկոնյանի վերակառուցման ժամանակ[4]: Այժմ փորձենք պարզել, թե ինչ հորինվածք է ունեցել Գրիգոր Լուսավորչի կառուցած եկեղեցին: Ձեռնադրվելու համար, մինչև Կեսարիա մեկնելը, Գրիգոր Լուսավորիչը, ըստ Ագաթանգեղոսի, տեսիլք է տեսնում, որով Աստված աստվածային պատգամներով իր Միածնին լուսե-

---

[1] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942, հատ. Ա, էջ 243:

[2] ՊԲՀ, № 3, 1966, էջ 61-93, ՊԲՀ, № 1, 1987, էջ 147-158:

[3] Լրաբեր հասարակական գիտությունների, № 7, 1986, էջ 77-85:

[4] Վաղարշապատ, Վենետիկ, 1998, էջ 131:

ղեն կերպարանքով ուղարկում է Խրլիդ. որպեսզի նա Գրիգոր Լուսավորչին ցույց տա Կաթողիկե եկեղեցու կառուցման տեղը և նրա հորինվածքը[5]: Ագաթանգեղոսի հաստատում. Աստծու նմանությունները ոչ թե նյութական կերպարանքներ են. այլ անցողիկ տեսիլքներ. «Քանզի եւ Մովսիսի նմանութիւն օրինակաւ տարրական խորանի ցուցաւ. ըստ որում կազմեաց խորան նիւթական. եւ Եզեկիէլի՝ տաճար. օրինակ տաճարի: Նոյնպէս եւ առաջին մարդոյն նմանութիւն անտարրական մարդակերպ երեւեալ Աստուծոյ. զի արասցէ մարդ ի տարրական նիւթոյ՝ մերձաւոր ճշմարտութեանն»[6]:

Այսպես էլ Գրիգոր Լուսավորիչը. որպես Հայոց աշխարհի մարգարե. Աստծո կողմից տեսիլք տեսավ. որտեղ նրան ցույց տրվեց Կաթողիկե եկեղեցու աննյութական տարրերից կազմված պատկեր-նախագիծը: Այսպիսով Միածինը ոսկե ուռը ձեռքին իր աստվածային զորությամբ եկավ հաստատելու մի շինություն, որի հիմքը անապականությունն էր. իսկ նյութը՝ հուրը, լույսը, ամպը[7]:

Այդ հորինվածքը, ըստ Ագաթանգեղոսի, ունեցել է հետևյալ պատկերը. «Եւ ի չորեցունց սեանցն ի վերայ խաչիցն կամարք զարմանատեսք ի միմեանս կապեցան եւ ի վերայ այնորիկ տեսի գմբեթաձեւ խորանարդ ամպեղէն շինուած աստուածակերտ զարմանալի»[8]:

Տեսիլքում որոշակի է պատկերի ընդհանուր ձևը՝ խաչաձև կամարներով միմյանց կապված չորս սյուն. վրան՝ գմբեթ: Այստեղից պարզվում է. որ տեսիլքում ներկայացրածը քառամույթ գմբեթավոր կառույց է և համապատասխանում էր Կաթողիկեի պատկերին: Այնուհետև, ըստ Ագաթանգեղոսի՝ «Եւ թագաւորաւն եւ ամենայն ժողովրդովքն հանդերձ երթեալ հասանէր անդէն ի տեղին ցուցեալ հրեղէն սեանն ոսկիակալ խարսխին, եւ անդէն բարձր քաղաքաորմով փակեալ զտեղին ի պատիւ, եւ դրամբք եւ դռնափակօք ամրացուցեալ, եւ կանգնեալ եւ անդ զնշան փրկչական խաչին»[9]: Այսպիսով, Տրդատ արքայի և ժողովրդի ուղեկցությամբ Գրիգոր Լուսավորիչը գնաց ցույց տրված տեղը և այն բարձր պարսպով պատեց, դռներով ու փականքներով ամրացրեց և կանգնեցրեց փրկչական խաչի նշանն:

Սակայն քրիստոնեությունը պետական կրոն հռչակումից հետո Վաղարշապատի Կաթողիկեն Հայաստանում կառուցված առաջին եկեղեցին չէր: Հունական վարքի համաձայն, Կեսարիայի Ղևոնդիոս արքեպիսկոպոսը 23 եպիսկոպոսների ներկայությամբ Գրիգոր Լուսավորչին հանդիսավոր արարողությամբ եպիսկոպոս ձեռնադրելուց հետո՝ Կեսարիայի եպիսկոպոսների համաձայնությամբ գահակալա-

---

[5] Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց. Տփղիս, 1909, էջ 383-392:

[6] Նույն տեղը. էջ 170:

[7] Նույն տեղը. էջ 179-180, 277-278:

[8] Նույն տեղը. էջ 384:

[9] Նույն տեղը. Թիֆլիս, 1914, էջ 391-392:

կան արարողությունը տեղափոխել տվեց Հայաստան: Սեբաստիայի Պետրոս եպիսկոպոսը հանդիսավոր արարողակարգով, ըստ եկեղեցական օրենքների, Գրիգոր Լուսավորչին բազմեցրեց Տարոնի Նահանգի Աշտիշատ ավանի առաքելական Աթոռին[10]: Հայոց եպիսկոպոսապետ օծվելուց հետո Գրիգոր Լուսավորիչը Տարոնի նահանգում ձեռնամուխ եղավ եկեղեցիներ կառուցելուն և քահանաներ կարգելուն: Ըստ Փավստոս Բուզանդի, Գրիգոր Լուսավորիչը «... կործանեաց զբազինս մեհեանցն Հերակլեայ, այսինքն Վահագնի, որում տեղւոյ Աշտիշատ կարդացեալ, որ նախ եղ զհիմունս եկեղեցւոյ սրբոյ»[11]: Փավստոս Բուզանդի համաձայն, Աշտիշատի Վահագնի մեհյանի տեղում Գրիգոր Լուսավորիչը հիմք դրեց առաջին սուրբ եկեղեցուն: Միաժամանակ, որպեսզի բարձրացնի այս եկեղեցու հեղինակությունը, Փավստոս Բուզանդն այն անվանում է «ի Մայր եկեղեացն ամենայն Հայաստանեայց»[12]: Եվ եթե իրոք Աշտիշատում կառուցված առաջին եկեղեցու նշանակությունը Հայ Առաքելական Եկեղեցու համար այդքան շատ բարձր լիներ, ապա Տարոնի եպիսկոպոս Դանիելը, որ ազգությամբ ասորի էր, ոչ թե պետք է ըստ Փավստոս Բյուզանդի հավատարիմ լիներ Վաղարշապատի գլխավոր սեղանին, հայրապետական Աթոռի իշխանությանը և Կաթողիկե եկեղեցու հաստատության ուխտին[13], այլ Աշտիշատի եկեղեցուն, իսկ հայրապետները կնստեին այնտեղ և ոչ թե Վաղարշապատում: Հավանաբար դրանով Փ. Բուզանդը կամենում էր կորստից փրկել նախաքրիստոնեական հոգևոր կյանքի կենտրոններից մեկի վարկը նոր քրիստոնեական ժամանակաշրջանում:

Մինչ Աշտիշատի առաջին քրիստոնեական եկեղեցու կառուցումը, Գրիգոր Լուսավորիչն իր տեսիլքում Վաղարշապատի Կաթողիկե եկեղեցու կառուցման տեղը և հորինվածքը կապելով Աստծո անվան հետ՝ նախօրոք սրբագործել էր Վաղարշապատի Կաթողիկեն:

Միաժամանակ Աստծո կամքով Գրիգոր Լուսավորիչը Կաթողիկե եկեղեցու պատիվը բարձր դասեց բոլոր սրբերից: Ըստ Գրիգոր Լուսավորչի տեսիլքի, Աստծո հրեշտակ կույսերի սպանման տեղերի սյուներից Կաթողիկեի կառուցման տեղի սյունի բարձր լինելու փաստը հետևյալ կերպ մեկնաբանեց. «Իսկ զի բարձր է սիւնն առաջին՝ զի մեծ եւ բարձր է պատիւ Կաթողիկէ եկեղեցւոյ, քան զամենայն բարձրութիւնս սրբոցն»[14]: Գրիգոր Լուսավորիչը սրբերի շինվածքին կանգնեցրեց հաստատուն սյուներ, որոնք, ըստ Ագաթանգեղոսի, տանելու են մարդկության փրկու-

---

[10] Պօղոս Անանեան, Քրիստոնէութեան հետքեր Հայաստանի մէջ Ս. Գրիգոր Լուսաւորչի քարոզութենէն առաջ, Վենետիկ - Ս. Ղազար, 1979, էջ 38:

[11] Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, ի Վենետիկ, 1832, էջ 37:

[12] Նույն տեղը, էջ 41:

[13] Նույն տեղը, էջ 37:

[14] Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս 1909, էջ 388-389:

թյան հանդիսության ընդ. իսկ չորրորդը. որ կենդանության այուն էր (Կաթողիկեի). մարդկությունը բարձրացնելու էր Աստծո մոտ[15]:

Այսպիսով, Գրիգոր Լուսավորչի տեսիլքում Աստծո կամքով Կաթողիկե եկեղեցուն մյուս եկեղեցիների շարքում հատկացվեց առանձնահատուկ տեղ: Վերադառնալով Վաղարշապատ, Գրիգոր Լուսավորիչը «... եւ զնկատեալ տեղին տանն Աստուծոյ շինեաց, զցուցեալն. նմա ի տեսլեանն զյառաջագոյն դրոշմեալն իւր, եւ կանգնեաց տեղ զեկեղեցին Քրիստոսի»[16]: Սա նաև փաստ է, որը ապացուցում է, թե Մայր Տաճարը կառուցվել է ըստ տեսիլքում տրված պատկերի:

20-րդ դարում գիտնականների ճնշող մեծամասնությունը, հիմնվելով Ագաթանգեղոսի այս վկայության վրա, ընդունել է միայն այն տեղեկությունը, որ Կաթողիկեն կառուցվել է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու առաջին տարիներին, բայց միաժամանակ բացարձակապես անտեսել այն միտքը, որ եկեղեցին կառուցվել է տեսիլքում տրված պատկերի համաձայն: 303 թ. կառուցված Մայր Տաճարի հիմնական նորությունը ոչ միայն քառակուսի հատակագծի վրա գմբեթի տեղադրումն էր, այլ նաև նրա խաչաձև հորինվածքը: Անուղղակիորեն այդ են հաստատում և՛ Ագաթանգեղոսը, և՛ վաղ միջնադարի բոլոր մյուս հայ պատմիչները: Պաշտոնապես ընդունված քրիստոնեությունը հիմք դրեց միաստվածության պաշտամունքին: Աստծո կողմից ընտրյալ և օծյալ հռչակված թագավորն ու քահանայապետը բրգաձև նոր հասարակության մեջ կանգնեցին բուրգի վերևը: Նրանց կողքին էր նաև Աստծո կողմից սրբագործված երկրի գլխավոր եկեղեցին՝ Կաթողիկեն: Հավատացյալների աչքում Կաթողիկեի հեղինակությունը բարձրացնելու համար Գրիգոր Լուսավորիչն այն պետք է կառուցեր խաչաձև: Խաչի զորության մասին Ագաթանգեղոսի բերած բազմաթիվ օրինակներ այն համոզման են բերում, որ խաչը 4-րդ դարի սկզբում եղել է պաշտամունք, խորհրդանիշ: Խաչը, ըստ Ագաթանգեղոսի, «... որ կորուսելոցն յիմարութիւն է, եւ ձեզ որ գտալքդ՝ իմաստութիւն եւ զօրութիւն եւ փրկութիւն Աստուծոյ»[17]: Այս իմաստով խաչի նշանակությունը նրա մեջ էր, որ հավատացյալների աչքում բարձրացնում էր խաչաձև Կաթողիկեի հեղինակությունը: Ագաթանգեղոսի բերած այլ բազմաթիվ օրինակներ կարծես թե հաստատում են Կաթողիկե եկեղեցու խաչաձև լինելու փաստը, չնայած որ չի նշվում նրա անունը: Այսպես, օրինակ, ըստ Ագաթանգեղոսի, «Մինն ընդ երկիր ցցեալ, զի յայտնեսցէ դնել տեառն Գարշապարսն յերկրի. զի ի վերայ վիմին հաստատութեան շինեսցէ դիցէ զբարձրութիւն հիմանց եկեղեցւոյ, որպէս եւ Մարգարէն գուշակեաց, թէ ի վերայ վիմին կացոյց զի Տէր, զի անշարժ առնիցէ, իսկ զբուն անկիւնն՝ գկատարն ի վեր ուղղեալ է իբրեւ զկշռուած սահմանի զբնութիւն այնորիկ, որ ի նորայն

[15] Նույն տեղը, էջ 400:
[16] Նույն տեղը, էջ 439:
[17] Նույն տեղը, էջ 374:

ի վերայ բազմեցաւ՝ ի վեր կոյս հատանիցէ եւ անոր հայեցեալ զտեսողսն, ի Հայրն ի գլուխ Քրիստոսի եւ զբնութիւնն ցուցանիցէ: Իսկ աջ անկիւնն ցուցանէ զզօրութիւն աջոյ բազկի, աջովն զուրախութիւն արդարոցն զուարթութեան՝ պարգեւացն պատրաստելոց պսակացն զարդուն ցուցանէ: Իսկ ահեակ անկիւնն՝ զտանջանսն նշմարեցուցանէ զմեղատրացն»[18]:

Այստեղից պարզվում է, որ Աստված խաչի անկյուններից մեկը, ըստ Ագաթանգեղոսի, ցցեց երկրի վրա, որպեսզի ցույց տա Տիրոջ Գարշապարը երկրի վրա դնելը, որպեսզի հաստատուն վեմի վրա կարողանար դներ և շիներ եկեղեցու հիմքերի բարձրությունը, իսկ բուն անկյան կատարը վեր ուղղեց, որպես հավասարակշռություն, վեր բարձրացնելու համար նրա վրա հենվածների բնությունը, որպեսզի տեսնողները տեսնեն Հորը, Քրիստոսի գլուխը և ցույց տան նրա բնությունը: Աջ անկյունը ցույց է տալիս աջ բազկի զորությունը, արդարների զվարթության ուրախությունը, պատրաստված պարգևները, պսակների զարդարանքը, իսկ ձախ անկյունը՝ մեղավորների տանջանքները: Սրանից կարելի է հանգել այն եզրակացության, որ մինչև Կաթողիկեի կառուցումը Գրիգոր Լուսավորչի մտքում նախօրոք արդեն հասունացած էր խաչաձև եկեղեցու կառուցման գաղափարը: Կանգնած Կաթողիկե Մայր Տաճարը հիշեցնում է կենդանի, քարե խաչի, որ հեթանոսության նկատմամբ քրիստոնեության հաղթանակի հավերժացումն է խորհրդանշում: Դրա վառ ապացույց այն միտքն է, թե «քանզի խաչ, որ կանգնականն՝ յաղթական ցուցանէ, վերնանկիւն զյաղթութիւնն ցուցանէ»[19]: Խորանը կամ սեղանը, ըստ Ագաթանգեղոսի, ունի չորս անկյուն, որ հենց խաչն է, քանզի նա ստացավ տերունական պատարագ, որը Հորն էր մատուցված և նրա չորս անկյուններն ուղղված են ամենայն տիեզերք: Ամենայն տիեզերք են ուղղված նաև Կաթողիկե Մայր Տաճարի չորս անկյունները: Այստեղ առկա է նաև երկրի և երկնքի երկմիասնությունը: Ըստ Ագաթանգեղոսի, աստվածությունը, որ հասնում է ավելի վեր, քան երկինքը, քան անորոշ կետը, քան նյութական արարածների անսահման բնությունը, լցված ու տարածված է նյութականների ու անյութականների վրա[20]: Միաժամանակ Աստված ասում է, որ «երկինքս աթոռ իմ են, եւ երկիրս պատուանդան ոտից իմոց» և պահանջում է երկրի վրա իր բնակության համար Աստծո տուն կառուցեն[21]:

Միաժամանակ խաչը, ըստ Ագաթանգեղոսի, համախմբում, միավորում է մարդկանց: Այդ նաև համահունչ է 4-րդ դարի սկզբում Հայաստանում և նրա շուրջը ստեղծված քաղաքական իրավիճակին: Հայ ժողովրդի համախմբումը թագավորի և Եկեղեցու շուրջը կարող էր նախադրյալներ ստեղծել հայոց թագավորության հիմ-

---

[18] Նույն տեղը, էջ 243:

[19] Նույն տեղը, էջ 321:

[20] Նույն տեղը, էջ 181-182:

[21] Նույն տեղը, էջ 321:

քեռի ամրապնդման համար և հնարավորություն կստեղծեր ապահովելու երկրի միասնությունն ու անկախությունը: Ագաթանգեղոսի համաձայն. Աստված «... որ այրեացն եւ փլոյց զաշտարակն մոլորութեան. նոյն շինեսցէ զմեզ հիմամբք հաստատութեանն հաւատոյ եւ ածցէ զմեզ ի միաբանութիւն խաչին իւրով»[22]:

Այն, որ Մայր Տաճարը Գրիգոր Լուսավորչի կառուցածն է, հաստատում են նաև վաղ միջնադարի հայ պատմիչները: 5-րդ դարի երկրորդ կեսի պատմիչ Ղազար Փարպեցու համաձայն, Վաղարշապատում էր գտնվում «...զհրեշտակացոյց հիմնարկութիւնն սրբոյ տաճն Աստուծոյ, մեծի եկեղեցւոյն Կաթողիկէի...»[23]: Սրանից կարելի է հանգել այն հետևության, որ, ըստ Ղազար Փարպեցու, Կաթողիկե եկեղեցին Գրիգոր Լուսավորչի կառուցածն է, քանի որ նրա կառուցման տեղը և հորինվածքը մեկնաբանություններով ցույց է տվել Աստծո հրեշտակը, իսկ եթե նրա ժամանակ վերակառուցման հետևանքով նա, որ թևերից դուրս բերված լիներ և խաչաձև տեսք ընդուներ, ապա Գրիգոր Լուսավորչի կառուցածը չէր լինի, հետևաբար հրեշտակացույց հիմնարկություն չէր կարող կոչվել: Միաժամանակ, ըստ Ղազար Փարպեցու, Վահան Մամիկոնյանը 480-ական թվականների կեսերին Կաթողիկե եկեղեցին «... հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ զհնացեալ գործ նախնեաց իւրոց...»[24]: Ղազար Փարպեցու այս վկայությունից ճարտարապետ Ալ. Սահինյանը և շատ ուրիշներ հանգեցին այն եզրակացության, որ Վահան Մամիկոնյանը Կաթողիկեն քանդել, նոր տաճար է կառուցել: Միաժամանակ, ըստ Ալ. Սահինյանի, Մայր Տաճարի սկզբնական կառուցվածքը եղել է թաղակապ ծածկով բազիլիկային շինություն[25]: Սակայն Ագաթանգեղոսի նկարագրած եկեղեցին ոչ թե թաղակապ ծածկով բազիլիկատիպ շենք էր, այլ խաչաձև քառամույթ գմբեթավոր կառույց, իսկ Ղազար Փարպեցու հաղորդած տեղեկությունը վերաբերում էր Կաթողիկե եկեղեցու նորոգմանը և ոչ՝ վերակառուցմանը: Հնագիտական պեղումները ևս չհաստատեցին Մայր Տաճարի սկզբնական կառույցի բազիլիկատիպ լինելը: Միաժամանակ Վահան Մամիկոնյանի մարզպանության ժամանակ Կաթողիկեն կարիք ուներ նորոգման: Ըստ Ղազար Փարպեցու, «Պատահեաց նմա կրել տրրտմութիւն վայրապատ մարդկան, զի հրոյ վնասեալ փայտակերտն եկեղեցւոյն»[26]: Ինչպես երևում է, այստեղ խոսք չկա Մայր Տաճարի վատ վիճակի մասին, որ կարիք ուներ վերակառուցման: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Վահան Մամիկոնյանը առաջին հերթին վերականգնել է Կաթողիկեի ներսի և դրսի այրված փայտա-

---

[22] Նույն տեղը, էջ 297:

[23] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն հայոց. թուղթ առ Վահան Մամիկոնեան, Թիֆլիս, 1907, էջ 24:

[24] Նույն տեղը, էջ 345-346:

[25] ՊԲՀ, 3, 1966:

[26] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1907, էջ 407:

կերտ մասերը, փոխել վնասված քարերը, հավանաբար փակել նաև հարավային կողմի դուռը, որ տանում էր դեպի գլխավոր խորան, որով, ըստ ժողովրդական ավանդության, գլխավոր խորան են մտել թագավորն ու նրա ընտանիքի անդամները և կաթողիկոսը: Այսօր էլ հազիվ նշմարվում է այդ դռան հետքերը: Վահան Մամիկոնյանի ժամանակ այդ դռան պահպանումը նպատակահարմար չէր, քանի որ ասպարեզից հեռացել էին Արշակունի գահակալները, իսկ կաթողիկոսարանը տեղափոխվել էր Դվին: Նորոգումից հետո Կաթողիկեի շրջապատը պարըսպապատեցին և այն դարձրին անապատ «Սուրենա» անունով: Անապատ «Սուրենա» կոչվեց հավանաբար ի հիշատակ հայ Արշակունի գահակալների, ինչպես և Գրիգոր Լուսավորչի, որոնք ծագումով պարթևական Սուրենա ցեղից էին: Այնուհետև մարզպան Վահան Մամիկոնյանը բազմացրեց հոգևորականների թիվը և նրանց վրա վերակացու կարգեց Ղազար Փարպեցուն[27]: Կար տեսակետ նաև, որ Կաթողիկե եկեղեցին 7-րդ դարի կեսերին կառուցել է Ներսես Գ Տայեցի շինարար Կաթողիկոսը (641-661)[28]: Դրա համար հիմք է ծառայել «Ստորագրություն» հին Հայաստանի հայոց ժողովների պատմությունից հետևյալ քաղվածքը. «Երկասիրաբար յարդարեալ շինէ Գ Ներսես (կաթողիկոս) զսուրբ Շողակաթն ի (նոր) քաղաք (այն է) ի Վաղարշապատ»[29]: Այստեղ պարզ չէ, թե արդյո՞ք խոսքը Ներսես Տայեցու Վաղարշապատում կառուցած նոր եկեղեցու մասին է, թե Կաթողիկեի: Միաժամանակ Ներսես Կաթողիկոսի շինարարական գործունեության ժամանակակից և ականատես Սեբեոսը, որ գրել էր 618 թ. Կոմիտաս Կաթողիկոսի կողմից Մայր Տաճարի նորոգման մասին, ոչինչ չի գրում Տայեցու կողմից Կաթողիկեի կառուցման կամ ինչ-ինչ նորոգման մասին: Նույն կերպ է վարվում նաև 10-րդ դարի սկզբի պատմիչ Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցին: Իսկ մի այլ՝ նույն դարի պատմիչ Ստեփաննոս Ասողիկը, գրելով պարսիկ ամիրա Ապլհաճի արշավանքի մասին, նշում է, որ նա 982 թ. ճոպաններով վայր բերեց Վաղարշապատի Սուրբ Շողակաթի գմբեթի վրայի փրկական նշանը (խաչը)[30], միաժամանակ չակնարկելով, որ Շողակաթ կաթողիկեն է, իսկ նույն գրքում երկու անգամ գրելով Մայր Տաճարի նորոգությունների մասին՝ օգտագործում է «Կաթողիկե» անունը: Այստեղից կարելի է ենթադրել, որ Ներսես Տայեցի Կաթողիկոսը 7-րդ դարի կեսերին կառուցել է «Շողակաթ» անունով գմբեթավոր եկեղեցի Վաղարշապատում, որ, հավանաբար, չլինելով աչքի ընկնող, չի արժանացել ժամանակակից պատմիչների ուշադրությանը: Այլ խոսքով

---

[27] Ստեփաննոսի Ասողիկայ Պատմութիւն հայոց. Փարիզ 1859, էջ 82:

[28] Ստեփաննոս Ռօշքայ ժամանակագրութիւն կամ տարեկոնք եկեղեցականք. Վենետիկ, 1965 թ., էջ 79:

[29] Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հին գաւառացն Արարատայ. Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեան. Էջմիածին, 1842, էջ 22:

[30] Ստեփաննոսի Ասողիկայ Պատմութիւն տիեզերական. Փարիզ, 1859, էջ 175:

նարեի է ասել, որ Ծողակաթը Կաթողիկեն չէ, քանի որ այն հաստատող ոչ մի փաստ չկա: Միայն երկրորդ հազարամյակի երկրորդ կեսին հանդես եկան մարդիկ, որոնք Ծողակաթը նույնացրին Կաթողիկեի հետ:

Այսպիսով, ըստ Ագաթանգեղոսի, Մայր Տաճարը քրիստոնեական հավատքով զորացած և իմաստնացած մարդու հզոր մտքի ստեղծագործության արդյունք է, որ այն իր նյութական մարմնավորմամբ է հայկական, իսկ գաղափարը քրիստոնեական է, որ համաշխարհային եկեղեցաշինության պատմության մեջ Գրիգոր Լուսավորիչը հանդիսանում է խաչաձև կենտրոնագմբեթ եկեղեցու առաջին կառուցողն ու այդ ուղղության հիմնադիրը: Դրա համար հիմք կարող են լինել առաջին անգամ Ագաթանգեղոսի կողմից եկեղեցու այդ տեսակի կառուցման գաղափարի հիմնավորումն ու բացատրությունը, որի մարմնացյալ պատերը Վաղարշապատի Մայր Տաճարն է: Այսօրվա Մայր Տաճարն իր հատակագծմամբ, 17-րդ դարից սկսած իր հավելումներով հանդերձ, 4-րդ դարից մեզ է հասել անխաթար:

ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

ՍԵՐԳԵՅ ԳԼԻՆԿԱՅԻ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ»

19-րդ դարում Ռուսաստանում հրատարակված հայագիտական գործերի շարքում, իր արժեքավորությամբ հատկապես, առանձնանում է Ս. Ն. Գլինկայի «Հայոց պատմության տեսություն» աշխատությունը[1]: Ռուս նշանավոր հայագետի այս ուսումնասիրությունը մինչ օրս մեզանում առանձին քննարկման առարկա չի դարձել, եթե նկատի չունենանք որոշ հրատարակություններում ու գրքերում նրա մասին եղած հիշատակումները: Մինչդեռ Գլինկայի հայագիտական ժառանգությունը կարոտ է պատմագիտական լուրջ քննարկման:

Գլինկայի «Հայոց պատմության տեսություն» աշխատությունը բաղկացած է երկու մասից և հրատարակվել է Լազարյանների հովանավորությամբ ու անմիջական նախաձեռնությամբ՝ 1832-1833 թթ.: Ձեռնարկելով իր աշխատանքը, Գլինկան հենց ներածականում ընդգծում է հայոց պատմության ուսումնասիրության նշանակությունը և բարձր է գնահատում նրա տեղն ու դերը համաշխարհային պատմության մեջ. «Հայոց պատմությունը,- գրում է նա,- միահյուսվում է հին աշ-

---

[1] Սերգեյ Նիկոլաևիչ Գլինկան ծնվել է 1776 թ. Սմոլենսկի նահանգում, տոհմիկ ազնվականի ընտանիքում: Զինվորական ուսումնարանն ավարտելուց հետո, նշանակվել է իշխան Ցու. Վ. Դոլգորուկովի հանձնարար: Որոշ ժամանակ զբաղվել է ուսուցչությամբ: 1808 թ. Մոսկվայում հիմնել է «Русский вестник» ամսագիրը: 1812 թ. Հայրենական պատերազմի մասին հայրենասիրական հոդվածների շարքի համար Ս.Գլինկան արժանացել է Ս. Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշանի: Իշխան Պ. Ա. Վյազեմսկին նրա գործունեության այդ շրջանի մասին գրում է. «Գլինկան ծնվել է որպես ժողովրդական տրիբուն: Բայց օրինավոր, կառավարական տրիբուն»: Ուրիշ տասնամյա հրատարակությունից հետո, ամսագիրը փոխում է իր թեմատիկան և սկսում հրատարակել ռուսաց պատմության դասագրքեր: 1817-1820 թթ. Մոսկվայում լույս է տեսնում Ս. Գլինկայի երկերի ժողովածուն: Նրա վերջին աշխատավայրը Մոսկվայի գրաքննական խորհուրդն էր: Ս. Ն. Գլինկայի ստեղծագործություններից հիշատակության արժանի են նաև «Նոթեր 1812 թ. մասին» (1836 թ.), «Ռուսական ընթերցումներ» (1845 թ.) և այլն: «Զնայած իր բոլոր նախասիրություններին,- գրում էր ռուսական հանրագիտարաններից մեկը,- Ս.Գլինկան մնաց «ուղղամիտ, ազնիվ և անշահախնդիր»: Энциклопедический словарь, Ф. А. Брогауз и И. А. Ефрон, СПБ, 1893, т. 8[A], с. 854-855.

խարհի գրեթե բոլոր ժողովուրդների պատմության հետ: Հայոց լեռների բարձունքներում էր, որ, ինչպես ասված է Աստվածաշնչում և ժողովրդական ավանդույթներում, իր ապաստանը գտավ մարդկային ցեղի երկրորդ օրրանը...»[2]:

Հայոց պատմությանը նվիրված Գլինկայի աշխատությունն ամենից առաջ հանրամատչելի և ճանաչողական բնույթի գործ է: Հեղինակը մանրամասն բնութագրում է Հայաստանի տարածքը, աշխարհագրական միջավայրը, բնակչությունը և վարչական բաժանումները: Ներկայացվում են Մեծ Հայքի բոլոր նահանգներն ու գավառները, ինչպես նաև Կիլիկյան Հայաստանը՝ իր գավառներով, քաղաքներով, բերդ-ամրոցներով և բնաշխարհով: Եվ թեպետ այդ տեղեկություններում Գլինկան թույլ է տալիս նաև անճշտություններ, սակայն պատմագիտական տեսանկյունից բաժինը, ամբողջությամբ վերցրած, հաջողված է:

Դատելով գրքի շարադրանքից, Գլինկան հին աշխարհի պատմությանն ու ժողովուրդներին քաջատեղյակ անձնավորություն է և այս իմաստով՝ հայ ժողովրդի մասին արած նրա բնութագրումներն ու դիտարկումներն արժեքավոր են: Հեղինակն այստեղ առանձնակի շեշտում է այն միտքը, որ հնագույն ժողովուրդներից հատկապես հայերը կարողացան պահպանել ազգային իրենց յուրահատկությունն ու մշակույթը՝ չնայած ճակատագրի հասցրած բազում հարվածներին: Նա հայերին համարում է մնայուն ժողովուրդ, քանզի, ինչպես ինքն է գրում, «շատ ժողովուրդներ, ընդունելով օտարի գերիշխանությունը, իրենք էլ նրանց հետ օտարացան: Սակայն գտնվեցին ժողովուրդներ,- ընդգծում է Գլինկան,- որոնք դարերի ընթացքում պահպանեցին ոչ միայն իրենց անունը, այլև իրենց բարոյական կերպարը, լեզուն և հավատը... Այդ ժողովուրդների շարքում հայերը գրավում են առաջնակարգ տեղ: Անտեսելով Ասիայում կատարված իրադարձությունները, որոնք ավելի քան երեք հազարամյակ բուռն կերպով ալեկոծում էին Հայաստանը, հայերն այդպես էլ մնացին հայեր»[3]:

Գլինկայի համոզմամբ, հայ ժողովրդի կազմավորման ակունքները գալիս են Հայկ Նահապետից, ուստի նա ժխտում է հայ ժողովրդի ծագման հունական առասպելը՝ անվանելով այն «երևակայությունն աղավաղող պատմություն»[4]: Հեղինակը միաժամանակ բարձր է գնահատում հայերի արդարամտությունը սեփական պատմության հանդեպ. Գլինկան նույնիսկ գործածում է «համեստություն» բառը. «Ի պատիվ հայերի, պետք է ասել, որ նրանք եգիպտացիների, չինացիների ու հնդիկների համեմատ, իրենց պատմությունը չեն տանում հարյուր հազարավոր տարիներ առաջ: Իրենց կեցության սկզբից մինչև հայկական վերջին թագավորության կործանումն ընդգրկում է մ.թ.ա. 2107-1375 թ. մ.թ.»[5]:

---

[2] Տե՛ս С. Н. Глинка, Обозрение истории армянского народа, М., 1832, ч. I, с. 2, 7.

[3] Նույն տեղում, էջ 2:

[4] Նույն տեղում, էջ 63:

[5] Նույն տեղում, էջ 24:

Գլինկան համաշխարհային պատմության մեջ կարևոր է համարում մարդկային ցեղի յուրահատկությունների հետազոտումը: Ուշագրավն այստեղ այն է, որ այդ դիտարկումը հեղինակը կատարում է հայ ժողովրդի օրինակով և հայոց պատմության դրվագները ներկայացնելով: Տեսությունում բազմիցս շեշտվում է այն հանգամանքը, որ հայերը բարոյական բարձր կերպար ունեցող ժողովուրդ են. «Բարոյական գոյատևման համար ձգտումը մեր օրերում հանդիսավորությամբ հաստատված է հայերի կողմից»[6],- գրում է նա:

Որքանով նկատեցինք, Գլինկայի իրավացի պատկերացմամբ, պատմաբանի համար ամենից կարևորը ժողովրդի բարոյական ոգու բնութագրումն է, պատմության մեջ նրա թողած արգասավոր հետքը: Դատելով հեղինակի խորհրդածություններից, պետք է նշել, որ Գլինկան ճիշտ է ըմբռնել հայ ժողովրդի բարոյական ոգու ակունքները: Նրա կարծիքով, «հայերի մարտունակությունը ծառայել է ոչ թե նոր հողեր նվաճելու կամ ուրիշ ժողովուրդներին ստրկացնելու համար, այլ ազգային անկախությունն ու հայրենիքը պաշտպանելու համար... Հայրենիքի անկախության ու արտաքին բռնությունների դեմ մշտնջենական կռիվ ու պայքար - ահա թե որ՛ն է եղել հայերի վարած պատերազմների գլխավոր խորհուրդը: Ուստի այդ պատճառով է, որ հայերի պատերազմների հեթանոսական հերոս Միհրը նշանակում էր հոգևոր կրակ, որը պահպանել և ոչ թե կործանել է մարդկանց բնությունը»[7]:

Գլինկան ճիշտ է բնութագրել նաև հայ ժողովրդի կենսունակության ակունքները՝ նշելով, որ հայերի «ստեղծագործ էությունը գալիս է նահապետական ժամանակներից, և դա հայ ժողովրդի արմատական բնորոշումն է»[8]: Բացահայտելով հայերի ինքնատիպության պահպանման գաղտնիքը, Գլինկան տեղին է բերում Հիպոկրատի այն միտքը, թե «Ասիական երկներում, որտեղ տիրապետում էր դեսպոտիզմը, շատ հաճախ ամենածաղկուն երկրներն անգամ վեր էին ածվում անապատի ու լռությամբ տանում էին կործանիչ արշավանքները... Այնտեղի վեմ մտքերն անգամ կուլ գնացին կործանարար քաղաքականությանը՝ փոխանակ տարածելու բարոյականության ուժը: Հայերը չենթարկվեցին անմահ Հիպոկրատի կանոններին»,- եզրակացնում է Գլինկան և ապա ավելացնում. «Ի մխիթարություն մարդկությանը, հայերն ապացուցեցին, որ մտածողության ուժն ու ինքնատիպ գոյատևման բարոյական ոգին կարող են հաղթել հզոր տիրակալներին... Ուստի այդ ժողովուրդը չի շեղվի իր բուն նպատակից և իր համար կապահովի պատմականությունը»[9]:

Գլինկան, միաժամանակ, հայ ժողովրդին ներկայացնում է որպես ժողովուրդների գոյատևման չափանիշ. թե ինչպես մի ժողովուրդ, որն իր պատմության ըն-

---

[6] Նույն տեղում, էջ 6:
[7] Նույն տեղում էջ 3:
[8] Նույն տեղում:
[9] Նույն տեղում, էջ 4:

թյունքում բազում փորձություններ ու զրկանքներ է տարել, այնուհանդերձ կարողացել է դիմակայել ու պահպանել իր ինքնությունը: Ընդ որում, գնահատելով հայերի խաղաղասիրությունը, նա նշում է, որ հայ ժողովուրդը, լինելով ազատասեր, միաժամանակ հարգել է մյուս ժողովուրդների ազատությունը[10]:

Հայ ժողովրդի զոյատևման հիմքը Գլինկան համարում է հայերի «միասնությունն ու համերաշխությունը դարերի ընթացքում, նահապետական ժամանակներից սկսած... Բազում փոթորիկներ են անցել նրա վրայով,- գրում է նա: - Նրան ցնցեց Ասիան նվաճող Մակեդոնացին, և նա կանգնեց: Ցնցեցին նրան Սելևկյանները և... դարավոր կառույցը նորից կանգնեց: Ահռելի ուժով Հայաստան ներխուժեցին հին հռոմեացիները՝ արևելք ուղարկելով իր արծիվներ Պոմպեոսին և Անտոնիոսին, և նա կրկին կանգնեց: Երեք ու կես դար պարսից թագավորները պաշարեցին նրան բոլոր կողմերից, և նրանց ճնշման տակ կորստյան մատնվեցին շատ տարածքներ, բայց նա նորից կանգնեց... մոնղոլներն ու թուրքերը ուժեղացրին այդ փոթորիկը՝ որպեսզի ցնցեն նրան, բայց Հայաստանը կրկին հառնեց...»[11]:

Գլինկան հայ ժողովրդի զոյատևման մյուս կարևոր նախապայմանը տեսնում էր հայ «ընտանիքների արմատական դաշինքի և միմյանց նկատմամբ տածած խորին հարգանքի մեջ, որն ուղեկցվում է եղբայրական սիրով և պահպանում Հայաստանը փոթորիկներից...»[12]: Հիրավի, Գլինկայի կողմից պատմական այս էքսկուրսը ռուս ընթերցողին բազում խորհրդածությունների տեղիք կտար, և այդ իմաստով ևս արժևորվում է նրա ուսումնասիրությունը:

Հայ ժողովրդի զոյատևման երրորդ կարևոր նախապայմանը Գլինկան համարում էր կրթության և մշակույթի նկատմամբ հայերի ցուցաբերած հոգատարությունը: Այս առումով նա հատկապես բարձր է գնահատում հայկական մշակույթը. «Հայաստանը հարուստ է նշանավոր գրողներով: Նրանք հմուտ էին բանասիրության բոլոր ճյուղերում, իսկ պատմիչների ստեղծած բազում տարեգրությունները սրբությամբ պահպանվում էին վանքերում... Ինչ գանձերի պետք է տիրանար մի երկիր,- գրում է նա,- որը գիտությունների ապաստարան էր անցամ այն ժամանակներում, երբ բռնության անողոք ձեռքն ամենուր հետապնդում էր նրան»[13]:

Աշխատության պատմագիտական կարևոր արժանիքներից մեկն էլ այն է, որ նրանում հատկապես կարևորվում է Հայաստանի՝ որպես Եվրոպայի և Ասիայի միջև կամուրջ հանդիսանալու հանգամանքը: Հեղինակն այն համարում է հայ ժողովրդի կենսունակությանն ու առաջադիմությանը խթանող հիմնական պայման: Նրա համոզմամբ, հայերը ձեռներեց ժողովուրդ են՝ օժտված մեծ ունակություններով, արտադրությունն ու առևտուրը զարգացնելու նախանձելի ձիրքով: Այս իմաս-

---

[10] Նույն տեղում, էջ 218:
[11] Նույն տեղում, էջ 210:
[12] Նույն տեղում, էջ 105:
[13] Նույն տեղում, էջ 4:

տով Գլինկան Հայաստանին է վերագրում նաև Եվրոպայի և Ասիայի միջև «մոտակա միջնորդի» դերը: Ուշագրավ է, որ առևտրի մեջ հայերի մենաշնորհ հատկությունը հեղինակը չի բացատրում միայն վաճառաշահությամբ, այլ դրանում տեսնում է նաև «արհեստների ու արվեստների մեջ հմտանալու նախապայման: ... Հայերն իրենց պրպտուն խելքի շնորհիվ շարժման մեջ դրեցին ասիական առևտուրը: Նրանք նույնիսկ հեռավոր Հնդկաստանում հարգանք էին ներշնչում իրենց հանդեպ»[14]: Այստեղ կցանկանայինք մեկ մասնավորում կատարել. 19-րդ դարի հայագիտական գրեթե բոլոր գործերում ավելի քան կարևորվում էր Հայաստանի ռազմավարական նշանակությունը Եվրոպայի և Ասիայի մերձեցման խնդրում: Ընդ որում, այդ գործում քրիստոնեական Հայաստանին հատկացվում էր առաջնային դեր: Գլինկան, օրինակ, ներկայացնելով Հայաստանի աշխարհագրական նպաստավոր դիրքը, հաստատում է այն էական միտքը, որ «Հայաստանն իր աշխարհագրական դիրքով Եվրոպան Արևելքի հետ կապող ցամաքային միակ հաղորդակցությունն է»[15]:

Ռուս հայագետը հայերին դասում է ժամանակի քաղաքակիրթ ժողովուրդների շարքը: Իր համոզումը հաստատելու համար, Գլինկան բազում քաղվածքներ է բերում եվրոպացի պատմաբաններից. «Աբբատ Վիլլեֆորը գրում է, որ 5-րդ դարում Հայաստանը Ասիայի նշանավոր ակադեմիաներից էր, և որ նրա այդ առաքելությունը շարունակվեց մինչև 15-րդ դար»[16]: Գլինկան իր հերթին ավելացնում է. «Այս երկրի քաղաքացիական օրենքները, աստվածապաշտությունը, կառավարման ձևերը, զորավարներն ու արվեստի հրաշքները զարմանք են պատճառում»[17]: Դժվար չէ կռահել, որ հեղինակի ընդգծած քաղաքակրթվածությունը հենց այս բաղադրամասերն ունեին: Մեկ այլ տեղ Գլինկան նշում է. «Մենք չենք կարող գտնել մեկ այլ քրիստոնյա ժողովուրդ, որի մոտ մի քանի դարերի ընթացքում հանդես գան այդքան պատմիչներ: Ընդհակառակը,- շարունակում է նա,- նրանցից շատերը նույնիսկ կորցրել են իրենց ծագման հետքերը: Հարցրե՛ք ասորիներին, խալդյաններին՝, մարերի՝ն և շատ այլ ցեղերի, հարցրե՛ք նրանց, թե ի՞նչ է հայտնի իրենց նախնիների մասին»[18]: Հեղինակի համոզմամբ, Հայաստանը մշտապես գործուն կամ կողմնակի մասնակցություն է ունեցել Ասիայի կարևորագույն իրադարձություններին: Այս առումով հեղինակն իրավամբ գտնում է, որ առանց հայկական աղբյուրների ուսումնասիրության անհնար է պատկերել Ասիայի պատմությունը. «Նա, ով Փարիզի գրադարանում ծանոթացել է հայոց ձեռագրերին,- գրում է նա,- լավ գիտի, թե ինչ լույս են սփռում դրանք Ասիայի բազում իրադարձությունների վրա, և թե ինչ

[14] Նույն տեղում, էջ 2, 226:
[15] Նույն տեղում, էջ 35:
[16] Նույն տեղում, էջ 111:
[17] Նույն տեղում, էջ 100:
[18] Նույն տեղում, էջ 6:

փայլով են լուսավորում այդ պատմությունը՝ հատկապես. երբ հարցը վերաբերում է դեպքերի ժամանակագրությանն ու հին աշխարհի ժողովուրդների բնութագրություններին: ... Միայն հայկական աղբյուրների շնորհիվ կարելի է հստակ պատկերացում կազմել Կապադովկիայի, Կիլիկիայի, Կովկասի և Սև ծովի ափի մյուս ժողովուրդների բարոյական նորմերի, լեզվի և այլնի մասին»[19]: Այս իմաստով Գլինկայի ուսումնասիրության հիմնական աղբյուրը հայ պատմիչների գործերն են, որոնց մասին հեղինակը բարձր կարծիք ունի. «Հայկական աղբյուրները,- գրում է նա,- հավաստի տեղեկություններ են հաղորդում ոչ միայն հայրենի պատմության վերաբերյալ, այլև իրենց հարևանների և մասնավորապես Ասորեստանի մասին, որին նույնիսկ Դիոդոր Սիցիլիացին, Ցիցերոնը և մյուսները վերագրում են հարյուր հազարավոր տարիների պատմություն: Այդ մասին հայկական տեղեկությունները համապատասխանում են և՛ դեպքերին, և՛ ժամանակաշրջանին..»[20]:

Գլինկան հավաստում է նաև այն իրողությունը, որ հայ պատմիչների հաղորդումները հաստատվում են օտարազգի պատմիչների վկայություններով և հատկապես այն տեղեկությունները, որոնք անմիջականորեն վերաբերում են հայոց պատմությանը: Որպես ապացույց հաստատում, ռուս հայագետը հանգամանորեն ներկայացնում է օտար այն պատմիչներին, որոնք անդրադարձել են հայոց պատմությանը (Դիոդոր Սիցիլիացի, Քսենոֆոն, Պլուտարքոս, Պլինիոս Ավագ և ուրիշներ):

Գլինկայի ուսումնասիրության գլխավոր աղբյուրը Մովսես Խորենացու «Հայոց պատմությունն» է, որին հեղինակն իր հինգերորդ գլխում առանձին բաժին է նվիրել: Բարձր գնահատելով Պատմահոր պատմագիտական ժառանգությունը, նա գրում է. «Մովսես Խորենացու հայոց պատմությունը, Հայկի ժամանակներից սկսած մինչև մ.թ. 428 թ., բազում կողմերով ուշադրության արժանի է: Վանկերը բարեկարգ են և սահուն, շարադրանքը՝ չընդհատվող»[21]: Իհարկե, Գլինկան այս հարցում բացառություն չէր. 19-րդ դարի թե՛ ռուս, թե՛ հայ, և թե՛ եվրոպացի պատմաբանների ուսումնասիրությունները գլխավորապես գրված են Մովսես Խորենացու գրքի հիման վրա:

Գլինկան բավականին մեջբերումներ ունի նաև Միք. Չամչյանից, որոշ տեղերում հիշատակում է նաև Ղազար Փարպեցուն: Իհարկե, և դա բնական է, հայ և օտար պատմիչների թողած ժառանգության գնահատման հարցում հեղինակը հաճախ ընկնում է որոշ չափազանցությունների մեջ: Գրքում աչքի են զարնում նաև բազում կրկնությունները: Գլինկան նույնիսկ իր աշխատանքի վերջում, կարծես արդարանալով, գրում է. «Մեկնաբանելով ժողովուրդների կամ առանձին վերցրած մեկ ժողովրդի պատմությունը, անխուսափելիորեն տարվում ես կրկնություններով, որ թվում է, թե աշխատում ես նոր վկայություններ փնտրել՝ ամրապնդելու համար

---

[19] Նույն տեղում:

[20] Նույն տեղում, էջ 24-25:

[21] Նույն տեղում, էջ 95:

հինը, կամ էլ լրացնել այն նոր մտքերով»[22]: Որպես ասվածի հավաստում, Գլինկան քիչ անց շարունակում է. «Քննելով հայ ժողովրդի պատմությունը, համոզվածությամբ կարելի է ասել, որ ո՛չ թե առանձին դեմքեր, այլ ողջ ժողովուրդն է ջանացել հայրենիքի ճակատագրի համար...Իրադարձությունները, բարքերը, օրենքները՝ բոլորն էլ ակնհայտորեն և անվերապահորեն վկայում են այդ մասին»[23]: Դրանով, սակայն, հեղինակը չի սահմանափակվում և վկայակոչում է ֆրանսիական մի պարբերականի այն միտքը, թե՝ «Ընվաճող ժողովուրդներից շատերը, որոնք ցնցել էին աշխարհը, երկրի երեսից վերացան, կարծես թե երբեք էլ չեն եղել: Եվ մինչ նրանք Եվրոպան վեր էին ածում սովի ու ավերածության, հայերն Ասիայում ապավինելով արտադրողականության, գիտականության ու միասնականության ոգուն, իրենց նախնիների օրինակով դիմակայեցին այլ ցեղերի հետ ձուլվելու վտանգին և կազմեցին *արևելյան քաղաքակրթությունը* (ընդգծումը Ս. Գլինկայինն է - Հ. Հ.)»[24]: Շարունակելով ֆրանսիական պարբերականի միտքը, հեղինակն իրավացիորեն նշում է, որ «խաղաղասիրական և նահապետական կառավարման ոգին ավելի քան երեք հազարամյակ պահպանել է Հայաստանը՝ չխորշելով ո՛չ ներքին, և ո՛չ էլ արտաքին փոթորիկներից»[25]:

Հետևելով Գլինկայի «Հայոց պատմության տեսության» ժամանակագրությանը, նրան չի կարելի մեղադրել շարադրանքի անկատարության մեջ: Դինաստիաների, թագավորների և իրադարձությունների ժամանակագրական անհամապատասխանությունները պատմագիտության մեջ ընդունված ներկայիս տեսակետներին, ռուս հայագետի մեղքը չէ: Այդ անճշտություններն, առաջին հերթին, նրա ձեռքի տակ եղած հայ և օտար աղբյուրներում նշված ժամանակագրության հետևանքն են:

Գլինկային չենք կարող մեղադրել նաև գիտական անբարեխղճության մեջ: Հեղինակն իր գրքում մշտապես հիշատակել է այն աղբյուրը, որից նա օգտվել է: Այսպես, իններորդ գլխի ենթավերնագրերից մեկում կարդում ենք. «Վաղարշակ կամ Արշակ: Տես՝ Մովսես Խորենացի, Չամչյան, Սեն-Մարտեն և ուրիշներ»[26]: Իհարկե ասվածից միաժամանակ չպետք է հետևություն անել, թե Գլինկայի շարադրանքը վերջիններիս աշխատությունների պարզ վերարտադրությունն է: Բնավ ոչ: Ռուս հայագետը մանրամասը շարադրելով հայոց պատմությունը, ոչ միայն ուղղակի հաստատել է նրանց, այլև աշխատել է վերագնահատել այդ իրադարձությունները և դրսևորել իր վերաբերմունքը: Ավելին, հայոց պատմությունը քննելիս Գլինկան հետամուտ է եղել գտնելու այդ դեպքերի ու անցքերի համամարդկային նշանակությունը: Դժվար չէ նկատել, որ պատմագիտական առումով հեղինակն իր վրա հեշտ

---

[22] Նույն տեղում, էջ 215:
[23] Նույն տեղում, էջ 216:
[24] Նույն տեղում, էջ 217:
[25] Նույն տեղում:
[26] Նույն տեղում, էջ 160:

պարտականություն չի դրել, և հենց դրանում է նրա ուսումնասիրության հայագիտական էությունը, ապա կարևոր արժանիքը: Նկարագրելով. օրինակ. Պապի դավադիր սպանությունը, Գլինկան այնուհետև ավելացնում է. «Այստեղ ամենը ինչ ճիշտ է ասված. սակայն ոչ իրական ճշմարտությունը: Իսկ այդ ճշմարտությունն ասում է. որ հռոմեացիք դեռևս հեռու էին այն դարերից. երբ ասում էին. թե՝ ավելի հեշտ է արևին շեղել իր ուղուց. քան հռոմեացում՝ իր առաքինությունից»[27]:

Որքանով նկատում ենք. ռուս հայագետի ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը բավականին հարուստ է: Նա քաջածանոթ է հայկական աղբյուրներին. աշխատանքում հաճախ հիշատակում է նաև եվրոպական հայագետներին. որոնցից նա առատորեն մեջբերումներ է կատարել: Ուստի պետք է ենթադրել. որ իր տեսությունը շարադրելուց առաջ հեղինակը լրջորեն ուսումնասիրել է իրեն զբաղեցնող թեմայի աղբյուրներն ու գրականությունը: Այսպես. «Եվրոպացի հայագետները» բաժնում Գլինկան հիշատակում է Աբբատ Բարտելեմիին, որը Արարատյան թագավորների հին դրամների մասին ուսումնասիրությունում նշել է, թե «միապետական կառավարումը Հայաստանի տարածքում գոյություն է ունեցել դեռևս Արտաշեսից ու Զարեհից շատ առաջ»[28]: Նա հաճախ է հիշատակում նաև Գերենին. որի «Հին աշխարհի պատմություն» աշխատության մեջ բազում անդրադարձներ կան հայոց պատմության մասին: Իհարկե Գլինկան ամենն տեղեկություն չէ. որ հալած յուղի տեղ է դրել. քննելով. օրինակ. վերջինիս աշխատանքը. նա առանձին տեղերում իր անհամաձայնությունն է հայտնում հեղինակի տեսակետներին: Ուստի անպայմանորեն պետք է ընդգծել այն իրողությունը. որ Գլինկան իր կողմից օգտագործած աղբյուրների նկատմամբ ունեցել է քննադատական վերաբերմունք: Այս իմաստով ևս նրա հայագիտական վաստակն արժևորվում է: Երբեմն մի կողմ թողնելով հայոց պատմության առանձին դեպքերի նկարագրությունը. Գլինկան անցնում է բուն հայագիտական հարցերի քննությանը: Այսպես. չորրորդ գլխի բաժիններից մեկում. որը վերնագրված է «Հայաստանի մասին: Մալտե-Բրյունից». նա մանրամասն նկարագրում է վերջինիս արժեքավոր մտքերն ու խորհրդածությունները հայերի և հայոց պատմության մասին. թեպետ շարադրանքից երևում է. որ հեղինակը. որոշ առումով. կողմնապահություն է հանդես բերել և առավելապես մեջբերել հայ ժողովրդին դրվատող քաղվածքներ:

Գրքում բազմիցս հիշատակված են նաև ժամանակի նշանավոր գիտնականներ Գիզոն. Հերդերը և Նիբուրը. փորձ է արված նրանց բնութագրումների ու բնորոշումների մեջ համահունչություն տեսնել հայոց պատմության հետ: Նիբուրից. օրինակ. Գլինկան կատարել է հետևյալ մեջբերումը. «Երկու պատերազմներ էին տեղի ունենում Հռոմի ներսում՝ ներքին և արտաքին: Արտաքին պատերազմները կողոպտում էին հարևան և հեռավոր ժողովուրդներին. իսկ ներքին պատերազմները

[27] Նույն տեղում. էջ 66:
[28] Նույն տեղում. էջ 28:

ցնցում էին Հռոմը: Հնարավոր է, Հռոմը երկար կարողանար դիմակայել այս պատերազմներին, եթե՝ երկու շղթաներով գամված Ասիան չդավաճաներ կայսրությանը և հետո արդեն չընկներ հյուսիսի ցեղերի հուժկու հարվածներից»[29]: Գլինկան ցավով է նկարագրում նաև Հայաստանի առաջին բաժանումը. «Եկավ Հայաստանի բաժանման պահը,- գրում է նա: Տրդատի ժամանակներից սկսած այս մարզը կարելի է համեմատել մի նավի հետ, որը տատանվելով երկու հզոր ալիքների միջև, պետք է դիմակայեր թե՛ մեկին, և թե՛ մյուսին: Այդպիսի իրավիճակում էր Հայաստանը. մի կողմից Պարսկաստանը, մյուս կողմից Հռոմը ճնշում էին նրան: Վաղ թե ուշ նրան վիճակված էր դառնալու այս տերությունների միջև բաժանման զոհը»[30]: Քաղվածքից անմիջապես հետո Գլինկան գրում է. «Չնայած անհաղթահարելի ուժերից ընկավ Հայաստանը և ենթարկվեց մասնատման, հայերի ոգին դրանով, սակայն, չընկճվեց: Նրան տիրացած բոլոր նվաճողները սկզբում ստիպված են եղել պահպանել հայերի իրավունքները: Կյանքից առավել նախապատվությունը տալով հոգու անկախությանը... հայերը նույնիսկ խալիֆներից ու մահմեդական մյուս նվաճողներից կորզեցին իրավունքներ և երբեք չդարձան կամազուրկ ու ստրուկ»[31]: Միևնույն ժամանակ Գլինկան անհանդուրժող է նվաճողների նկատմամբ և, Հայաստանի պատմական անցյալի դեպքերի մասին խորհրդածելով, դառնությամբ գրում է. «Զարմանալի չէ՞ արդյոք, որ պատմությունը հաճախ անվանում են չարիքների շղթա: Կլինի՞, արդյոք, երբևէ պատմություն, որը կհաշտեցնի մարդկությունը մարդկությանը: Կլինի՞, արդյոք, երբևէ պատմություն, որտեղ կհիշվեն միայն բարեկամներ և բարերարներ»[32]: Մեկ այլ միտք ավելի է ամբողջացնում Գլինկայի մտայնությունն ու նրա պատմափիլիսոփայական մոտեցումը հայոց պատմության հարցերին. «Ինչպես մշուշոտ ուրվական,- գրում է նա,- կործանվեց Հռոմեական կայսրությունը, որից ցնցվեց նաև Հայաստանը: Լուռ է Մակեդոնիան օսմանցիների տիրապետությամբ, այն Մակեդոնիան, որտեղից դուրս էր եկել Ալեքսանդրը՝ աշխարհին տիրանալու համար: Իսպառ կորել է նրա զորավարի անունը, որի նվաճած երկրների թվում էր նաև Հայաստանը... Բայց Հայկական մարզը հարություն առավ Թուրքիայի և Պարսկաստանի առջև: Հարություն առավ, քանի որ դեպի հայրենին ու ազատությունն ունեցած ոգու իրենց բազմադարյան սերը ստիպեցին նրան զոհաբերելու ամեն ինչ...»[33]:

Հեղինակը Հայաստանի մեջ է տեսնում նաև «Արևելքում փառասեր Հռոմի նվաճողական քաղաքականության դիմադրության ուժը: Հայրենիքը և Ասիան հռոմեական զենքից փրկելու ձգտումը,-գրում է նա,- Արտավազդի կյանքի նպատակն էր և

---

[29] Նույն տեղում, էջ 32:
[30] Նույն տեղում, էջ 77:
[31] Նույն տեղում, էջ 34-35:
[32] Նույն տեղում, էջ 132:
[33] Նույն տեղում, էջ 37:

միակ իղձը: Եվ հռոմեական արծիվները չկարողացան ընդդիմադիր լինել նրան... Աշխարհանալ Հռոմը վախենում էր մի մարդուց, և այդ մարդն Արտավազդն էր»[34]: Ուշագրավ է նաև Տիգրան Մեծին տրված բնութագիրը. «Չեմ ուզում մեծարել Տիգրանի անհաղթ բազուկը,- գրում է նա,- դա մարմնական ուժի հատկություն է: Սակայն ամենից առաջ նա իր անունը հավերժացրեց ներքին բարեկարգությամբ, արդարադատությամբ ու ջերմ հայրենասիրությամբ»[35]: Գնահատելով հայ-հռոմեական պատերազմում Տիգրան Մեծի ցուցաբերած ողջամտությունը, Գլինկան միանգամայն անհավանական է համարում Պլուտարքոսի այն վկայությունը, թե իբր վերջինս պատրաստ է եղել համբուրելու փառասեր Պոմպեոսի ոտքերը. «Պատմության հետ միասին արմատավորվել է նաև սուտը,- գրում է նա,- որը դարից դար է անցնում: Չիմանալով Հայկի սերնդի արմատական ոգին, որն ամենից բարձր է դասել հայրենի հողի ազատությունը, Պլուտարքոսը Տիգրանին ներկայացնում է որպես ամոթալի կյանքի փոքրոգի ստրուկ... Արտաշեսի սերունդը չէր կարող այդ աստիճան իջնել»[36]: Ուշագրավն այստեղ նաև այն է, որ հեղինակը Հայաստանին համարում է Ասիայի վերջին պատնեշը. «Հռոմեական սրերից ընկավ Ասիան և մասնատվեց առանձին հատվածների: Նա կարծես թե իր սեփական ձեռքով իրեն հանձնեց հռոմեացիներին»[37]: Անշուշտ Գլինկան առանձին տեղերում ընկնում է չափազանցությունների մեջ, սակայն, որքանով ընկատեցինք, անվիճելի է նաև նրա շատ ու շատ դատողությունների ճշմարտացիությունը:

Գլինկայի գրքի ակնհայտ արժանիքներից պետք է համարել հայկական ավանդապատումների քննումն ու ըստ պատշաճին գնահատումը: Գլինկայի կարծիքով, հին աշխարհի մյուս ժողովուրդների բանահյուսության համեմատ հայկականն ունի զգալի առավելություններ՝ առաջին հերթին, իր լայն ընդգրկման ու ավանդվող դեպքերի ճշմարտացիության շնորհիվ: Այդ խնդրում, իհարկե, Գլինկան առաջին հերթին կարևորում և բարձր է գնահատում Մովսես Խորենացու վաստակը. «Հայաստանը հարուստ է իր ավանդություններով,- գրում է նա,- և ինչպես յուրահատուկ է Խորենացու գրքերին, դրանք ծառայում են մարդկությանը»[38]: Գրքում հատկապես լայն քննարկման է արժանացել «Հայկ և Բել», «Արա Գեղեցիկ և Ծամիրամ» ավանդապատումները: Խնդիրը, սակայն, այն չէ, թե ինչպես է ռուս հայագետը նկարագրել ու հավաստել մեծ պատմահորը՝ Հայոց նահապետի ու Բաբելոնի տիրակալի պատերազմը: Պատմականից զատ, Գլինկան հարցին մոտեցել է բարոյափիլիսոփայական և համամարդկային տեսանկյուններից՝ հայկական ավանդապատումները մեկնաբանելով որպես ազգապահպանության և գոյատևման խորհրդանիշ:

---

[34] Նույն տեղում, էջ 188:
[35] Նույն տեղում, էջ 109:
[36] Նույն տեղում, էջ 203:
[37] Նույն տեղում, էջ 204:
[38] Նույն տեղում, էջ 7:

Հեղինակը Հայկին և Բելին համարում է մարդկային ցեղը բաժանող առաջին ներկայացուցիչներ. «Ի դեմս Բելի,- գրում է նա,- մենք տեսնում ենք բռնությունը և փառասիրությունը, ամեն ինչ ստրկացնելու ու կործանելու նրա անհագ ձգտումը: Հայկի մեջ, ընդհակառակը, մարմնավորված էր վեհանձն արիացին, որը պատրաստ է պաշտպանելու իր հայրենիքի անկախությունն ու ազատությունը... Հայերի համար պատիվ է, որ առաջինն իրենք են դիմակայել բռնությանը... հայերի համար պատիվ է, որ մարդկության առաջին նվաճողն ու թշնամին իր վախճանը գտել է իրենց հողում, և, վերջապես, հայերն ապացուցեցին, թե ինչպես պետք է սանձել բռնությունը, և որ հայրենիքի նկատմամբ սիրո ուժը կարող է հաղթել զենքի ուժին»[39]: Գլինկան, իհարկե, այս գեղեցիկ բառերը հենց այնպես չի գրում ներբողողի անուն վաստակելու համար: Տրամաբանորեն հիմնավորված այս մտքերը նա ավարտում է հայերի ու Հայաստանի համար խիստ կարևոր մի ընդգծումով, որն, անշուշտ, չի կորցրել իր այժմեական նշանակությունը. «Ես ասել եմ ու նորից պետք է ընդգծեմ, չվախենալով նույնիսկ կրկնվելու վտանգից. Հայկական մարզի վերածնունդը կարող է անմիջականորեն նպաստել եվրոպական կրթությունը Ասիայի սահմաններում տարածելու և զարգացնելու համար»[40]:

Ընդգծելով հայ ժողովրդի քաղաքակրթիչ դերն Արևելքի համար, Գլինկան բերում է ասվածը հավաստող՝ Արևմուտքի և Արևելքի տերություններին բնորոշ փաստարկներ: Առաջ ընկնելով նշենք, որ այդ խորհրդածություններն անարժեք չեն. դրանք ճշմարիտ են և բնութագրական: Այսպես, գրքի ենթավերնագրերից մեկում կարդում ենք. «Վկայություն, որը հիմնված է հայերի արմատական հատկության վրա. նրանք ընդունակ չեն եղել արյունալի զոհաբերությունների: Հայտնի է, որ հին պարսիկները հանդիսությունների ժամանակ տարվում էին ստրկամիտ արյունահեղությամբ՝ համարելով դա իրենց տիրակալներին հնազանդության նշան... Հայտնի է նույնպես, որ ստրկատիրական Հռոմում հազարավոր մարդկանց կոտորում էին կայսեր հաճույքի համար: Բայց Հայաստանում նման բան երբեք չի եղել»[41]: Գլինկան միաժամանակ ընդգծում է, որ «Հայաստանը մասնակից չի եղել ասիական դեսպոտիզմին, քանի որ ասիական դեսպոտիզմը հեռու էր հավատից, իսկ Հայաստանը ժամ առ ժամ ավելի էր մոտենում իր բարեպաշտությանը»[42]:

Հեղինակը բավականին ուշագրավ մտքեր է արտահայտել նաև «Արա Գեղեցիկ և Ծամիրամ» ավանդապատումը մեկնաբանելիս: Գլինկան այստեղ ուղղակի չի հեռանում Խորենացուց և ամենափոքր մանրամասն անգամ բաց չի թողնում: Գրքում այն նույնիսկ ներկայացված է առանձին վերնագրով՝ «Մովսես Խորենացու պատմությունը Արա Գեղեցիկի և Ծամիրամի մասին»: Հայագետի համար այստեղ էլ կա-

---

[39] Նույն տեղում, էջ 49-51:

[40] Նույն տեղում, էջ 57:

[41] Նույն տեղում, էջ 256:

[42] Նույն տեղում:

ռևորը ավանդապատման իսկությունը չէ, այլ նրանում արտահայտված համամարդկային արժեքները: «Հայկ և Բելի» նման, Գլինկան պատմական դրվագները մարելով «ասիական դեսպոտիզմի ճարտարապետ», նա անմիջապես ավելացնում է. «Ես ջանք չեմ թափի ճշտելու, թե իբր հպարտ... Շամիրամը հայոց արքա Արայի գեղեցկությամբ հմայված՝ իր զորքերով շարժվել է նվաճելու նրա սիրտը: Ճշմարի՞տ են արդյոք այդ պատմությունները, թե ոչ,- խորհրդածում է Գլինկան,- դա չէ կարևորը, քանի որ դրանք գրեթե միջանցք չեն բացում ժողովուրդների պատմության մեջ»[43]:

Գլինկայի համար այս պատմությունների մեջ կարևորն այն արժեքների ուսումնասիրումն է, որոնք «կազմում են մարդկանց բարեկեցությունը. այսինքն՝ ինչ հիմքի վրա է այն ստեղծվել և ինչն է խարխլել նրա միասնությունը և, վերջապես, ինչն է նրան հասցրել դժբախտության...»[44]: Այստեղ էլ Գլինկան կատարում է հայագիտական իր կարևոր եզրակացություններից մեկը. «Ինչ վերաբերում է հայերին, ապա պետք է համոզվածությամբ ասել՝ այն ժամանակ, երբ միջին դարերի թանձր մշուշը պատել էր Եվրոպացիների միտքը... հայերը չդադարեցին հարստանալ նոր գիտելիքներով և այն սիրով հաղորդեցին իրենց սերունդներին»[45]: Անտարակույս, այս և բազում այլ խորհրդածություններ բարձրացնում են Գլինկայի ուսումնասիրության հայագիտական արժեքը և կրկնակի հետաքրքրություն առաջացնում նրա պատմագիտական ժառանգության նկատմամբ:

Գլինկայի «Հայոց պատմության տեսությունում» զգալի տեղ է հատկացված նաև հայ-ռուսական հարաբերությունների պատմության լուսաբանմանը: Հենց սկզբից նկատենք, որ հեղինակն այս հարցում հանդես է եկել որպես շահագրգիռ կողմ և գրքում բերում է Կիևյան Ռուսիայի ժամանակներից սկսած հայ-ռուսական հարաբերությունների պատմականությունն ապացուցող բազում փաստեր: Գլինկան, օրինակ, փաստելով վոլգյան բուլղարների մայրաքաղաքում հայտնաբերված հայատառ տապանաքարերի գոյությունը, այնուհետև գրում է. «Հավանական է, որ հայերը, հնուց ի վեր հոչակված լինելով որպես հմուտ առևտրականներ, այնուհետև ռուսական մորթի և կաշի են փոխանակել պարսկական ապրանքների հետ»[46]: Այս և բազում այլ փաստերի վկայակոչումով, Գլինկայի աշխատությունը դառնում է նաև սկզբնաղբյուր, քանի որ մանրամասն ներկայացված ու քննարկված են այն տեղեկությունները, որոնք վերաբերում են հայ-ռուսական հարաբերությունների սկզբնավորմանն ու նրա հետագա զարգացմանը:

---

[43] Նույն տեղում, էջ 8:
[44] Նույն տեղում, էջ 8-9:
[45] Նույն տեղում, էջ 8:
[46] Նույն տեղում, էջ 232:

Ուսումնասիրության վերջին՝ 11-րդ գլուխն ամբողջությամբ նվիրված է Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացման պատմությանը: Այդ հարցում Գլինկան, անշուշտ, իր ժամանակի ոգու արտահայտիչն էր, հետևաբար և ռուսական կայսրության քաղաքականության ջատագովը: Նա առանձնակի ոգեշնչումով է գնահատում այդ իրադարձությունը, կարևորում նրա պատմաքաղաքական նշանակությունը. «1828 թվականի մարտի 21: Հին Հայաստանի անունը հարություն առավ պարսից նախկին խանություններում: Նա հարություն առավ իր նոր անվան մեջ՝ Հայկական մարզ, և երաշխավորվեց ավանդույթներով, ավանդույթներ, որոնք ավետեցին մարդկային ցեղի երկրորդ վերածնունդը...Հայկական մարզի վերածնունդը կարող է անմիջականորեն նպաստել եվրոպական կրթությունը Ասիայի սահմաններում տարածելու և զարգացնելու համար»[47]: Դրա հետ մեկտեղ, Գլինկան բարձր է գնահատում հայ ժողովրդի մասնակցությունը Պարսկաստանի դեմ մղած պատերազմի հաղթության գործում և գոհունակությամբ գրում է. «Հնչեց ռուսական զենքը Արարատի բարձունքներում, և հայերն իրենց պարտքը համարեցին ռուսական զորագնդերին օգնելն ու զորավիգ լինելը... 1827 թ. հայերը կատարեցին իրենց խոստումը, Ներսես Պատրիարքն առաջիններից մեկը շտապեց դեպի ռուսական զորանոցները՝ նվիրաբերելով իր կարծրացած իմաստությունն ու կյանքը[48]: ...Հնչեցին զանգերը, և բացվեցին Էջմիածնի վանքի հյուրընկալ դռները: Հանդիսավոր հանդերձանքով դուրս եկավ հայ հոգևորականությունը... Օդը լցվեց բացականչություններով՝ ի պատիվ ռուսաց կայսրի... Ամենից ուրախը Հայաստանի որդիներն էին...»[49]: Մեկ այլ տեղ նա հպարտությամբ գրում է. «Զբաժանելով իրենց շահը Ռուսաստանից և վտանգելով սեփական կյանքը,... Հայերը տեղեկացնում էին թշնամու յուրաքանչյուր տեղաշարժի մասին, ծառայում էին որպես ուղեկցողներ, ռուսների հետ կռվում էին կողք-կողքի...[50] Ոչ թե թնդանոթային համազարկերը, այլ հայերի ոգու համագործակցությունը կանխորոշեց Երևանի բերդի առումը... Հայ երիտասարդները, ռուսների հետ, խանդավառությամբ տարան պատերազմի բոլոր դժվարությունները, վճռական ու դժվարին պահերին չխնայելով իրենց անձը, պատրաստ էին զոհվելու՝ միայն թե իրենց ազգակիցներն ազատվեն պարսկական գերությունից»[51]:

Գրքի վերջաբանում Գլինկան ամփոփում է իր աշխատության արդյունքները և, մեկ անգամ ևս փաստելով հայոց պատմության ուսումնասիրության նշանակությունը, գրում է. «Ներկայացնելով պատմական վկայությունները, ես չեմ պարպում իմ զովեստները հայ ժողովրդի մասին: Հայերի մեջ էլ, ինչպես վկայում են իրենց

---

[47] Նույն տեղում, էջ 21, 57:
[48] Նույն տեղում, էջ 233:
[49] Նույն տեղում, էջ 254:
[50] Նույն տեղում, էջ 256:
[51] Նույն տեղում:

տառեզությունները, եղել են և՛ Ներոններ, և՛ Կալիգուլաներ: Ավելին, հեթանոսության և քրիստոնեության միջև կատաղի պայքարում Հայաստանում կատարվեցին մեծ դաժանություններ... Սակայն միաժամանակ հանդես եկան մարդիկ, որոնք, ուրախությամբ ընդունելով մահվան գավաթը, պաշտպանեցին իրենց ժողովրդին և սանձեցին տիրակալներին»[52]:

Գլինկան լավատես է Հայաստանի ապագայի հանդեպ: Ավելին՝ նա համոզված է, որ հայերը, ներարկվելով եվրոպական կրթության լույսով, զարկ կտան տնտեսությանը և իրենց «շրջահայաց խելքի շնորհիվ ավելի ու ավելի կմոտեցնեն Ասիան Եվրոպային... Եվ թո՛ղ հայերի նոր արևի շողերը մշտապես պահպանեն նրա կենարար փայլը... Կյանքի մայրամուտին ավարտում եմ իմ աշխատանքը: Բայց եթե այս պահին անգամ կտրվի կյանքիս թելը, ապա իմ վերջին միտքը կլինի՝ թո՛ղ ծաղկի մարդկությունը եղբայրության դաշինքով, սիրով ու փոխադարձ օգնությամբ»[53]:

Անտարակույս, գնահատելի է Սերգեյ Գլինկայի ներդրումը Ռուսաստանում հայագիտության զարգացման խնդրում: Պատահական չէր, որ նրա «Հայոց պատմության տեսություն» աշխատությունը դարձավ այն անկյունաքարը, որի հիման վրա հետագայում ձևավորվեց և զարգացում ապրեց հայագիտության ռուսական դպրոցը:

[52] Նույն տեղում, էջ 273:
[53] Նույն տեղում, էջ 274:

ԺԹ ԴԱՐԻ ԿԵՍԵՐԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈԴՎԱԾ-ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

(ծննդյան 130-ամյակի առթիվ)

Հայ ականավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցի (1871-1942) գիտական ժառանգությունը բազմաժանր է և բազմաբնույթ: Նրա ուսումնասիրությունները վերաբերում են հայ ժողովրդի պատմության համարյա բոլոր պատմաշրջաններին՝ մ.թ.ա. Դ դարից մինչև իր օրերը: Լայնորեն հայտնի են նաև հայ գրականությանն ու լեզվաբանությանը, քերականությանը, կրոնին ու Եկեղեցուն, մշակույթին ու արվեստին նվիրված նրա հետազոտությունները: Ն. Ադոնցի գիտական ժառանգությունը համարվում է դասական հայագիտության անուրանալի նվաճումներից: Հայ-բյուզանդական հարաբերություններին նվիրված նրա մի շարք ուսումնասիրություններ իրավամբ գլուխգործոցներ են, XX դարի բյուզանդագիտության կարևորագույն ձեռքբերումներից[1]:

Ցավոք, Ն. Ադոնցի գիտական ժառանգության ոչ բոլոր կողմերն են, որ հայտնի են հանրությանը: Աշխարհի զանազան գրապահոցներում (Ս. Պետերբուրգ, Փարիզ, Բրյուսել, Վիեննա, Վենետիկ, Երուսաղեմ, Բեյրութ, Բոստոն, Երևան և այլուր) պահվում են հայագիտության ամենատարբեր հարցերին նվիրված նրա բարձրարժեք շատ աշխատություններ: Արդի պատմագիտության հրատապ խնդիրներից մեկը ադոնցյան այդ անտիպների հայտաբերումն ու հրատարակումն է:

Գրականության և արվեստի թանգարանի ֆոնդերում աշխատելիս մեր ուշադրությունը գրավեց դեռևս 1910 թ. Ադոնցի գրած անտիպ մնացած մի գրախոսություն: Այն վերաբերում է Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Գրիգորիս վրդ. Գալեմքեարյանի (1862-1917)՝ «Կենսագրություն Սարգիս արքեպս. Սարաֆյանի և ժամանակին հայ կաթողիկեայք» մենագրությանը (Վիեննա, 1908):

Սարգիս արքեպս. Սարաֆյանը (Սառաֆյան, Աղեքսանդրյան, Բյուզանդյան, Բյուզանդացի, Կոստանդնուպոլսեցի, Կեսարյան, Ծնորհալի) XVIII դարի կեսերի

---

[1] Ն. Ադոնցի գիտական ժառանգության արժեքավորումը տե՛ս Գ. Գյուզալյան, Նիկողայոս Ադոնցը որպես պատմաբան, Բեյրութ, 1943: Կ. Ն. Ցուզբաշյան, Նիկողայոս Ադոնցի գիտական ժառանգությունը, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1962, թիվ 4: Գ. Հ. Հովհաննիսյան, Նիկողայոս Ադոնց, տե՛ս Նիկողայոս Ադոնց, Հայկական հարց, Երևան, 1996, էջ 5-24 և այլն:

հայ իրականության նշանավոր գործիչներից է: Աշակերտել է Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Հովհաննես Կոլոտին (1719-1722), ձեռնադրվել է սարկավագ (1722), ապա (1726), վարդապետ (1727), եպիսկոպոս (1734): Եղել է Կեսարիայի, Գաղատիայի, Ռոդոստոյի և Եվդոկիայի հայոց հոգևոր առաջնորդ, Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի նվիրակ, մանկավարժ, տպագրիչ: Հրատարակել է Մովսես Խորենացու «Պատմութիւն հայոց»-ը (Վենետիկ, 1752): Հարել է կաթոլիկությանը և փորձել Մխիթար Աբբայի հետևողությամբ մանկավարժական ու տպագրական գործունեություն ծավալել Վենետիկում, սակայն մատնվել է անհաջողության: Ահա այս ոչ սովորական անհատականության գործունեությանը նվիրված Գրիգորիս վրդ. Գալեմքեարյանի մենագրության վերլուծությունն է Ն. Ադոնցի նորահայտ գրախոսությունը:

Գրված լինելով ավելի քան 90 տարի առաջ, այն ժամանակաշրջանում, երբ գրախոսությունում արծարծվող հարցերն առավել սուր բնույթ էին կրում, Ն. Ադոնցը փորձել է մատնացույց անել հայ կաթոլիկական պատմագրության միտումներն ու շեշտված միակողմանիությունը, երևույթներ, որ երբեմն սովորության ուժով շարունակվում են նաև մեր օրերում[2]: Այս իմաստով հրապարակվող գրախոսությունը որևէ չափով հնացած չէ. ժամանակը չի արժեզրկել այն, իսկ բարձրացված շատ հարցեր շարունակում են մնալ այժմեական:

Անհրաժեշտ է նշել, որ Գրիգորիս վրդ. Գալեմքեարյանի սույն մենագրության լույս ընծայումից հետո, Սարգիս արքեպս. Սարաֆյանի, նրա ժամանակի ու ժամանակակիցների մասին լույս են տեսել մի քանի նոր ուսումնասիրություններ[3], որոնք առավել ամբողջական են դարձնում մեր պատկերացումները արծարծվող հարցերի վերաբերյալ և, որ շատ ուշագրավ է, դրանք գալիս են ամրապնդելու Ն. Ադոնցի կռահումների ճշմարտացիությունը: Դարձյալ նշելի է, որ առանձին դեպքերում ստիպված ենք եղել առավել մանրամասն ծանոթագրել Ն. Ադոնցի բնագրի որոշ հատվածներ ու արտահայտություններ՝ դրանք ավելի հասկանալի ու դյուրըմբռնելի դարձնելու միտումով:

---

[2] Առանձնապես կնշենք հետևյալ հրատարակությունները՝ Ս. Կոզյան, Հայոց Եկեղեցին, Բեյրութ, 1961: Գր. Պետրովիչ, Ստեփանոս Ե. Սալմաստեցի, Կաթողիկոս Էջմիածնի, Վենետիկ, 1964, նույնի՝ «Միաբանող եղբայրները և Հայ Եկեղեցին (1330-1360), Վիեննա, 1971», նույնի՝ «Հայ Եկեղեցին Լեհաստանի մեջ (1350-1624), Վիեննա 1980»: Կ. Ամատունի, Ոսկան վարդապետը և իր ժամանակը, Վենետիկ, 1975, նույնի՝ «ԺԷ. դարու երևելի վարդապետներ», Վենետիկ, 1989, և այլն:

[3] Տե՛ս Մ. Որմանյան, Ազգապատում, հատ. Բ, Կ. Պոլիս, 1913: Գ. Բամբուքճյան, Հակոբ Պատրիարք Նալյան (1706-1764), կյանքը, գործերը և աշակերտները, Ստամպուլ, 1981: Նույնի՝ «Հովհաննես Պատրիարք Կոլոտ և իր աշակերտները, Ստամպուլ, 1984»: Ս. Մելենեվյան, Նոր նյութեր Սարգիս արքեպս. Սարաֆյանի մասին, տե՛ս «Բազմավեպ», 1983, № 1-4, էջ 132-173: 1984, № 1-2, էջ 118-141, նույնը տե՛ս նաև առանձին գրքով, Վենետիկ, 1985:

Հուսով ենք, որ սույն հրատարակումը կօգնի նաև առավել ամբողջական պատկերացում կազմելու Ն. Ադոնցի գիտական հետաքրքրասիրությունների և դրանց երբեմնի անսպասելի շրջադարձումների մասին[4]:

Գրախոսությունը հրապարակվում է ինքնագրի հիման վրա, որը պահվում է նշված թանգարանի Իսահակ Հարությունյանի փոնդում (գործ № 180, թ. 1-22): Այն գրված է 22 փոքրադիր թերթիկների վրա (չափսը 17x22): Բնագրում առկա են ջնջված առանձին բառեր, որոնք անհրաժեշտ չհամարեցինք մտցնել սույն հրապարակման տեքստի մեջ: Գրախոսությունը հրատարակելիս կատարել ենք ուղղագրական և կետադրական անհրաժեշտ ուղղումներ: Մեր կողմից ավելացված և լրացված բառերը վերցված են սուրանկյուն փակագծերի մեջ:

ՊԵՏՐՈՍ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կ ե ն ս ա գ ր ո ւ թ յ ո ւ ն

ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՍԱՐԱՖՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵԱՅՔ: ԳՐԵՑ Հ. Գ. Ծ. Վ. ԳԱԼԵՄՔԵԱՐՅԱՆ. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՈՒԽՏԵՆ, ՎԻԵՆՆԱ, 1908:

Սարգիս արք<եպիսկոպոս> Սարաֆյանը 18-րդ դարու հայ նշանավոր եկեղեցականներից է, մինչև այն դեմքերից, որոնց կյանքը արտացոլում է նոր դարուց մեր մտավոր շարժման բնորոշ կողմերը և հենց այս տեսակետից կարևոր էջ է պատմության: Սարաֆյանի կենսագրությունը գրված է նրա ձեռնասուն աշակերտի՝ Հովհ<աննես> Նուրտինյան վարդապետի[5] ձեռքով 1779 թ.՝ նրա մահից չորս տարի հե-

---

[4] Համազգայինի Բեյրութի գրական պահոցում է գտնվում Ա. Տեր-Ներսեսյանի՝ «XII-XIV դարերի հայկական նկարազարդ ձեռագրերը Վենետիկի Մխիթարյան հայրերի գրադարանում» ֆրանսերեն ուսումնասիրության (Փարիզ, 1937) մի այլ անտիպ գրախոսություն (տե՛ս պրոֆ. Ն. Ադոնցի թղթոն, պահարան I, գզրոց Բ/Ա.Թ):

[5] Հովհաննես վարդապետ Նուրտինյան (1747-1803): Որոին է բաղդիշեցի Սահակ Քյոսյանցի և Մարթա Նուրտինյանի: Աշակերտել է Աբրահամ եպս. Նուրտինյանին, Հովակիմ եպս. Քանաքեռցուն և Սարգիս արքեպս. Սարաֆյանին: Սարկավագ (1763), վարդապետ (1769): 1773 թվականից մշտապես բնակվել է Իտալիայի Լիվոռնո քաղաքում: Հեղինակ է մի շարք մանր երկասիրությունների, որոնցից նշանավոր է Սարգիս արքեպս. Սարաֆյանի չափածո կենսագրությունը (1779): Սույն երկասիրությունը հայտնի է երկու օրինակով: Առաջինը՝ Միջազգային (Օրթազուդ) Անտոնյան միաբանության № 653 ձեռագիրն է, իսկ երկրորդը՝ Վենետիկի Մխիթարյանց մատենադարանի № 773 ձեռագիրը, ընդ որում, առաջինը՝ ինքնագիր է:

տո[6]: Իսկական ձեռագիրը գտնվում է Անտոնյան միաբանության[7] դիվանում[8]: Նուրտինյանի երկը հանգավոր գրվածք է, բաժանված 10 գլուխների կամ, ինչպես հեղինակն է անվանում, երգերի: Վերջին՝ 11-րդ երգը նվիրված է հեղինակի կենսագրությանը[9]: Ահա այս ձեռագիր հիշատակարանն է, որ լույս է տեսնում առաջին անգամ <հայր> Գալեմքեարյանի ջանքով և բռնում է 1-140-րդ էջերը: Հրատարակության կցած է մի ընդարձակ հետազոտություն, ուր հիմն ունենալով Սարաֆյանի կյանքը, հ<այր> Գալեմքեարյանը շոշափում է նրա ժամանակակից մյուս հայ կաթոլիկ եկեղեցականների գործունեությունը: Հետևությամբ Նուրտինյանի, հ<այր> Գ<ալեմքեարյանը> ևս իր աշխատությունը բաժանում է 10 գլուխների, ուր բերում է բնագրի համապատասխան բաժանումնքների բովանդակությունը՝ ընդլայնելով կամ ավելի պարզելով Նուրտինյանի տեղեկությունները նորանոր աղբյուրների հիման վերա: Պատմվածքը հաճախակի ընդմիջվում է կողմնակի անձանց կենսագրությամբ, որ շատ անգամ ոչինչ առնչություն չունի բուն գործի հետ, կամ այնքան կապ ունի, որքան որ խնդիրը վերաբերում է կաթոլիկության: Այս կարգի ընդմիջումները վնասում են պատմության կանոնավոր և ամփոփ ընթացքին և դժվարացնում ընթերցանությունը, որ զգալի թերությունն է: Հեղինակը հավատացնում է, որ դիտմամբ է այսպես վարվել՝ նպատակ ունենալով ներկայացնել մինչև այն ժամանակի հայ կաթոլիկ հասարակության սկզբնավորումը և կազմակերպությունը: Հարկավ, նույն նպատակին կարելի էր հասնել և զետեղելով բուն խնդրին՝ Սարաֆյանի կյանքին վերաբերություն չունեցող կենսագրությունները առանձին:

Ներկա աշխատության անվիճելի արժանիքն այն է, անտարակույս, որ լույս է հանում նոր ձեռագրական նյութեր, նոր վավերագիրներ և հիշատակարաններ: Թարմ նյութեր են՝ 1) Նուրտինյանի երկը՝ 1-140-րդ էջ, 2) Սարաֆյանի նամակները Մխիթար Աբբային[10] 201-206 և 220-226-րդ էջեր, 3) Սարաֆյանի հավատափոխության վավերագիրը՝ էջ 175, 4) նրա եպիսկոպոսության կոնդակը և այլն: Հիշելու են

---

[6] Սարգիս արքեպս. Սարաֆյանը մահացել է 1773 թ. հոկտեմբերի 2-ին Լիվոռնոյում, հետևաբար թյուրիմացություն է, պետք է լինի՝ «վեց տարի հետո»:

[7] Անտոնյան միաբանություն-հայ կաթոլիկական միաբանություն, որն ստեղծվել է 1705 թ. Լիբանանում: Կ. Պոլսում, Լիվոռնոյում, Զմյուռնում, Բեյրութում և այլուր ունեցել են եկեղեցիներ, վանքեր և այլ հաստատություններ:

[8] Այստեղ խոսքը վերաբերում է Միջագյուղի (Օրթագյուղ) Անտոնյան միաբանության դիվանին:

[9] Նկատի ունի Հովհաննես վրդ. Նուրտինյանին: Այն կրում է «Երգ առանձին» խորագիրը (էջ 135-140):

[10] Մխիթար Աբբայի և Սարգիս արքեպս. Սարաֆյանի նամակագրությունը տե՛ս հետևյալ հրատարակությունում՝ Ղ. Ցայան, Մայր դիվան Մխիթարյանց Վենետիկ ի Ս. Ղազար (1707-1772), Վենետիկ, 1930: Մխիթարյանների՝ առ միմյանս, նամակագրություններում ևս առանձին տեղեկություններ են պահպանվել Սարգիս արքեպս. Սարաֆյանի մասին (Անդ, էջ 200, 203, 230-235 և այլն): Մխիթար Աբբայի և Սարգիս արքեպս. Սարաֆյանի անձնական հարաբերությունների մասն տե՛ս նաև Ս. Մեսճեմյան, Մխիթար Աբբահոր հրատարակչական առաքելությունը, Վենետիկ, 1980, էջ 213-220:

նաև մի շարք վավերագրեր, որոնք վերաբերում են Սարաֆյանի ժամանակակից և կաթոլիկ աշխարհի մեր շփված այլևայլ եկեղեցականների:

Ցանուցիր տեղեկություններ և փաստեր ի մի հավաքելով, հեղինակն նպատակ ունի ցույց տալու, թե որքան սաստիկ է եղել հոսանքը դեպի կաթոլիկություն: Կասկած չկա, որ վերջին դարում օտարադավան քարոզչությունը հաջողություն ուներ հայ հասարակության մեջ: Այս երևույթն ունի իր պատմական հիմքն ու բացատրությունը:

Ափսո՜ս, որ հ<այր> Գալեմքեարյանը տրամադրություն անգամ չէ ցույց տալիս ուրվագծելու այն իրական հողը, որ ծնունդ էր տալիս հավատափոխական երևույթներին: Դավանաբանական վեճերի վերա այնպես է նայում, կարծես խնդիրն միայն կրոնական ճշմարտության որոնումն է և սրա համար են այնքան աղմուկ ու զժտություններն. և որովհետև ճշմարտությունը, հեղինակի համոզմամբ, կաթոլիկության կողմն է, ուստի բոլոր կրոնափոխ կամ կրոնափոխության միտող հայերը միայն նրա համար են թողնում մայրենի Եկեղեցին և գրկում կաթոլիկությունը, որ վերջապես վերահասու են լինում որոնելի և ըղձալի ճշմարտության: Հ<այր> Գալեմքեարյանի աշխատության մեջ աչքի է ընկնում, գուցե և հակառակ նրա ջանքերին, այն, որ հեղինակը նախ և առաջ կաթոլիկ է և նրա համար թանկ են կաթոլիկության շահերը: Այսօրինակ ներացի վերաբերում ինքնընտրության թերություն է պատմական աշխատության համար. ավելին կասեինք՝ հավատափոխության հաջողությունը վերագրել լոկ կրոնական համոզմունքի հեղաշրջման, մեր կարծիքով, նշանակում է նսեմացնել, եթե ոչ՝ ժխտել կաթոլիկական հոսանքի պատմական նշանակությունը հայ կյանքում: Մեր վերածնության գործում կաթոլիկությունը խոշոր դեր է կատարել իր բոլոր պակասավոր կողմերով հանդերձ: Հայ հասարակության զարթումի առաջին տարիներից ի վեր նրա բարձր տենչանքները հանգում էին երկու կարապետող ձգտումների՝ քաղաքական ազատության և մտավոր վերակենդանության, այս էր մեր հասարակության բաղձանքների ամփոփումն: Առաջին ձգտման ողջակեզ եղան անձնվեր ուժեր և տենչանքը մնաց և մնաց իբր երազանք: Իսկ կրթական կենդանությունը հետզհետե իրականացավ: Խավարի մեջ խարխափող հայ կյանքն անզոր էր ծնել և սնել այնպիսի ձգտումներ, որոնք իրապես օտար ներշնչումներ էին և ծագում էին առավելապես կաթոլիկ քարոզիչներից: Պատրաստությամբ բարձր լինելով հայ մակարդակից, լատին թե մերազնյա քարոզիչները բնականորեն մեծ ազդեցություն և համակրություն պիտի գրավեին ուսումնատենչ խավերում: Սրանց գոհությամբ և երբեմն նույնիսկ նրանց դեմ հակազդեցիկ լինելու նպատակով հայ եկեղեցականներն ևս հետամուտ էին լինում ուսման և գիտության՝ օգտվելով կաթոլիկ հրատարակություններից և կամ նրանց օգնությամբ ձեռնարկելով նոր հրատարակությանց: Գիտության և լուսավորության անհագ տենչման զոհում էին երբեմն և դավանությունը, երբ նկատում էին, որ կրոնափոխությունը կարող է նրանց ընձեռել դյուրություններ ուսանելու կամ ուսուցանելու:

Կաթոլիկ սադրիչները հուսադրում էին հայերին Հռոմա գահի անունով և խոստանում էին քաղաքական ծրագիրներն իրագործելու եվրոպական պետությանց միջոցով: Նրանց թև և թիկունք էր ֆրանսական պետությունը, որի քաղաքական շահերն էլ նույն էին պահանջում: Բարձրագույն Դուռը վարանոտ դիրք էր բռնում, երբեմն հօգուտ կաթոլիկության, երբեմն Հայ Եկեղեցուն: Տաճկական իշխանությանց տրամադրությունը, ինչպես և Ֆրանսայի քաղաքականությունը, անտարակույս, առաջնակարգ նշանակություն ունին հայ կաթոլիկ հասարակության զարգացման պատմության մեջ:

Այսպես, հայ առաջավոր դասի ազատագրական և կրթական ձգտումները և քաղաքական աշխարհի այնժամանակյա կացությունը իրենց փոխադարձ հարաբերությամբ կազմում են այն պատմական կովանը, որին հենվելով կարելի կլինի լուսավորել կաթոլիկ և հայ համայնքների ընդհարումն իր գլխավոր ելևէջներով:

Կրոնափոխությունն անպայման հարմարություններ էր տալիս նրանց, որոնք ուզում էին վերածնության գործին ծառայել՝ կապելով նրանց անմիջապես լուսավոր կենտրոնների հետ և ստեղծելով որոշ հովանավորություն: Անշուշտ, մայրենի Եկեղեցուն հավատարիմ մնալն էլ ուներ իր առավելությունները, որոնցից չէին ուզում զրկվել դավանափոխները: Այստեղից ծագում էին երկդիմի և անորոշ դրություններ՝ հավատափոխ համարվողը այլ գույն ուներ Հռոմում և այլ՝ Պոլսում կամ գավառներում: Այս կողմի վերա միայն կարելի է բացատրել կաթոլիկ հետևորդներից շատերի երերուն կյանքը և տատամսոտ գործունեությունը, եթե միայն չենք ուզում համարել նրանց բախտախնդիրներ և շահասեր արկածավորներ:

Ներկա աշխատության մեջ չի նկատվում այս կամ նման մի պատմական հայեցողություն. դավանափոխների գործունեությունը հիմնվում է լոկ անձնական հատկությանց վրա, պայմանավորվում է այս կամ այն բարեմասնությամբ, և որքան անձը մոտ է Հռոմին, այնքան նախանձելի է նրա նկարագիրը: Սարգիս Սարաֆյանի հակառակորդները, ըստ հ<այր> Գալեմքեարյանի, բռնկված էին նախանձով: Սահակ Ահագինը[11] նրա փառքին էր նախանձում, Հակոբ Պատրիարքը[12] կասկած

---

[11] Սահակ (Իսահակ) արքեպս. Ահագին, Քդեցի (?-1763), նշանավոր հոգևոր-եկեղեցական գործիչ: Աշակերտել է Հովհաննես Կոլոտ Պատրիարքին, վարդապետ (1728), եպիսկոպոս (1736): Կարինի (1729-1743) և Ջմյուռնիայի (1743-1756) Հայոց հոգևոր առաջնորդ, Ս. Էջմիածնի Սվիրակ (1743-1756): 1756 թ. ընտրվել է Ամենայն Հայոց Կաթողիկոս, սակայն շուրջ երեք ու կես տարի հապաղել է օծում ստանալ և գահակալել: Ահա թե ինչու 1759 թ. օգոստոսին նրա ընտրությունը հայտարարվում է չեղյալ (տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. Բ, կ. Պոլիս, 1913, էջ 2988): Անշուշտ սխալ է Սահակ Ահագինին Հայոց Կաթողիկոսների շարքը դասելը, ինչպես արել են «Ժամագիրք Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ» (կ. Պոլիս, 1874) ժողովածուի հեղինակները՝ հորջորջելով նրան «Սահակ Ե. Կեղեցի» (Անդ, էջ 640):

[12] Հակոբ արքեպս. Նալյան, Աստվածաբան (1706-1764), նշանավոր եկեղեցական գործիչ, մատենագիր: Ավարտել է Սկյուտարի դպրատունը, աշակերտել է Հովհաննես Կոլոտ Պատրիարքին,

և երկյուղ էր կրում, չլինի թե Սարաֆյանը պատրիարքությունը խլե նրանից և այլն: Անհատական որպեսությունը, անշուշտ, իր հարգն ու նշանակությունն ունի պատմության մեջ, բայց զարմանալի է, որ բարեմասնությամբ օժտված են հանդիսանում, ըստ հեղինակի, միայն առավելապես կաթոլիկության հակվածները, եթե մինչև իսկ հակումը տեղի է ունենում զառամյալ հասակում: Պետք է խոստովանել, որ անձնական որակի վրա հիմնված տեսակետը հ<այր> Գալեմքեարյանը առնում է իր բնագրից՝ Հովհ. Նուրտինյանի գրությունից: Սակայն այս հանգամանքը բնավ չէ թեթևացնում նրա պատասխանատվությունը: Իրավ է, հ<այր> Գալեմ<քեարյանը> խոստովանում է. «մատչելի վաւերագիրներով անոր ստուգութիւնը փորձի տակ դնել» (էջ 144), պահել նրա պատմական կետերն առանց Նուրտինյանի խորհրդածություններին և դատողություններին, սակայն խոստումն մնում է սին խոստում, և մեր հեղինակը իրոք խոսում է այնպես, ինչպես թելադրում է բնագիրը: Հովհաննես Նուրտինյան, իբր Սարգսի ձեռնասուն աշակերտ[13], թերևս չէր կարող այլապես վերաբերել իր ուսուցչի դալար հիշատակին, քան մերձավորի աչառությամբ: Նրա գործն իսկապես մի ներբող է Սարգսի անվան, ուր ոգի ի բռին աշխատում է անպարտ կացուցանել իր հոգևոր հոր և այն դեպքում, ուր ըստ երևույթին լուրջ հիմքեր ունեին նրա հակառակորդները: Հովհ. Նուրտինյանի ճշմարտությունը հ<այր> Գալեմքեարյանի աչքում ամեն կասկածից վեր է:

Ուշի-ուշի դիտելով Սարգսի կյանքի՝ նրա կրթության և գործունեության պայմանները, կարելի է վիճելի համարել նրա կենսագիրների լուսաբանությունները շատ պարագաներում: Նուրտինյանին թվում է, որ Սարգիս ի բնե տրամադիր էր կաթոլիկության, նրա կյանքի միակ խնդիրը կաթոլիկ հավատի տարածումն և բարգավաճումն էր, որին նվիրել էր նա իր բոլոր ուժերը իբրև առաջնորդ, քարոզիչ, թարգմանիչ և հրատարակիչ: Հ<այր> Գալեմքե<արյան> ընդունում է նրա վարկածները առանց վերապահության, և թեև իր ձեռքին ունի ստույգ վավերագիր, որից երևում է, որ Սարգիս կաթոլիկությունն ընդունել է 1743 թվին, բայց և այնպես ասում է. «Կարելի չէ որոշել՝ ո՞ր թուականէն սկսեալ Սարգիս արքեպս. յարած էր կաթողի-

---

Գասպար դպիր Սեբաստացուն. Պաղտասար Գպրին: Վարդապետ (1728), եպիսկոպոս (1730): Եղել է Գաղատիայի հայոց հոգևոր առաջնորդ (1735), Երուսաղեմի պատրիարքության ջոխանորդ (1740), Կ. Պոլսի Հայոց Պատրիարք (1741-1749, 1752-1764), Բուրսայի հայոց առաջնորդ (1749-1752): Հեղինակ է աստվածաբանական մի շարք նշանակալից երկասիրությունների՝ «Գիրք կոչեցեալ վէմ հաւատոյ» (Կ. Պոլիս, 1733), «Գիրք մեկնութեան աղօթից Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ» (Կ. Պոլիս, 1745), «Գիրք կոչեցեալ զէն հոգեւոր» (Կ. Պոլիս, 1757, ունեցել է հինգ հրատարակություն), «Գիրք կոչեցեալ զանձարան ճանուցման» (Կ. Պոլիս, 1758) և այլն: Հ. Նալյանի մասին գրականության մատենագիտությունը տե՛ս Գ. Բամպուքճեան, Հակոբ Պատրիարք Նալյան (1706-1764). կյանքը, գործերը և աշակերտները, Ստանպուլ, 1981, էջ 220-224:

[13] Հովհաննես վրդ. Նուրտինյանը Սարգիս արքեպս. Սարաֆյանին աշակերտել է 1766-1769 թվականներին:

կեայ Վարդապետութեան և հասարակութեան» (էջ 166) և ապա Նուրտինյանի ազդեցության տակ պնդում է. «Արդէն յառաջ քան զառաջնորդութիւն Կեսարիոյ՝ որ է 1730, պէտք է որ ընդգրկած ըլլայ կաթողիկէ հաւատքը» (էջ 172): Կեսարիա առաջնորդ եղած ժամանակ[14] Սարգիս գնում է Էջմիածին 1734 թվին և եպիսկոպոսության աստիճան ստանալուց հետո[15] դառնում է իր թեմը: Սարգսի շիտակության մասին վատ գաղափար պետք է ունենալ՝ կարծելով, որ կաթողիկեա հավատը ընդունելուց հետո նա ընդունակ էր Էջմիածին գնալ և խաբեությամբ եպիսկոպոսանալ: Նույնով Սարգիս Կեսարիայից հրաժարվում է. և Հովհան<նես> Կոլոտ Պատրիարքը[16] ուղարկում է Նրան Անկյուրիա[17]: Այստեղ դավանաբանական վեճերը և կուսակցական կրքերը խիստ սուր կերպարանք էին ստացել: Կաթոլիկները զորանալով՝ յոթ եկեղեցիներից չորսը գրավել էին. «Այս ինչ տրհան չէր Սարգսի»,- խորհրդածում է Հովհ. Նուրտինյան (էջ 39), և նույնը կրկնում է հ<այր> Գալեմքեարյանը (էջ 180), որ Սարգսին թեև հաճելի էր կաթոլիկների զորացումը, բայց չէր ուզում այնտեղ գնալ, վերջը համաձայնեց գնալ և աշխատեց մեղմել կրքերը: Անտարակույս, որ եթե Սարգիս այդ ժամանակները հարած լիներ կաթոլիկության կամ նույնիսկ աննշան համակրություն ցույց տված լիներ, Կոլոտի նման Պատրիարքը երբեք Նրան Անկյուրիա չէր ուղարկիլ: Բացի սորանից, Ավգերյան Ստեփ<անոս>

---

[14] Սարգիս արքեպս. Սարաֆյանը Կեսարիայի առաջնորդ է եղել 1730-1738 թթ.: Այդ տարիների նրա գործունեության մասին տե՛ս Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն հայ Կեսարիո, հատ. Ա, Կահիրե, 1937, էջ 922-923, և այլն:

[15] Ս. Սարաֆյանը եպիսկոպոս է ձեռնադրվել 1734 թ. նոյեմբերի 25-ին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Աբրահամ Գ Կրետացու կողմից: Արարողության ընթացքում Կաթողիկոսը նրան տվել է «Ծնորհալի» պատվանունը: Աբրահամ Գ Կաթողիկոսի կոնդակը տե՛ս Հ. Ցաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին ի Վիեննա, 1895, էջ 1031:

[16] Հովհաննես արքեպս. Կոլոտ (1678-1741), ականավոր եկեղեցական-հոգևոր գործիչ: Սովորել է Բաղեշի Ամրոցոյ դպրոցում, աշակերտել է Վարդան արքեպս. Բաղիշեցուն, Գրիգոր վրդ. Ծիրվանցուն (ապագա Ծղթայակիր Պատրիարքին): Աբեղա (1698), վարդապետ (1700), եպիսկոպոս (1726), Երուսաղեմի Հայոց պատրիարքական փոխանորդ (1713-1715), Կ. Պոլսի Հայոց Պատրիարք (1715-1741): 1977 թ. երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի կարգադրությամբ 1978 թվականը հռչակվեց հոբելյանական տարի՝ ի նշանավորումն Կոլոտ Պատրիարքի ծննդյան 300-ամյակի: Հովհաննես Կոլոտ Պատրիարքի մասին նորագույն գրականությունից տե՛ս Գ. Բամպուքճյան, Հովհաննես Պատրիարք Կոլոտ (1678-1741) և իր աշակերտները, Աթանպոլ, 1988: «Հովհաննես Կոլոտ Պատրիարք, Աթանպոլ, 1978»: Ծնորհք արքեպս. Գալուստյան, Հովհաննես Կոլոտ Պատրիարքի կյանքն ու վաստակը, տե՛ս «Էջմիածին», 1978, № 10-12, էջ 91-111: Սահակ վրդ. Ճեմճեմյան, Նոր նյութեր Կ. Պոլսո երջանկահիշատակ Պատրիարք Հովհաննես Կոլոտի մասին, տե՛ս «Բազմավեպ», 1978, № 3-4, էջ-255-283: Սահակ արքեպս. Աճեմյան, Հովհաննես Կոլոտ, տե՛ս «Սիոն» 1978, № 1-3, էջ 14-18 և այլն:

[17] Սարգիս արքեպս. Սարաֆյանը Անկյուրիայի (Գաղատիա) հոգևոր առաջնորդ է եղել 1738-1741 թվականներին:

եպիսկոպոսը[18] վկայում է, որ Անկյուրայում եկեղեցիներում ուղղափառների (իմա՝ կաթոլիկների) դեմ էին քարոզում, և Պատրիարքը հրամայել էր, որ քահանաները հնազանդվեին Սարաֆյանին, չորս եկեղեցիների քանալիները հանձնում են նրան և հակառակող քահանաները աքսորվում են (էջ 182): Այս խոսքերից հետևում է, որ Սարգիս Անկյուրայում դեռևս հավատարիմ էր Հայ Եկեղեցուն: Նրա կենսագիրների պնդումները հակառակ հաստատության հիմք չունեն, եթե այդպիսին չհաշվենք նրանց ցանկությունը՝ Սարաֆյանին ի ծնե համարել կաթոլիկ:

1740 թվին Կոլոտ Պատրիարքի մահվան լուրը[19] առնելուն պես Սարգիս շտապում է Պոլիս: Պատրիարք է ընտրվում Սարգսի դասընկեր Հակոբ Նալյանը: Որ Սարգիս աչք է ունեցել պատրիարքական գահին, ավելի քան հավանական է: Հակոբ Պատրիարքի և Սահակ Ահագնի կասկածներն այս մասին, անշուշտ, անհիմն չէին: Հ<այր> Գալեմքեարյան ժխտում է այս հանգամանքը այն համոզմամբ, որ Սարգիս փառասեր չէր և նույնիսկ փառքն կփախչեր: Անկողմնակալ վերաբերումը, թերևս, պահանջեր ենթադրել, որ բարձր աթոռի հավակնության անհաջողությունից հետո, հավանորեն Սարգիս որոշում է թողնել վարչական ասպարեզը և պարապել գրական-հրատարակչական գործով: Զախորդ թեմավարությունը կարող էր նրան տանել դեպի այս վճիռը: Հետևյալ՝ 1741 թ. նրան տեսնում ենք Զմյուռնիա իբր նվիրակ Երուսաղեմի վանքի[20]: Այստեղ Սարգիս գաղտնի ընդունում է կաթոլիկություն տեղվույն պապական փոխանորդի[21] միջոցով, ինչպես երևում է Հավատո տարածման[22] գահերեց կարդինալի պաշտոնական գրությունից (էջ 175): Այսպես, Սարգիս 45 տարեկան հասակում, 25 տարուց ավելի Հայ Եկեղեցուն ծառայելուց հետո, «մի

---

[18] Ստեփանոս եպս. Ավգերյան (Արզարյան) Գաղատացի (?-1821), եկեղեցական գործիչ, մատենագիր: Ավարտել է Հռոմի Ուրբանյան դպրոցը: 1797 թվականից՝ եպիսկոպոս, 1804 թվականից՝ Կ. Պոլսի հայ կաթոլիկական համայնքի պապական ներկայացուցիչ: Հեղինակ է թուրքատառ մի քանի կրոնագիտական գրքերի և «Պատմութիւն Գաղատիոյ հայ կաթողիկեայ հասարակութեան» (1810) անտիպ աշխատության:

[19] Թյուրիմացություն է: Հովհաննես Կոլոտ Պատրիարքը մահացել է 1741 թ. փետրվարի 13-ին, ինչպես հավաստում է նրա տապանաքարի արձանագրությունը՝ «ի Ներքսան և հինգ ամաց պատրիարքութեան յամի Տեառն 1741 փետրվարի 13 ըստ ՌՃՂ» (տե՛ս Գ. Բամպուքճյան, Հովհաննես Պատրիարք Կոլոտ, էջ 66): Ի դեպ, Գալեմքեարյանի բնագիրը նույնպես հիմք չի տալիս նման պնդման համար՝ «Պօլսէն լուր առնելով, որ Կոլոտ Պատրիարք մահացու հիվանդ է, <Սարաֆյանը> 1740-ին փութաց ի Կ. Պոլիս» (Անդ, էջ 181):

[20] Ավելի ստույգ է այն, որ Սարգիս արքեպս. Սարաֆյանը Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի նվիրակ է եղել 1742-1743 թվականներին:

[21] Այդ ժամանակ Զմյուռնիայում պապական նվիրակն էր Հ. Ջիրոլոմա Լանցա դի Փերան (P. Girolamo de Perano): Այս իրադարձության մասին ավելի վավերական տե՛ս Ս. Մեմճեմյան, Նոր նյութեր Սարգիս արքեպս. Սարաֆյանի մասին, էջ 6:

[22] «Հավատո պրոպագանդա» (Propaganda fide)- հաստատություն, որ հիմնադրվել է Հռոմում 1622 թվականին՝ Արևելքի երկրներում կաթոլիկություն տարածելու նպատակով:

բարի օր» գալիս է այն եզրակացության, ինչպես հավատացնում են նրա կենսագիրները, որ մինչև այդ դավանած ճշմարտությունը մոլորություն է եղել, և ճշմարտությունը կաթոլիկության մեջ է[23]:

Նորադավան եպիսկոպոսը, 1744 թ. ծածուկ նավ նստելով, անհետանում է Զմյուռնիայից: Վենետիկի վրայից անցնում է Հռոմ և վերստին դառնում Վենետիկ: Ի՞նչ էր այս գաղտնի ճանապարհորդության միտքն ու նպատակը: Հ<այր> Գալեմ<քեարյան> կրկնում է Նուրտինյանին խոսքերը, որ Սարգիս ուխտ ուներ Հռոմ երթալու և սրբազան քահանայապետին[24] հպատակելու, և ապա Վենետիկի մեջ տպարան և վարժարան հաստատելու՝ կաթոլիկություն տարածելու համար: Հետագա հանգամանքները ցույց են տալիս սակայն, որ Սարգսի նպատակն է ընդհանրապես հայ ազգի կրթությանը ծառայել և նրա ձեռնարկներին կրոնական գույն տալ՝ կաթոլիկ կենսագիրների անձնական տեսողության արդյունքն է:

Սարգիսն իրոք հաստատեց տպարան և վարժարան, բայց շուտով փակեց՝ միջոցների սղության պատճառով: Անհաջողությունը ստիպեց նրան վերստին դառնալ Հայրենիք: Կենսագիրների կարծիքով, Սարգիս «կաթողիկեայ հաւատքը տարածելու միսիոնի որոշած էր ինք զինք, իւր պերճաբան քարոզութեամբը. եւ այս հոգւով մտաւ դարձեալ հայ հասարակութեան մէջ» (էջ 55 և 257): Նախքան Պոլիս ուղևորվելը, Սարգիս մեկնում է Հռոմ, գաղտնի հանձնարարականներ է ձեռք բերում, մասնավորապես մի վկայական՝ ուղղված Պոլսի լատին եպիս<կոպոսին[25]>, որի մեջ «զՍարգիս կը հանձնարարէ աւոր մասնատր խնամքին եւ հոգացողութեան» (էջ 253): Միևնույն ժամանակ Սարգիս միջոցներ է որոնում Հայոց Պատրիարքի[26] աչքը քաղցրացնելու իր վրա: Մինչդեռ հույս ուներ Վենետիկ մնալ, Մխիթար Աբբային գրած նամակներում[27] Սարգիս եպիս<կոպոս> կծու ակնարկներ էր անում Պատրիարքի հասցեին («փաթրիկն Հայոց ըստ անուան, եւ ըստ գործոյն համանման Յակոբկա» (էջ 215, հմմտ. էջ 224): Իսկ Պոլիս դառնալու որոշումից հետո, փոխում է իր լեզուն և նույնիսկ նամակներ է գրում նրա համակրությունը գրավելու համար: Շատ խրատական է «Հայաստան» լրագրի մեջ[28] հրատարակած նամակը, որ բերում է հ<այր> Գալեմքեարյանը՝ առանց ուշ դնելու նրա վերջին տողերին:

---

[23] Պահպանվել է Սարգիս արքեպս. Սարաֆյանի 1743 թ. հունվարի 29-ի նամակը՝ ուղղված Հռոմի Բենեդիկտոս ԺԴ. Քահանայապետին, ուր դավանափոխ հայ եպիսկոպոսը խոստանում է՝ «մինչեւ ցմահ՝ հնազանդ եղէց Հռոմէականի Սրբոյ Եկեղեցւոյ» (տե՛ս Ս. Մեմճեմյան, Նոր նյութեր, էջ 54):

[24] Նկատի ունի Բենեդիկտոս ԺԴ Պապին (1740-1758):

[25] Այդ ժամանակ Կ. Պոլսի լատին եպիսկոպոսն էր կարդինալ Հ. Պոնան:

[26] Այսինքն՝ Հակոբ Պատրիարք Նալյանի:

[27] Այդ նամակները՝ թվով ինը, պահվում են Վենետիկի Ս. Ղազարի Մխիթարյան միաբանության դիվանում (նամակների բնագրերը տե՛ս Գ. Գալեմքեարյանի գրախոսվող գրքում, էջ 201-227):

[28] Տե՛ս «Հայաստան», լրագիր քաղաքական, ազգային, բանասիրական և առևտրական, Կ. Պոլիս, 1846, № 21:

Նամակը գրած է Սարգիս իր մի բարեկամին, որտեղ ի միջի այլոց գրում է. «յանցելումն ողջունագիր իմն գրեցի առ հոգտոյս ցանկալի Պատրիարք վարդապետն ի ձեռն Յովհաննէս Չելեպւոյն[29], որոյ զպատասխանն ոչ ընկալայ: Եւ միայն թէ ի ձեռն տիրացու Յարութիւնին ազդեալ էր, թէ կամեցեալ իցէ առ ի տալ տպագրել զԴիոնիսիոսն՝ ինձ. որոյ վասն պատրաստեցի[30] եւ զպիտոյս ոմանս. սակայն այնուհետեւ այլ զրոյց ինչ ոչ տեսի: Ուստի եթէ կարելի իցէ սիրազնոյդ զնալ առ նա, եւ յինէն ողջոյն ընծայել մեծագունին սիրով, եւ քաղցրագունել զսիրտ նորին առ իս, զի իմ աչաց լոյս եւ սիրելի եղբայրս է. եւ մանաւանդ ի տեղի հօր եւ երախտատրի կու ճանաչեմ զնա: Զի՞նչ ասեմ. պիտոյ չէր այսպէս լինել, բայց եղեւ*: Եւ յայս մօտերս վերստին զիր գրելոց եմ առ ինքն» (էջ 232): Հ<այր> Գալեմքեարյան, որ Սարգսի կաթոլիկության վերաբերյալ ամեն մի ակնարկ խորհրդածության նյութ է շինում, տարօրեն լռությամբ է անցնում այս տողերը և չի բացատրում, թե ինչ է նշանակում ընդգծյալ նախադասությունը: Մի՞թե պարզ չէ, որ մութ ապագայի հանդեպ Սարգիս երկդիմի քաղաքականության էր հետևում, և Հռոմի հետ բարեկամական հարաբերություն հաստատելով, չէ ուզում Հայ Եկեղեցուց անջատված համարվել. «Սարգիս հազիւ ոտքը Զմիւռնիա կոխեց,- շարունակում է հ<այր> Գալեմ<քեարյանը>,- տեղւոյն հայերէն մեծաւ շուքով եւ համակրութեամբ,- ընդունուեցաւ եւ մեծաւ խոհեմութեամբ կաթուղիկեայ հաւատքը քարոզեց» (էջ 260):

Քարոզության արդյունքը մեծ չէր, բայց հ<այր> Գալեմքեարյանը չի ուզում հավատալ և կարծում է, որ «արդիւնքները իր զգուշաւոր կենսագրին մեզի աւանդածներէն շատ աւելի եղած պիտի ըլլան» (էջ 259): Անհիմն ենթադրություն է: Նուրտինյան ջանք չէ խնայում շեշտելու այն ամենը, ինչ վերաբերում է կաթոլիկության:

Զմյուռնիայի առաջնորդ Սահակ Ահագինը, տեսնելով Սարգսի համբավն, «սկսաւ նախանձիլ իրեն եւ ատել իսկ զինքն ու վարդապետութիւնը» (էջ 260): Սահակ այնքան թշնամացավ, որ գրեց Հակոբ Պատրիարքին՝ աքսորելու Սարգսին, բամբասելով, որ իբր թե «փոանկներու դեսպաններուն պատուէր գացած է իրենց մեծերէն, որ Սարգիսը՝ միտող փոանկներու, Պատրիարք ընեն» (էջ 261) և իբրև թե այս բանը խոստովանել է ինքը՝ Սարգիսը, դիմովության ժամանակը: Մեր հեղինակը Հաչաղկոտ զրպարտություն է համարում Սարգսի գրությունը. «Վասն զի Սարգիս գինարբու չէր բնաւ եւ որեւէ դեսպանի ուղղած թուղթ չունէր, եւ ոչ ալ փառաց հետամուտ էր, եւ ի սգբաանէ անտի փառքէ կը փախչէր» (Անդ.): Նուրտինյանի ասելով Սահակ իր գրությունն անխոհեմությամբ թողնում է սեղյակի մեջ և Սարգսի

---

[29] Նկատի ունի իտալահայ պետական գործիչ, մատենագիր Հովհաննես Չելեպի Սեղբոսյանին (մարքիզ Զիովանի դի Սերբոս, 1727-1811):

[30] Ակնարկում է Պողոս Առաջյալի աշակերտ, Աթենքի եպիսկոպոս, մատենագիր Դիոնիսիոս Արիսպագացուն (?-95):

* Այստեղ և ամենուր ընդգծումները Ն. Ադոնցինն են (Պ. Հ.)

մեկ բարեկամի կարդալով հաղորդում է նրան: Հ<այր> Գալեմ<քեարյան> անհիմն է համարում գինովության մասին պատմածը. բայց հավատում է այս տղայամիտ զրույցին: Որ Սարգիսը գինարբու չէր, թերևս հավատանք նրա կենսագրին, բայց որ Սարգիս «որեւէ դեսպանի անուն ուղղած թուղթ չունէր», անհիմն է պնդել: Եղած տեղեկությունները հակառակն են վկայում: Գիտենք, որ Սարգիս Ֆրանսայի և Նապոլսո[31] դեսպանների հետ մոտ հարաբերություններ ուներ և երկրորդ անգամ Հռոմ գնալիս նրանցից վկայականներ էր վերցրել՝ ի հաստատություն իր շահավոր գործունեության (էջ 259): Տեսանք նաև, որ Վենետիկից դառնալուս Հռոմից հանձնարարական էր առել Պոլսի լատին եպիսկոպոսի անունով. ավելի քան հավանական է, որ նույնպիսի հանձնարարականներ ունեցել է ևս դեսպաններին ուղղված: Սահակ եպիսկոպոսը, որ Սարգսի ընկերն և բարեկամն էր և մինչև անգամ նրա մի հրատարակության ծախսը յուր վրա էր առել[32], լոկ նախանձից գրգռված, չէր կարող այսպիսի զրպարտություն հերյուրել Սարգսի վերաբերյալ, եթե իրական հիմն չունենար: Բնական է, որ Սահակը կասկածով պիտի նայեր մի եպիսկոպոսի, որ գաղտնի Հռոմ է փախչում, անսպասելի դառնում և նույն ժամանակ խուսափում է շիտակորեն հայտնել իր դավանանքը: Սահակի գրության առթիվ Սարգիս դիմում է Հակոբ Պատրիարքին, սա սիրով ընդունում է նրան՝ տեսնելով նրա «անկեղծությունը և անմեղությունը» (էջ 262): Դժբախտաբար, Հ<այր> Գալեմ<քեարյան> չի պարզում, թե ինչ էր Սարգսի անկեղծությունը. արդյո՞ք այն, որ նա պատրիարքության չէր ձգտում: Բայց միթե խնդիրն այդ չէ, այլ այն, թե Սարգիս իրոք կաթոլիկացած է, թե հավատարիմ է ազգային Եկեղեցուն:

Գործի էությունը հայերի համար մութ մնաց մինչև Սարգսի երկրորդ ուղևորությունը Հռոմ:

Հակոբ Պատրիարքի թույլտվությամբ Սարգիս հաստատվեց Պոլսում: Հայերը տեսնելով, որ «Սարգիս Հռոմէն դարձաւ եւ Հայոց յարեցաւ, կուզէին որ անիկա նզովէ Հռովմայ օրհնեալ գահը եւ հռովմէական հայերը: Բայց Սարգիս գիտէր խոհեմաբար եւ ըստ խղճի վարուի» (275): Հասարակությունը երկուսի պառակտված՝ մի մասը գոչում էր «ասիկա տակաւին ֆռանկ է», մյուսը՝ «չէ, այլ եւս ֆռանկ չէ»: Կարծում ենք, որ այդպիսի հանգամանքներում եթե Սարգիս իրոք ուզում էր ըստ խղճի վարվել, պետք է հասարակության պահանջին գոհացում տար և պարզորեն հայտ-

---

[31] Այսինքն՝ Նեապոլական թագավորության:

[32] Տե՛ս «Յովհաննէս Սանճէմինեցի. Գիրք օրինակաց եւ նմանութեանց Յորդորմամբ, եւ բոլոր իսկ արդեամբ տեառն Իսահակայ իմաստնախոհ վարդապետի եւ հոչակաւոր արքեպիսկոպոսի. մանաւանդ Ամագին կոչեցելոյ, Վենետիկ, 1750, 1115 էջ»: Սակայն, ինչպես ակներև է գրքի հիշատակարանից, Սահակ արքեպս. Ամագինը տպագրությունն ավարտվելուց հետո հրաժարվել է տպագրական ծախսերը վճարել (տե՛ս «Գիրք օրինակաց», էջ 1093):

ներ իր դավանությունը և ոչ թե երկդիմի և կեղծ խաղեր խաղար և աղմուկների պատճառ լիներ:

Պատրիարքն անգամ վստահություն չուներ դեպի Սարգիսը: Կենսագիրների կարծիքով, Հակոբն ուզում էր, որ Սարգիսը ֆոռանկ համարվի, և այսպիսի հնարք մտածեց: Սարգսին պատվիրեց քարոզել եկեղեցում այնպիսի տոներին, երբ անպատճառ պետք է շոշափել դավանաբանական խնդիրներ և այնպիսի կետեր, որոնցով Հայոց Եկեղեցին զանազանվում է հռովմեականից: Սարգիս պիտի շիտակ վարվեր, «եթէ չէր այր կեղծաւոր», ասում է իրավամբ Նուրտինյան: Անհաչառ մարդուն ցավալի պիտի թվա, որ Հայոց Պատրիարքը ուրիշ հնար չուներ իմանալու ստուգությունը իր դասընկեր Սարգսից: Սակայն այլ կեպ է կաթոլիկ մտածությունը. «Սարգիս, որ հեռատես եւ շրջահայեաց էր, այս դաւէն չբռնուեցաւ, հապա իր բնաբանն ու վկայութիւնները հայ վարդապետներէն եւ հեղինակներէն առնելով ուղղափառ վարդապետութիւնը կը քարոզէր յուրախութիւն ուղղափառաց» (էջ 276): Չենք հասկանում, թե Հակոբի արածի մեջ ի՞նչ դավ կար, և թե ի՞նչ է նշանակում Սարգիս չբռնվեց: Եթե Հակոբի ցանկությունն էր, որ Սարգիսը ֆոռանկ համարվի, ինչպես հավատացնում է հ<այր> Գալեմ<քեարյանը>, և Սարգիսն էլ իրոք նույնն էր ցանկանում, իբրև կաթողիկեա, ուրեմն ի՞նչ կարիք կար դավից խոսելու: Սարգսին մնում էր բացեիբաց հայտնել իր գույնը, որ հայերն էլ վերջապես որոշեին իրենց դիրքը և հարաբերությունը: Հ<այր> Գալեմքեարյանը կրկնում է Հովհ. Նուրտինյանի անհեթեթ խոսքերը, թե Սարգիս հայ հեղինակներից վկայություններ բերելով ապացուցեց ուղղափառությունը (իմա՝ կաթոլիկ դավանությունը)՝ առանց պարզելու, թե ո՞ր հեղինակներն էին: Խիստ կասկածելի է, որ Սարգիս հայտնորեն ուղղափառություն քարոզած լիներ. նախ՝ Սարգիս աշխատում էր միջին ուղիով ընթանալ, երկրորդ՝ Հակոբ Պատրիարքը իր «դավից» հետո նրան առաջարկեց Ռոդոստոյի առաջնորդությունը: Եթե Սարգիս մինչև այդ իրեն կաթոլիկ հայտարարած լիներ, Նալյան Պատրիարքը նրան թեմ չէր տալ կառավարելու[33]: Պետք է ենթադրել, որ Հակոբի փորձությունը բոլորովին հակառակ արդյունքն է տվել, քան հավատացնում են Սարգսի կենսագիրները: Սահակ Ահագինը ևս թողնում է իր թշնամական վերաբերմունքը դեպի Սարգիսը: Հ<այր> Գալեմք<եարյանը> ասում է, որ երբ Սահակ նկատեց, որ Հակոբ Պատրիարքը չի հալածում Սարգսին, «այն ատեն սկսաւ Սարգսի քննիլ» (էջ 276): Սահակը բնավ պետք չուներ քննելու Սարգսին, եթե կար մեկը, որի մասին կարելի էր այդպիսի խոսք գործածել, դա Սարգիսն էր: Եթե իրոք կաթոլիկ էր, առաջնորդությունը կարող էր ստանալ լոկ քննության գնով, իսկ եթե

---

[33] Սարգիս արքեպս. Սարաֆյանը Ռոդոստոյի (Թեքիրդաղ) հոգևոր առաջնորդ է նշանակվել 1758 թ.՝ Ս. Ջատիկից հետո (տե՛ս Ս. Փաչաճյան, Հուշամատյան Ռոտոսթոյի հայերում. 1606-1922, Բեյրութ, 1971, էջ 175, հմմտ. Ս. Մեսճեճյան, Նոր նյութեր, էջ 40):

Հակոբին հավատացրել էր, որ հավատարիմ է Հայոց եկեղեցուն. այն ժամանակ հասկանալի է և Սահակի վերաբերմունքը:

Ռոդոստո գնալու պարագաները և այստեղից ծագած տարաձայնությունները Սարգսի և Հակոբ Պատրիարքի միջև, որի հետևանքն եղավ Սարգսի աքսորը, թույլ և միակողմանի են բացատրված: Ոչ մի բանավոր հիմք չկա հավատալու Նուրտինյանին, որ Պատրիարքը խոստացել էր Աթոռի տարեկան (= տարեկան-Պ. Հ.) հարկը բաշխել Սարգսին, իսկ հետո դժում է իր խոսքին և նրանից պահանջում գումարը: Նույնքան հավանական է կարծել, որ Սարգիս ինքն զլանում է սովորական տուրք վճարել[34] և կրում է իր պատիժը: Աքսորանքից[35] նամակներ է գրում Սարգիս իր բարեկամներին, որ բարեխոսեն նրա համար, գրում է նաև Պատրիարքին՝ հայտնելով սրտի ցավերն ու կրած զրկանքները: Հակոբ ուղարկում է 100 ոսկի և մխիթարական նամակ: Շուտով <Հակոբ> ևս ազատում է նրան և նշանակում Եվդոկիո առաջնորդ[36]: Հ<այր> Գալեմքեարյան հավատում է, որ Սարգիս աքսորից դառնալուց հետո, երբ այց գնաց Հակոբին, վերջինս «բազկատարած ներողութիւն խնդրեց իր ըրածներուն. իսկ Սարգիս ներելով զրկեց եւ համբուրեցաւ» (էջ 299): Իրողությանց հետևողությունը, նրանց տրամաբանական ներքին թելը պահանջում է պնդել հակառակը, որ Սարգսի ազատությունը և առաջնորդ նշանակվելը կարող էր հետևանք լինել միմիայն զղջման և պատրիարքին ուղղված գրությանց: Հակոբ Նալյան Պոլսի նշանավոր պատրիարքներից է և թեթևամիտ և կամայական գործողությանց անընդունակ: Սարգիս ստիպողական պետք ուներ հաշտվելու Պատրիարքի հետ: Ճնորհիվ հաշտության Պատրիարքը վճարեց նրա պարտքերը: Եվդոկիո թեմից հրաժարվելուց հետո Սարգիս ապրում էր Պոլիս՝ Պատրիարքի մոտ[37]: Հակոբի և Սարգսի հարաբերությունները Հ<այր> Գալեմք<եարյանը> այնպես է ներկայացնում, որ կարծես Հակոբն է հանցավոր Սարգսի նկատմամբ. Երբ «Ցակոբ Պատրիարք, մահացու հիւանդ կը պառկէր,- գրում է Հ<այր> Գալեմք<եարյանը>,- Սարգիս արքեպ<իսկոպոս> ստէպ կ'այցելէր, կը մխիթարէր, եւ զինք յաւիտենական կենաց կը պատրաստէր, անցեալ գործերը յիշեցնելով զղջման կը յորդորէր: Ցառաջ կը բերէր այն գրքերը՝ զոր ընդդէմ ուղղափառութեան տպած էր, թէպէտ ինքը Ցակոբ ալ ըրածներուն վրայ գոհ չէր» և այլն (էջ 306): Այսօրինակ դատողություններ միայն ստորացնել կարող են հետազոտության արժեքը:

---

[34] Տուրքի գումարը կազմում էր 250 մարչիլ (տե՛ս Գ. Բամպուքճյան, Հովհաննես Պատրիարք Կոլոտ, էջ 192):

[35] Սարգիս արքեպս. Սարաֆյանն աքսորվել էր Զիրոս նույն թվականի սեպտեմբեր 8-ին:

[36] Սարգիս արքեպս. Սարաֆյանը անվանապես է եղել Եվդոկիայի առաջնորդ (1759-1761): Նա թեմը կառավարել է փոխանորդով (տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմություն Եվդոկիո հայոց, Կահիրե, 1952, էջ 655):

[37] Սա շարունակվել է շուրջ չորս տարի՝ 1761-1764 թվականները:

Ոչ նվազ մոլորություն է կարծել, որ Սարգիս ջանալով «ազգն ուղղափառութեան բերել յաջողեցաւ շատերը վաստըկիլ» և ավելի հաջողություն կունենար, «սակայն այլեւայլ նկատումներ թոյլ չէին տար ամենուն այս քայլն առնելու» (էջ 312-313): Այդ «կէսք առ աչին, ոմանք առ փառաց, եւ այլ սին պատճառանաց» (էջ 119): Այս մտքին անհեթեթությունն ևս ակներև է: Փառք որոնողները, ընդհակառակն, շքեղ Հռոմի ուղին էին բռնում և ոչ աղքատիկ Էջմիածնի: Ինքն՝ Հ<այր> Գալեմքեարյանը հիշում է, որ այն ժամանակ հաճախակի դեպքեր էին տեղի ունենում, երբ բախտախնդիր անձինք, նույնիսկ աշխարհականներ, կեղծ հոգևորականներ էին ձևանում և Հռոմ երթալով աշխատում էին փառքի և պատվի արժանանալ:

1772 թ. Սարգիս իր աշակերտ Նուրտինյանի հետ ծածուկ փախչում է Արևմուտք, «իբրև ուղղափառ ուղղափառների մէջ ապրելու» ցանկությամբ: Լիվոռնոյից մի խորհրդավոր թուղթ է գրում Հռոմ, թույլտվություն խնդրելով գնալ այնտեղ: Հետն ուներ այլևայլ հանձնարարականներ. նշանավոր են մանավանդ գրության վերջին պարբերությունները Սարգսի նկարագրի համար. «Հուսկ յետոյ ծանուցանեմ, զի այժմ ի Կ. Պոլիս երկոքին կողմունքն Հայոց, այսինքն՝ ուղղափառաց եւ ճիգմատիքաց եւ մեծամեծաց մինչեւ զփոքունս ակնապուշ եղեալ նկատեն ի կողմնս յայս առ ի գիտել զգիարդութիւնն, եւ ուր կայանալն որպիսութեան մերոյ» (էջ 372): Հ<այր> Գալեմքեարյանը խոհեմությամբ լռելյն է անցնում այս նենգավոր տողերը:

Զարմանալի է, որ Սարգիս, որ թեև ըստ կենսագիրների, հայտնապես ուղղափառություն է քարոզել 1754-1772 թթ. և հանձնարարականներ ևս ուներ, բայց և այնպես ստիպված էր երկար գրությամբ համոզել Հռոմին, որ ինքը վաստակավոր անձն է: Փորձված Հռոմը այլ կերպ էր նայում 73-ամյա ծերունու գալստյան վրա և պատասխանում է, որ «ժողովոյ արկղը շատ ծանրաբեռնեալ է» (էջ 373) և թե «նախ՝ եպիսկոպոսունս որք են աստ տեղատրեցից եւ ապա հոգասցուք զնա» (էջ 375): Իզուր էր Սարգիս հավատացնում, թե «գալուստն իմ ի Հռոմ ոչ դիտէր զօգուտն անձին իմոյ ի կողմանէ դրամոյ» (էջ 373): 1773 թ. մեռավ՝ փափագին չհասած: Մահից հետո երևաց, որ Սարգիս բավականի հարստություններ էր դիզել իր քարոզչության ժամանակ: Քայլ առ քայլ հետևելով Սարաֆյանի կենսագրության, գալիս ենք հաստատելու ինչ որ ասացինք սկզբում՝ Սարգսի վերաբերումը դեպի կաթոլիկության այնքան որոշ չէ, որ տարաձայնության տեղիք չտա: Ճշմարիտ է, 1743 թ. պաշտոնապես ընդունում է կաթոլիկ դավանությունը և ուղևորվում Արևմուտք, բայց հույսերը ի դերև ելնելուց հետո դառնում է Հայրենիք և հարում մայրենի Եկեղեցուն: Որ Հակոբի պես Պատրիարքը թեմեր էր առաջարկում նրան կառավարության, և Սիմեոն Կաթողիկոսը[38] բարեկամ էր Սարգսին և տակավին 1771 թ.՝ ասել է վերջին

[38] Սիմեոն Ա Երևանցի Կաթողիկոսի (1763-1780) և Սարգիս արքեպս. Սարաֆյանի բարեկամությունն ունի հին պատմություն: Ուշագրավ է, որ Ռոդոստոյից վերադառնալուց հետո Սարաֆյանը Կ.

փախուստի նախօրեին, առաջարկում է նրան Էջմիածնի նվիրատվություն. պերճ ապացույցներ են, որ Սարգիս չէր նկատվում «սրտով եւ վարդապետութեամբ կաթողիկեայ»: Համենայն դեպս. հայ եկեղեցականությունը նրան չէր համարում խորթացած Հայ Եկեղեցուց: Հավանականն այն է. որ Սարգիս ազգի լուսավորության ծառայելու տենչով տոգորված, մտադրություն է ունեցել հաստատվել Վենետիկ՝ նման Մխիթար Աբբայի[39], որի համար պատրաստ է եղել անգամ զոհելու ազգային եկեղեցին՝ հուսալով, որ այս զոհաբերությամբ գլխավոր նպատակը կշահվի[40]: Սակայն անհաջողության դեպքից հետո, հիասթափվում է և դառնում է Հայրենիք և մտնում վերստին Հայ Եկեղեցու ծոցը: Մերության հասակում նախկին ծրագիրները նորից նրան տանում են Արևմուտք. ունենալով հետը մեծ գումար, հույս ուներ, որ այս անգամ ավելի հաջող կերթան նրա ձեռնարկությունները:

Իսկ եթե կանգ առնենք այն տեսակետի վրա, որ պաշտպանում են նրա կենսագիրները, պիտի հանգենք ամենատխուր եզրակացության Սարգսի անձնական հատկության վերաբերյալ: Եթե հիրավի Սարաֆյանը ծարավի էր կրոնական ճշմարտության, պետք է որ ամենից առաջ բացարձակ հայտներ իր գտած ճշմարտությունը և ոչ թե մութ խաղ խաղար հայ եկեղեցականության հետ՝ սքողելով նրանից և ժողովրդից իր էությունն: Երկուց տերանց ծառայելը կրկնակի անտանելի է, մանավանդ խղճի խնդիրներում, այն էլ կրոնականի համար: Երբ մարդու մեջ պակասում է շիտակությունը, մյուս առաքինի կողմերն անգամ կորցնում են իրենց արժեքը կամ փայլում են կեղծ փայլով: Հ<այր> Գալեմքեարյանը պետք է կշռի դներ, որ Նուրտինյան ներկա լինելով իր ուսուցչի մահվան և նրա վերջին օրերին, երբ Սարգիս իրոք ջանք չէր խնայում իր ջերմ կաթոլիկությունը ցուցանելու Հռոմի հանդեպ, ակամայից հետադարձ լույսով է ներկայացնում Սարգսի կյանքն ընդհանրապես: Նուրտինյանի կարծիքով, Սարգիս ի բնե կաթոլիկ էր. նույնը ասում է և իր հոր հա-

---

Պոլսում բնակություն է հաստատում ոչ այլուր, քան Սամաթիայի Ս. Գևորգ եկեղեցում գտնվող Ս. Էջմիածնի նվիրակ Սիմեոն վրդ. Երևանցու մոտ (տե՛ս Գ. Բամպուքճյան, Հովհաննես Պատրիարք Կոլոտ, էջ 193): Բացի այդ, նույն Սիմեոն վարդապետը Սարաֆյանին անվերադարձ տրամադրել է 100 ոսկի (անդ, էջ 194):

[39] Հետաքրքիր է, որ Մխիթարյանները բացահայտորեն կասկածանքով վերաբերվեցին Ս. Սարաֆյանի այդ փորձերին: Որ Ս. Սարաֆյանի և Մխիթարյանների միջև գոյություն ունեին ակնհայտ տարաձայնություններ, խոստովանում է անգամ ինքը՝ աբբահայր Ստ. Մելքոնյանը (տե՛ս Ս. մեմճեանց, Նոր նյութեր, էջ 26-27):

[40] Ն. Ադոնցի սույն ենթադրությունը հեշտությամբ հիմնավորվում է Վենետիկի պապական նվիրակ Կարաչոլիի 1745 թ. հոկտեմբերի 22-ի Պապին հղված զեկուցագրով, որտեղ նշվում է, թե Սարգիս արքեպս. Սարաֆյանը մտադիր է Վենետիկում հիմնադրել հայկական վարժարան՝ դասավանդելու համար հայ պատանիներին գրականություն և կաթողիկե վարդապետություն, ինչպես նաև «ունի բազմաթիվ գրքեր ալ տպագրելու ծրագիր» (տե՛ս Ս. մեմճեանց, Նոր նյութեր, էջ 8):

մար, որից թեև զրկվել էր 7-ամյա հասակում, բայց գիտե, որ «դաւանութեամբ ուղղափառ կաթողիկեայ էր, բայց ընդչաց վախէն ծածուկ կը պահէր» (էջ 148):

Նկատված թերությունները հստակ են և մյուս անձանց կենսագրություններում. նույն միակողմանիությունը և ընդ կրոնական հայեցակետը: Հարկավոր ենք համարում շեշտել, որ թերի և անբավարար լուսաբանությունը ընդգծելով, չենք կարող ուրանալ գրքի՝ Ա<այր> Գալեմքեարյանի աշխատության մեծ արժեքը: Այստեղ ամբարված են հարուստ նյութեր, տքնաջան աշխատանք, մանրակրկիտ դիտողություններ, որոնք իրենց նշանակությունն ունեն և կպահեն, անկախ լուսաբանությունից և ըստ ամենայնի արժանի են խրախուսանքի, մանավանդ որ արժ<անապատիվ> Ա<այրը> խոստանում է լույս ընծայել ստվար աշխատությունը՝ նվիրված հայ կաթոլիկ հասարակության 1800-1830 թթ. պատմության[41]:

Սրտով ցանկանում ենք, որ նոր երկը գերծ լինի նկատված թերություններից և փոխան կաթոլիկ տեսակետի, առաջ բերվի որևէ պատմական ճշմարիտ տեսություն, որպեսզի գիտական հիմք չլինի կրկնել կաթոլիկ հետազոտողների հասցեին այն, ինչ որ Ա<այր> Գալեմքեարյանը ասում է ոչ կաթողիկեա մասին. «Դժբախտաբար կաթողիկեայ հասարակութեան վերայ ոչ-կաթողիկէից գրածները գրեթէ ամենքն այսպես սխալ կամ խեղաթիւրեալ են» (էջ 363-364):

Ն. ԱԴՈՆՑ

15 փետ<տրվարի>, 1910 թ.
Ս. Պ<ետերբուրգ>

---

[41] Իրոք, Գ. Գալեմքեարյանը մի քանի տարի անց հրատարակեց խոստացած աշխատությունը՝ «Կենսագրություններ երկու հայ պատրիարքներու և տասն եպիսկոպոսներու և ժամանակին հայ կաթողիկեայք» (Վիեննա, 1915) խորագրի ներքո:



ԱՅՇԵՄԻԿ ԿՈՐԿՈՏՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԵՍԱՐԱՑՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նոր Ջուղայի գաղթօջախը Էականորեն տարբերվում էր նույն XVII դարի մյուս բոլոր գաղթավայրերից, որոնց մեջ առավել կազմակերպվածն ու հայահոծը լեհահայությունն էր: Նիկոլ Թորոսովիչի հարուցած խնդիրներից ու գործողություններից առաջ էլ լեհահայությունը, եկեղեցական ավանդույթներին հարազատ մնալու պարագայում իսկ, լեզվա-մշակութային առումով բավականաչափ խոցելի էր դարձել: Միայն եկեղեցական արարողության շրջանակներում մայրենի լեզվի գործածությունը, բնականաբար, անկարող պիտի լիներ արգելակել մշակութային խորթացման ընթացքը և, համապատասխանորեն, տեղի պիտի տար մասամբ լեհերենի և առավել կշռելի չափերով՝ Ղրիմից Լեհաստան վերաբնակված հայերի բերած ղըփչաղերենին, որ արդեն հասցրել էր նաև գրոց լեզու դառնալ՝ պահպանելով հայագիր լինելու և հայոց միջավայրում գործածվելու առանձնությունը: Հայոց բնաշխարհիկ հոգևոր կենտրոններից հեռու լինելու, հաճախակի երթևեկի պակասի և հայախոս նոր զանգվածներ ընդունելու բացակայությունը աստիճանաբար հանգեցրել էին մատենագրական-մշակութային ավանդների թուլացման, ուստի և ծայր առած կաթոլիկացումը չհանդիպեց սպասելի վարդապետական ընդդիմության, թեև հավատացյալների միջավայրում նոր դավանությանը որդեգրվելու ջերմեռանդություն չկար: Լեոյի դիպուկ գնահատությամբ՝ «Լեհաստանի ճոխ ու փարթամ հայ գաղթա-

կանության մտավոր ողորմելի կացության մի ամենամեծ փաստն էլ այն է, որ նա տեղ չունի մեր տպագրության պատմության մեջ... Ամեն օր շփվելով գերմանացի և լեհ ազգերի հետ, ունենալով մի այնպիսի կենտրոն, ինչպես Լվով քաղաքն էր, հայերը տպարան չհիմնեցին, գիրք չտպագրեցին: Մեր խոսքը բուն լեհահայերի մասին է, թե չէ՝ XVII դարի առաջին հայ տպագրությունը լույս է տեսել հենց այդ Լվով քաղաքում («Սաղմոս», 1616 թ.): Բայց Լեհաստանի այս առաջին և վերջին տպագրությունը եղել է Հայաստանից եկվոր մի հայի, բաղիշեցի Քարմատանենցի ձեռքով, ուրեմն միայն տպագրության տեղովն է լեհահայ գաղթականության վերաբերում»: Եվ ապա՝ «Զարմանալի չէ, որ նույնիսկ եկեղեցական գրքեր արտագրելը Լեհաստանում, ինչպես երևում է հիշատակարաններից, մեծ մասամբ ընկած է Հայաստանից գնացած հոգևորականների վրա»[1]: Այս գնահատությունը տալուց հետո շուտջ մեկ դար է անցել, բազում նոր աղբյուրներ ու անուններ են երևան հանվել, բայց Լեոյի եզրակացությունը այսօր էլ էական սրբագրությունների ենթակա չէ: Հիշյալ առումներով միանգամայն այլ էր մշակութային կացությունը Նոր Ջուղայի հայության միջավայրում. նրանք Հայաստանից եղած զանգվածի առաջին կամ ամենաշատը՝ երկրորդ սերունդն էին ներկայացնում, կատարելապես ու հիմնովին հայախոս էին, բացառիկ սերտությամբ կապված էին բուն հայոց միջավայրի, մասնավորապես Մայր Աթոռի հետ, մասնակից ու ոչ հազվադեպ էլ թելադրող էին հայաստանյան հոգևոր-դավանական ու մշակութային անցուդարձերին: Վերաբնակությունից մեկ-երկու տասնամյակ անց վանական կենտրոն ու դպրանոց հաստատելը լավագույնս ապացուցում էր, թե գաղթաշարժի ճանապարհներին անլուր զրկանքներ ու տառապանքներ կրած Ջուղայի և Արարատյան դաշտի հայությունը, մշակութային արժեքների գնահատության ու պահպանության առումով, ոչ մի չափով չէր օտարվել հայրենի ավանդապահ միջավայրից: Նույն Լեոյի խոսքերով՝ «Հայաստանից այստեղ էին փոխադրված բազմաթիվ գրքեր, այնպես որ՝ Ամենափրկչի վանքը այն ժամանակներում կարող էր Հայաստանի ամենահարուստ գրադարանը համարվել, իսկ Ջուղայի առաջնորդ Խաչատուր Կեսարացին ամեն ջանք գործ էր դնում մի լավ դպրոց էլ պահելու վանքում»[2]: «Հասկանալի է,- շարունակում է նույն գիտնականը,- որ Ամենափրկչյան վանքի շրջանում պիտի լավ զգացվեր տպարանի կարևորությունը: Եվ որովհետև անկեղծ ոգևորությունը ընդունակ է գործ ստեղծել նույնիսկ ոչնչից, ուստի և Խաչատուր վարդապետը իր օգնականների հետ գլուխ բերեց մի այնպիսի գործ, որ ավելի հրաշքի էր նման»[3]: Այդ «հրաշքը» ճիշտ հասկանալու և գնահատելու համար անհրաժեշտ է արծարծել դրա դրդիչ պարագաները: Եթե աչքի անցկացնենք XVI դարի վերջին քառորդի և XVII դարի առա-

---

[1] Լեո. Հայկական տպագրություն. Հայերը նոր պատմության մեջ. պատմական-գրական տեսություն: Թիֆլիս, 1904. էջ 184:

[2] Անդ. էջ 216:

[3] Անդ. էջ 217:

ջին տասնամյակների հայերեն գրքերի հրատարակությունները, ապա կհամոզվենք, որ դրանց մեջ զգալի են հայ ընթերցողին հասցեագրված «Դաւանութիւն ուղղափառութեան» (1584, Հռոմ), «Դաւանութիւն հաւատոյ» (1596, Հռոմ), «Միաբանութիւն հայոց ընդ Հռոմէական Սուրբ Եկեղեցուն» (Հռոմ, 1623), «Առաւել պարզաբանութիւն քրիստոնէական վարդապետութեան» (1630, Հռոմ, 1634, Փարիզ) կաթողիկե քարոզչական հրատարակությունները: Նրանց հետ զուգընթացաբար լույս էին տեսնում լատիներենին ու կաթողիկե ծիսարանին ծանոթացնող «Բառգիրք»-եր, «Այբուբեն»-ներ, «Աղօթագիրք»-եր, «Սաղմոսարան»-ներ և այլն: Այսօրվա պատմական հայացքով դիտարկելիս, դրանք բոլորը, հարկավ, հայագիտությանը զբաղեցնող հրատարակություններ են, բայց նրանց բուն գործառական նպատակը Հայոց Եկեղեցին, լեզուն ու մշակույթը ներկայացնելը չէ, այլ քարոզիչների համար գործունեության դյուրություն ստեղծելը, գրագիտություն տարածելու ճանապարհով ազգային Եկեղեցու հավատացյալին պատկանող ընթերցողին դեպի կաթոլիկություն հրապուրելը: Պատմական հեռանկարի առումով գուցե նման գնահատությունը միակողմանի կամ ծայրահեղացված է թվում, բայց այլ կերպ ինչպես բացատրել այն արգելանքները, որ Հռոմը գործի էր դնում Հայոց ազգային Եկեղեցին ու նրա դավանությունը ներկայացնող՝ Հայաստանից Արևմուտք եկող հրատարակիչների գործունեությունը խափանելու համար: Այսպես, Նորջուղայեցի վաճառականներն ու հոգևորականները մինչև 1640-ական թվականները փորձում էին հայերեն Ս. Գիրք տպագրել Հռոմում, բայց Ս. Ժողովը չէր արտոնում կամ ձեռնպահ էր մնում, քանի որ, ըստ իրավասուների համոզման, հայերեն գրքերը, այդ թվում և Ս. Գիրքը «տպագրութեան յանձնելէ յառաջ պէտք է ուղղել մոլար մտքերը, որոնցմով լի է, կ'ըսեն, այն մատեանը»[4]: Թե հավատո տարածման առաքելություն ունեցողները որքան հիվանդագին էին գնահատում Վուլգատայից Աստվածաշնչի հայերեն խմբագրության ունեցած տարբերությունները՝ կարելի է հավաստիանալ 1670 և 1671 թվականներին այդ հաստատության նախագահին Ոսկան Երևանցու գրած նամակներից[5]: Եվ այս այն դեպքում, երբ արտոնություն տվող-չտվողները հրաշալի գիտեին, թե «ի յամենայն ազգս Հայոց, որ է շատ եւ բազում, ճորով թէ գտուի Ի (20) Աստուածաշունչ ընդ ամէնն եւ կու նստի գինն ԲՃ (200) կամ ԳՃ (300) ֆլի (ֆլորինի) մէկն եւ չի գտուիլ, եւ յոյժ պիտանի եւ՝ վարդապետաց, եւ՝ հայրապետաց, եւ՝ քահանայից...»[6]: Հայոց Եկեղեցու ներկայացուցիչներին չէին արտոնում, բայց իրենք հրաշալի գիտակցում էին հայագիր գրականության կարևորությունը: Էջմիածնի Մայր

---

[4] Տե՛ս Հ. Ն. Ակինեան, Մովսէս Գ Տաթեւացի Կաթողիկոսն եւ իր ժամանակը, Վիեննա, 1936, էջ 404:

[5] Տե՛ս «Բազմավէպ», 1966, էջ 299-301:

[6] Տե՛ս Ա. Ալպոյաճեան, Գրիգոր Կեսարացի պատրիարք եւ իր ժամանակը, Երուսաղեմ, 1936, էջ 14: Հմմտ. Ալեքս. վրդ. Պալճեան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս եւ միութեան նոցա ընդ Հռոմէական եկեղեցւոյ ի Փլորենտեան սինոդոսի, Վիեննա, 1881, էջ 158:

Աթոռին հասցեագրված թղթերից մեկում Գրիգոր Կեսարացին արձանագրում և զգուշացնում է. «... եւ է որ ի ժամանակս ի յաստիճանաւորացն Հայոց որ չեն տունկ երկնաւորին՝ խլեալ ի բաց կորնչին ի գաւթէ սրբոյ եկեղեցւոյ, որպէս Յոհան Մործորեցին եւ աշակերտն Սարգսի վարդապետի. եւ միշտ ցանեն զորոմն չարացն որպէս ի մերում ժամանակի անիծեալ Նիկոլն Լեհացի եւ շնձեր չՅովանէս Խուլն Կոստանդնուպոլսեցի: Եւ է որ սերմանեն միշտ, զանխլաբար ճահուկքն որք են վարժ լեզուիս ի գրոց Հայոց, որ բազում անգամ ի մերում աւուրս Էմ (700) եւ այլ աւելի փոքրիկ տետրակս գրեալ հայոց գրովն զհերձուածողական դաւանութիւնս իւրեանց եւ թերեալ շողոքորթելով ցրուեալ ի մէջ Հայոց, եւ իմ տեսեալ զբազումս ի տգիտաց, որ առեալ են եւ գրեալ ի մէջ սուրբ Գրոց»[7]: Մի խոսքով՝ արդարացի է Ա. Ալպոյաճյանի եզրակացությունը, թե «Հոռմ իր քարոզիչներու միջոցով, որոնք ծանօթութիւններով ու գիտութիւններով զինուած էին եւ տպագրութեան պէս գերազանց միջոց մը ալ տրամադրելի ունէին, կը սպառնային Հայ Եկեղեցին իր սրտէն, իր կեդրոնին մէջ զարնել»[8]:

«Տպագրության պես գերազանց միջոցի» կարևորությունը գիտակցում էին Խաչատուր Կեսարացուն ժամանակակից գրեթե բոլոր երևելի գործիչները, բայց և հստակ գիտեին այն գործնականի վերածելու հարցում եղած փաստական դժվարությունները: Բոլոր պարագաներում պետք էր շահել Պապի և կաթողիկե մյուս մեծավորների կամակցությունը՝ եվրոպական կենտրոններ տպագրության արվեստի մեջ վարժվող մարդ ուղարկելու, այդ իսկ կենտրոններում հայագիր տպատառերի մայրեր պատրաստելու և տեխնիկական բնույթի բազմաթիվ խնդիրներ լուծելու համար, իսկ այդ ամենի համար անհրաժեշտ էր պատկառելի նյութական հնարավորություն, որպիսին հարկերի ու պարտքերի տակ կքած Մայր Աթոռը չուներ: Թե՛ Մովսես Տաթևացին, և թե՛ նրան հաջորդած Փիլիպոս և Հակոբ Ջուղայեցի Կաթողիկոսները տպագրական գործը կազմակերպելու նախաձախնդիր գործիչներ էին, ուստի բնական է, որ նրանք ըստ ամենայնի պատրաստակամ էին քաջալերելու թեմերում երևան եկած ամեն մի նախաձեռնության: Եվ քանի որ նյութական հնարավորություններ կարելի էր ակնկալել Նոր Ջուղայի առևտրական ու արհեստավորական շրջանակներից, բնական պիտի նկատել, որ տեղում տպարան ստեղծելու հանդգնությունն ունեցավ ժամանակի առավել լուսամիտ ու ձեռներեց վարդապետներից մեկը՝ Գրիգոր Կեսարացու և Մովսես Տաթևացու աշակերտ Խաչատուր Կեսարացին: «Հանդգնություն» ասելով մենք առաջին հերթին նկատի ունենք այն պարագան, որ գրքի տպագրությունն էին ձեռնարկում այդ արվեստին ու արհեստին միանգամայն անծանոթ, անվարժ մարդիկ՝ թերևս միայն տպագիր գրքի փաստական

---

[7] Մատենադարանի ձեռագիր № 1771, էջ 311ա: Հայոց գրավոր լեզվին վարժ «Ճահուկք» - այսինքն «ճահկեցիներ» ասելով հեղինակը նկատի ունի Ճահուկում հաստատված և լայն գործունեություն ծավալող լատին քարոզիչներին:

[8] Ա. Ալպոյաճեան, նշվ. աշխ, էջ 19:

օրինակ ձեռքին ունենալով: Պատահական չէ, որ Խաչատուր Կեսարացին իր առաջին տպագիր գրքի հիշատակարանում գործը գլուխ բերողներին, այդ թվում և իրեն, կոչում է «տառապեալ անձինք» և փաստորեն հիշատակարանը նվիրում Մովսես Կաթողիկոսի անձը ներկայացնելուն, քանի որ նա «յարաժամ ցանկայր տարագրութեանս, զի յառատութենէ գրոց ամենեքեան դիւրաւ վարժեսցին, սակայն չեղեւ ձեռնահաս, զի փոխեցաւ աստի յանանց կեանսն.... կացեալ կաթողիկոս չորս ամ եւ չորս ամիս»[9]: Խաչատուր Կեսարացին ու նրա աշակերտները «տարի մի է եւ հինգ ամիս, որ զցայգ և զցերեկ անդադար աշխատելով», հաջողում են 1638 թ. լույս ընծայել փաստական 604 էջ կազմող (Ա.Ը-38 մամուլ) «Սաղմոսարան» գիրքը: Այս տպագրությունը կարելի է նկատել գրատպության գյուտի յուրատեսակ կրկնում, որովհետև Խաչատուր վարդապետի սրտաբաց խոստովանությամբ «ոչ ենք տեսեալ ի վարպետէ եւ ոչ ունիմք ուսուցիչ, բայց միայն զՀոգին Սուրբ եւ զիղձս եւ զկենդանի աղօթս հոգեւոր հօրն մերոյ, գնացելոյ առ տէր»[10]: Թե ինչպիսի դժվարություններ ու հմտություններ պիտի հաղթահարեին Խաչատուրն ու նրա «անապատականները»՝ կարելի է գեթ մասամբ կռահել այն փաստից, որ «Սաղմոսարանը» ավարտելուց հետո էլ աշխատողները իրենց այլևս հմտացած չէին համարում, ուստի մեզ արդեն ծանոթ Հովհաննես վարդապետ Ջուղայեցի Քթոեշենցին ուղարկեցին Իտալիա՝ տպագրության արվեստի մեջ հմտանալու: Հիշատակարանում, իր աշխատակից-աշակերտներին թվարկելիս, Խաչատուր Կեսարացին երկու անգամ մասնավոր ընդգծումով տալիս է վարպետ Հակոբջանի (Ցակոբճանի) անունը, որից կարելի է եզրակացնել, ինչպես մենք առիթ ենք ունեցել ասել, թե տառամայրեր ստեղծելը նրան է հանձնարարվել: Ինչ վերաբերում է բոլորգիր ու գլխագիր տառերի արտաքին նկարագրին, ապա այս խնդրում ևս Խաչատուր վարդապետի մասնակցությունը, գուցե ավելի ճիշտ է ասել՝ խորհրդատվությունը, կասկածից դուրս է, քանի որ ծաղկողի նրա հմտությունները վկայված են աղբյուրներում: Ծաղկողի ներկայությունը կռահելի է հատկապես, այսպես կոչված, «թռչնագրերի» գործածությամբ, որի նմուշը կարելի է տեսնել ընդարձակ հիշատակարանի սկզբի «Փառք» բառի մեջ[11]: Գլխագրերի վերաբերմամբ անհրաժեշտ է մասնավորեցնել, որ իբրև նախատիպ ընտրված են բոլորգիր երկաթագրով գրված վաղ շրջանի ձեռագրերի կամ վիմագրերի գրչությունից քաղված նմուշները: Հիշատակարանի ավարտի յոթ տողը կատարելապես վիմագրի տպավորություն է թողնում: Որքան էլ զարմանալի է, Նոր Ջուղայի թանգարանում պահպանված և այսօր ցուցադրվող տառատեսակները ավելի շուտ փորձերի նմուշներ են, քան առաջին իսկ տպագրության մեջ գոր-

---

[9] «Հայ գիրքը 1512-1800 թվականներին», Երևան, 1988, էջ 22:

[10] Անդ:

[11] Հիշատակարանի երկու էջի նմանահանությունը տպագրված է Լ. Գ. Մինասյանի «Նոր Ջուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը» աշխատության 19 և 21-րդ էջերում:

ծածված գրեր[12]: «Սաղմոսարանի» օրինակների բացակայությունը Հայաստանի գրապահոցներում մեզ զրկում է նրա ընդգրկած տեքստի բնագրական ուսումնասիրության հնարավորությունից, իսկ առկա նկարագրություններում չի ճշգրտվում, թե ձեռագրերով հայտնի սաղմոսարաններից ո՞ր ընդօրինակությունն է հիմք ծառայել այս տպագրության և ապա՝ Խաչատուր Կեսարացին բնագրի վրա ի՞նչ ծավալի ու ընդգրկման աշխատանք է կատարել[13]: Ասենք, սակայն, թե հրատարակիչ-աշխատասիրողը հոգ է տարել բնագիրը ընկալելի դարձնելու, ուստի այն դյուրընթեռնելի լինելու համար, նկարագրողների չափորոշմամբ, շարված է «մոտ 16 կետաչափ բոլորագրով, վերջին աղոթքը և հիշատակարանը՝ 12 կետաչափ բոլորագրով»[14]:

Դառնալով գրքի բովանդակային նկարագրին ու գործառական նպատակադրումին, վերստին պիտի հիշել, որ այն ուներ ուսուցողական և արարողական կիրառում: Ուսուցողականի կապակցությամբ բուն հիշատակարանում արդեն ասված է, թե Մովսես Կաթողիկոսը «յամենայն տեղիս դասատունս եւ դպրոցս կարգեալ եւ լուսաւորեաց զազգս Հայոց եւ յարաժամ ցանկայր տպագրութեանս», ուրեմն նորաբաց դպրոցներում «Սաղմոսարանը» ինքնատիպ ընթերցարանի դեր էր կատարում, ինչպես ժամանակին Սողոմոնի Առակներն էին: Արարողական նշանակությունը պատկերացնելու համար պիտի դիմել Հայոց Եկեղեցու «Պատարագամատույցին». ժամասացությունն սկսվում և ավարտվում է 131-րդ և 33-րդ «Սաղմոսների» կատարմամբ, իսկ Պատարագի բուն ընթացքում տասնյակ անգամ սաղմոսերգության են դիմում[15]:

Խաչատուր Կեսարացու լույս աշխարհ բերած երկրորդ տպագրությունը ևս ծիսական կիրառություն է՝ «Խորհրդատետր» (Նոր Ջուղա, 1641 թ.), ծավալով նախորդից անհամեմատ փոքր և խիստ կարճառոտ հիշատակարանով՝ «Ով սուրբ պատարագօղ, յիշեա զԽաչատուր վարդապետս եւ զմայր իմ: Թվ. ՌՂ (1641) կազմեաց»: Պիտի ենթադրել, թե նախորդ տպագրությունից հետո Կեսարացին նոր մայրեր ու

---

[12] Պահպանված նմուշները տե՛ս Լ. Գ. Մինասյանի հիշյալ գրքում, էջ 35:

[13] «Սաղմոսարանի» 1638 թ. տպագրության երկու օրինակ է պահպանվել՝ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մատենադարանում և Օքսֆորդի Բոդլեյան գրադարանում:

[14] «Հայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 22:

[15] «Սաղմոսարանից» քաղված բնագրերի քանակն ու հաջորդականությունը պատկերացնելու համար կարելի է դիմել վերջերս հրատարակված «Պատարագ Հայաստանեայց Եկեղեցւոյ» գրքին (գրաբար, աշխարհաբար, անգլերեն, տառադարձությամբ, եվրոպական ձայնագրությամբ, ներածությամբ և ծանոթություններ): Գլխավոր խմբագիր՝ Հ. Դանիել Ֆընտրգեան. երաժշտական բաժնի խմբագիր՝ Սոկրատ Պոյաճեան. Նիւ Եորք, 2000: «Սաղմոսարանի» գործածության կապակցությամբ ուշագրավ տեղեկություն է հաղորդում 1662 թ. Զինաստան առաքելության մեկնելու ճանապարհին Էջմիածնի Մայր Աթոռ այցելած Հելիոպոլսի արքեպիսկոպոս François Pallu-ն. Էջմիածնի ժառանգավորաց 40 աշակերտները հիշատակելուց հետո նա ավելացնում է, որ նրանք գրել-կարդալ և «Սաղմոսարանը» անգիր են սովորում, ինչը և կազմում է նրանց ողջ գիտությունը (տե՛ս Հ. Պերպերեան. Էջմիածնի վանքը 1662-ին. «Հասկ», 1950, № № 8-10. էջ 271-273):

տառեր էր պատրաստել, քանի որ «Խորհրդատետրի» շարվածքի միջտառային և միջբառային բացվածքները համեմատաբար մեծ են, իսկ գրերը՝ մասամբ ավելի թեք[16]:

Գրերի խոշորությունը, ինչպես նաև արարողական կարգին վերաբերող միջամտությունների մանրագիր առանձնացումը, լուսանցագիր դերաբաժանումներն ու այլ իրողություններ վստահաբար զուտ գործնական կիրառություն են վկայում: Այդ նպատակին է ծառայում միաժամանակ կարմիր թանաքի ներկայությունը որոշ խորագրերում: Ինչպես երևում է, Կեսարացին մտահոգություն ուներ ոչ միայն տպագրական եղանակով բնագիր բազմացնել, այլ նաև, գործածության կերպից ելնելով, նպատակին ծառայող գրչություն ապահովել: Այդ խնդիրը բացորոշ կդառնա, եթե նույն՝ 1641 թ. լույս տեսած երկու հրատարակությունները միմյանց համադրենք:

Միանգամայն գիտակցելով տպագրության արվեստի եվրոպական նվաճումներին ծանոթանալու և իր հիմնարկած տպարանում կիրարկելու կարևորությունը, Խաչատուր Կեսարացին չէր կարող դադարեցնել գրքերի տպագրությունը և սպասել Իտալիա ուղարկած Հովհաննես վարդապետի հմտացած վերադառնալուն և տպագրական պարագաներ բերելուն: Ինչպես երևում է, ազգային եկեղեցու վարդապետությամբ շնչող արարողական ու քարոզչական գրականության պահանջարկը օր-օրի ավելի անհետաձգելի էր դառնում: Բացի նորաբաց կրթարանների ու եկեղեցիների թելադրանքից, հոգևոր գրքեր բազմացնելու հրատապությունը, ինչպես արդեն քանիցս ընդգծել ենք, պայմանավորված էր նաև Պարսից մայրաքաղաքում և հայ բնակչություն ունեցող գավառներում կաթողիկե վարդապետության քարոզիչների բազմությամբ ու ազդեցիկ գործունեությամբ: Խաչատուր Կեսարացու համար դժվար չէր կռահել, որ Պատարագի ընթացքին առնչվող նախորդ երկու հրատարակությունները կարևոր են, բայց ոչ բավարար հոգևոր սպասավորների գրագետ նոր սերունդ պատրաստելու համար, ուստի նա միաժամանակ ձեռնամուխ է լինում ազգային եկեղեցու ճանաչած սրբերի վարքերի ու վկայաբանությունների ժողովածու հրատարակելուն, որպիսիք ընդգրկում են, բացի «Հայսմավուրքներից», նաև «Վարք հարանց», «Հայելի վարուց» կոչվող ժողովածուները: Կանխապես կարելի է ասել, թե ինքնաստեղծ գրերով ու տպագրական պարագաներով այդքան ծավալուն ժողովածու հրատարակելու միտքն ինքնին մշակութային արձանագրելի վերելք է, դեպի որը իր աշակերտներին հետևողականորեն տանում է Խաչատուր

---

[16] «Խորհրդատետրի» առաջին և վերջին էջերի համանահանությունը տե՛ս Լ. Գ. Մինասյանի հիշյալ գրքում, էջ 25 և 27: Ի տարբերություն Լ. Մինասյանի առաջարկած հերթականության, «Հայ գիրքը 1512-1800 թվականներին» նկարագրությունը կազմողները «Խորհրդատետրը» համարում են Կեսարացու երկրորդ հրատարակությունը և ոչ երրորդ: Հրատարակությանը վերաբերող գրականության մատենագիտությունը տե՛ս նշված նկարագրության մեջ, էջ 22: Պաշտամունքային կամ ծիսական հուշարձաններում կաթողիկե վարդապետության թելադրող սրբագրությունների հարցը XVII դարի 70-ական թվականներին քննության առարկա դարձավ Հավատասփյուռի ժողովի նիստում: Խնդրի հանգամանալի քննությունը տե՛ս Կարապետ եպս. Ամատունի, Ոսկան վրդ. Երևանցի, Վենետիկ, 1975, էջ 179:

վարդապետ Կեսարացին: Գործի ծանրությունն ու բովանդակային-գաղափարական հագեցվածությունը ակներև դարձնելու համար այստեղ բերում ենք ժողովածուի ցանկը, որ չի տրված հնատիպ գրքերին վերաբերող նկարագրություններում: Ահավասիկ՝

«Ցանկ է գլխաւոր բանից Հարանց վարուց սուրբ գրոց.

Վասն առաջաբանութեան գրոց վարուց սրբոց հարցն:

Վասն կատարեալ առաքինութեանցն:

Վասն զի պարտ է մեզ յամենայն անձնէ հետեւել միայնակեցացն հանդարտութեան:

Վասն զղջութեան և բարեմիտն գթածութեան:

Վասն պահոց եւ բազմադէմ առաքինութեանց եւ ոչ ի կերակրոց միայն ի բաց կեալ պահել:

Վասն զգուշութեան ի պատերազմաց, որք ի պոռնկական ցանկութեանց լինին:

Վասն անընչութեան եւ ազահութեան եւ որ ի սոցանէ ախտ կամ առաքինութիւն:

Վասն արիութեան եւ համբերութեան խրատք սրբոց հարցն:

Վասն ոչ առնելոյ ինչ ի ցոյցս մարդկան:

Վասն ոչ բամբասող լինելոյ ումեք եւ ոչ դատելոյ ընկերն:

Վասն աստուածական դատաստանաց դատելոյ զգործ իւրաքանչիւրոյ:

Վասն զի պարտ է միշտ արթուն եւ զարթ լինել եւ զգաստ:

Վասն զի պարտ է միշտ արթուն եւ յերկարաձիգ աղօթել:

Վասն զի հարկ է օտարասէր եւ ողորմած լինել:

Վասն զի պարտ է միշտ առ հոգեւոր ուսուցիչս աներկբայ հնազանդութիւն ունել:

Վասն բարւոք խոնարհութեան եւ ոչք նոքօք լուսաւորեալք են:

Վասն անյիշաչարութեան, անոխակալութեան, որ է նմանութիւն Աստուծոյ:

Վասն սիրելոյ զԱստուած եւ զընկերն, որ է գլուխ ամենայն պատուիրանաց:

Վասն հոգեւոր հարցն, որք էին մարգարէաշնորհք:

Վասն նշանագրեաց եւ սքանչելագործ հարցն:

Վասն քաղաքավարութեան նոցին, որ զամենայն առաքինութիւնս ուղղեցին:

Վասն պատմութեան երկոտասանիցն հեռացելոց աշխարհէ սրբոց հարցն:

Վասն գիտութեան քաղաքավարութեանց, որք կատարեալք են յառաքինութիւն:

Վասն պատմութեան որք ի ճգնութիւնս ծերացեալք էին:

Վասն խրատու հարցումն համառօտ առ սուրբն Մակար:

Պատմութիւն Պօղոսի Լուստրացւոյ:

Պատմութիւն դրախտին:

Պատմութիւն Ալէքսիանոսի:

Պատմութիւն Ներսեհի:

Պատմութիւն որդւոյ թագաւորին Հռոմոց եւ այլ բանք սրբոցն, որ մինչեւ ի վերջն են:

Այս գլուխներից շատերը պայմանականորեն են խորագրված. նրանց տակ հաճախ ներկայացվում են տարբեր աղբյուրներից, մանավանդ սրբերի վարքերից ու վկայաբանություններից քաղված ընթերցումներ, խրատականներ, ասույթներ և այլն: Կան և ամբողջական վարքեր: Այսպես, օրինակ, «Պատմութիւն վասն Պօղոսի Լուսաւորչոյ» վերնագիրը կրող 26-րդ գլուխն իր մեջ ամփոփում է (էջ ՇԽԴ-544-ՉԴ-704) մի քանի տասնյակ վարք ու պատմություն, այդ թվում՝ Վասն սքանչելեացն, որ յԱնտիոք ի վանս կուսանացն եղեն, Վարք Երանուհի կուսին Մարիամու, որ Մարինոս անուանեցաւ, Վասն բարձրամիտ Անապատականին, Պատմութիւն վարուց Յոհաննու Գբնեցոյն, Պատմութիւն երանելի սուրբ հօրն Մակարայ Անապատականի, Վասն որք զդրախտին լեառն գտին եւ զստորոտն հասեալ տեսին (այս ավանդությունը վերաբերում է Ներսես Կլայեցու ժամանակներին), Երանելոյն Մակարիոսի, որ Ի (20) մղոնաւ մերձ դրախտին բնակէր, գրեաց զպատմութիւնս Թէոփիլոս Կրօնաւորն, Վասն Սրապիոնի ծերոյն, Վարք Աբբա Մարկոսի Միայնակեցի, որ բնակեալ էր ի լերինն Թարմակիայ, զոր ասացեալ է Սրապիոնի սուրբ հօրն, Վարք Պօղոսի Միայնակեցին, Վարք երանելոյն Մարտիանոսի կրօնաւորի, Վարք երանելոյն Սիմէոնի Սիւնակեցւոյ, Վարք երանելոյն Իլարիոնի և այլն:

Բնականաբար հարց է առաջանում հրատարակիչը ժողովածուն նույնությամբ գտել է որևէ ձեռագրում և տպագրությամբ բազմացրե՞լ այն, թե՞ տարբեր գրչագրերից քաղելով՝ ինքն է նպատակային մի գիրք ստեղծել: Դժբախտաբար միջնադարյան «Վարք սրբոց հարանց»-ների գիտական-քննական հրատարակություն դեռ չունենք, ուստի հարցի պատասխանը մնում է ապագային և անորոշ: Ինչ վերաբերում է Մխիթարյան հայրերի հրատարակած ժողովածուին[17], ապա կարելի է արձանագրել և՛ նույնություններ, և՛ տարբերություններ: Այսպես, Խաչատուր Կեսարացու հրատարակած Սիմեոն Սյունակյացի վարքը (էջ ՈԹ/609-ՈԺԱ/611) բառացիորեն նույնական է վենետիկյան ժողովածուի բովանդակած վարքի հետ (էջ 324-326), նույնը վերաբերում է երկու ժողովածուներում էլ Սիմեոնի վարքին հաջորդող «Վարք երանելոյն Իլարիոն կրօնաւորի» խորագիրը կրող երկին: Բայց և կան գլուխներ ու բաժիններ, որոնք ոչ միայն նույնական չեն, այլ նաև մեկում ներկայացված են, մյուսում՝ ոչ: «Վարք հարանցում» տեղ գտած առանձին պուժեներ ու դրվագներ իրենց նմանակներն ունեն «Հայելի վարուց» ժողովածուներում, միջնադարյան առակներ, քարոզներ բովանդակող հավաքածուներում: Ներկա պարագայում մեզ զբաղեցնողը բովանդակած նյութի աղբյուրագիտական հետազոտությունը չէ, այլ ինքը՝ տպագրության փաստը: Խաչատուր Կեսարացու հրատարակություններում

---

[17] «Վարք սրբոց հարանց եւ քաղաքավարութիւն նորին ըստ կրկին թարգմանութեան նախնեաց», հատոր Ա և Բ, Վենետիկ, 1855:

ձեռագրական ավանդույթի որոշ տարրեր (լուսանցազարդ, խորան, սկզբնատողի առանձնացում, դրվագի ավարտի շրջուն բրգաձևություն և այլն) շարունակում են կիրառություն ունենալ, բայց «Հարանց վարքն» իբրև շարվածք, ծավալ և տպագիր գիրք հիրավի «իր տեսակի մեջ մի կոթողական գործ է Նորահիմն մի տպարանի համար»[18]: Այս «կոթողական գործ» արարողների անուններն ու կատարածը բավական հանգամանորեն ներկայացված են գրքի հիշատակարանում. «Ցիշեսջիք եւ զհոգեւոր որդեակքն իմ զտէր Սիմէոն վարդապետն եւ զտէր Դաւիթ վարդապետն, որ յայսմ ամի շնորհիւն Աստուծոյ տուաք զաւազան երկոցունցն, եւ զպատուական ծերունի տէր Մկրտիչն, նաեւ զաշակերտակից սոցին զտէր Պաղտասարն, զտէր Սահակն, զտէր Յովանէսն, զտէր Նիկողայոսն, զտէր Միքայէլն, զտէր Աւետիսն, զՅովսէփն եւ զմեծ Յովանէսն, եւ այլ եւս բազումք մեծամեծք եւ փոքունք, զոր ձանձրութիւն է յիշելն»[19]: Ի տարբերություն նախորդ երկու հրատարակությունների, «Վարք հարանց»-ի թուղթն անգամ տեղում է պատրաստվել, և Խաչատուր Կեսարացին անհրաժեշտ է նկատել աշխատակիցներին թվարկելուց հետո այդ պարագան մասնավոր ուշադրության ներկայացնել. «եւ ամենեքեան օժանդակ են այսմ գործոյ՝ ոմն ի թղթի շինութեանն զի զթուղթն եւս ի տանէ եմք շինեալ, բայց նիւթի լաւագոյնն դժուարագիւտ լինելոյ սակս՝ այսպէս ձեռն ետ այժմուս, անմեղադիր լերուք»[20]: Վերջին արտահայտությունը մենք հասկանում ենք այսպես. որակով թուղթ հայթայթելը դժվար է եղել, ուստի ջանացել ենք տեղում (ի տանէ) ավելի որակյալ պատրաստել: Փաստորեն գրատպության գյուտը կրկնելուց բացի՝ կրկնել են նաև թուղթ պատրաստելու ոչ դյուրին եղանակը: Ընդ սմին՝ Կեսարացին չի հապաղում հավաստելու ընթերցողին, թե «Թերեւս յառաջանալով՝ լաւ եւս լիցի. ոմն ի կազմութիւն գրոցս, ոմն ի սրբագրութիւնն եւ այլք յայլ իմն գործս, զոր հատուցանողն բարեաց ըստ իւրաքանչիւր ջանի եւ վաստակոյ հատուսցէ բազմապատիկ՝ աստ եւ ի հանդերձելումն»: Թե միաբանության անդամների աստիճանական հմտացումը որքան հեռանկարային է ներկայանում վանահայր խմբագիր-հրատարակչին, կարելի է կռահել հիշատակարանի ավարտին «զփոքրագոյն աշակերտսն»՝ տեր Հակոբի, Մարգարեի, Հայրապետի, Անտոնի և Սարգսի (վերջինս կարող է հետագայի Սարգիս Երևանցին լինել) թվարկումից, որոնք «բազմաջանիւք եւ աշխատութեամբ եղեն ձեռնտու յայսմ տպագրութեանս»[21]:

---

[18] Լ. Գ. Մինասյան, նշվ. աշխ., էջ 22:

[19] [«Վարք հարանց», Նոր Ջուղա, 1641], էջ ՁԴ-ՁԵ: Հմմտ. Լ. Գ. Մինասյան, նշվ. աշխ., էջ 24, «Հայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 24: Վերջին երկու հրատարակություններում կան քնագրային մասնակի տարբերություններ, որ արդյունք են կա՛մ արտասանության, կա՛մ կրճատման:

[20] Անդ: Տրոհության նշանների մեր կիրառումը նշանակալիորեն տարբերվում է քնագրում եղածից ու հրատարակություններում գործածվածից, ուստի և կան մեկնական տարբերություններ:

[21] Խաչատուր Կեսարացու տպագրությունները առանձնանում են նկարագրական որոշ հատկանիշներով ևս. նախ՝ նրանք չունեն գրքերի համար սովորական համարվող տիտղոսաթերթ և ձեռագրերի նմանողությամբ սկսվում են գլխազարդով կամ խորանով (կիսախորանով): Ապա՝ գրչագրերի ավան-

«Վարք Հարանց»-ի տպագրության զուգընթաց, մասամբ նրանից ավելի վաղ՝ 1642 թվականի «յամսեանն Հայոց տրէի երեք և հոռմայեցոց յունուարի ի երկոտասան», Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի տպարանում լույս է տեսնում ծավալում մի նոր գիրք՝ «Ժամագիրք» կամ ավելի ընդարձակ՝ «Ժամագիրք ատենի Սաղմոսաց Դաւթի եւ կարգաւորութիւն հասարակաց աղօթից եկեղեցեաց Հայաստանեայց»[22]:

Եթե այս հրատարակությունը գրչության կատարելության, նույնիսկ թղթի ու տեխնիկական կատարման առումներով հարաբերենք «Վարք հարանց»-ին, հարկադրված պիտի լինենք վերստին ընդգծելու նախորդի գերազանցությունը: Սակայն այդ տարբերության հիմնական պատճառը որոնելի է գրքի կիրառական նկարագրի շրջանակում: «Ժամագիրք»-ը որոշակի իմաստով ուսումնական ձեռնարկ կամ միաբանների ընթերցելիք գիրք չէ, այլ պատարագիչների, այդ թվում և աշխարհական քահանաների ամենօրյա գործածելիք բնագիր, ուստի նրա գրերը, ինչպես և «Պատարագամատույց»-«Խորհրդատետր»-ինը խոշոր ու զատորոշ, տեսանելի պիտի լինեն, և խաչատուր Կեսարացին չի վարանել նորից դիմել խոշորագիր տառերին: Գլխագրերի, գլխազարդերի ու կիսախորանների ընտրությունը մնացել է նույնը, բայց մասամբ ավելացել է նրանց գործածության հաճախականությունը:

Սաղմոսների ավարտին և գլխավոր հիշատակարանից առաջ տպագրված է «Գովասանութիւն Սաղմոսին» չափածո խոսք, որ սկսվում է հետևյալ քառատողով.

Բանք Սաղմոսիս է պատուական,
Լցեալ հոգւովն աստուածական,
Որք ի յասելն օժարանան՝
Արքայութեան արժանանան:

Հաջորդող տասնհինգ ներբողական քառատողերից հետո գալիս է վերջին՝ հիշատակարանային քառատողը.

Ով վայելող սուրբ մատենիս
Մաղթեմ յիշել զեղկելիս՝
Ազարիայ շարող տառիս
Դաւթի սրբոյ երգարանիս:

դույթով հիշատակարան-հիշատակագրություններ կարող են ունենալ միջին էջերի հարմար նկատված տեղում: «Հարանց վարքի» հիշատակարանում նույնիսկ ասված է «... որք օգտիք ի սմանէ կարդալով կամ օրինակելով...» (էջ 26):

[22] Գրքի երկրորդ հիշատակարանում տպագրության «գոլորովին» (իմա՝ լիովին) ավարտի ժամանակ է նշվում նույն 1642 թվականի ապրիլ ամսի 21:

Պիտի ենթադրել, թե այս Ազարիան ինքն էլ Ներսոյեանի հեղինակն է: Նրա անունը վկայված է գրքի երկրորդ հիշատակարանում. «Աւարտ էառ Ժամագիրքս բոլորովին ի թուին Հայոց ՌՂ եւ Ա (1642) յապրիլ ամսոյ ԻԱ (21). շնորհօք Քրիստոսի Աստուծոյ մերոյ տեառն ամենակալի, որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն: Խնդրեմ ի ձէնջ, որք պատահիցէք այսմ տպագրութեանս, յիշեսջիք ի սուրբ յաղօթս ձեր զաշխատօղսն այսմ տպագրութեանս՝ զտէր Ցակոբն, զՄարգարէն, զԲաղդասարն, զՍարգիսն եւ զԱզարեան: Ընդ սոսին եւ նուաստ Սիմէօնն, որ սակաւ ինչ աշխատեցայ ի վերայ սրբագրութեան սորա: Եւ որ յիշէքդ՝ յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծմէ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն»[23].

Չափածոյի հիշատակարանային քառատողին հաջորդում է բավականաչափ մանրատառ հետևյալ շարունակությունը.

Նաեւ յիշել մաղթեմ ընդ իս
Եւ զՍարգիս ոմն՝ շինօղ թղթի եւ մրիս,
Միւսն՝ գիճուցօղ եւ տպօղ քարտիս:

Այստեղից արդեն կռահելի է դառնում աշխատակիցներից մի քանիսի մասնագիտացումը՝ շարող, թուղթ ու մուր (թանաք) շինող (պատրաստող), գիճուցող (իմա՝ խոնավացնող), տպող, անշուշտ նաև՝ կազմող: Երկրորդ հիշատակարանի կազմողը Խաչատուր Կեսարացին ինքը չէ, այլ նրա աշակերտ Սիմեոնը (ծանոթ փիլիսոփա՞ն, թե՞ մեկ այլ միաբան), որ գրում է առաջին դեմքով («սակաւ ինչ աշխատեցայ ի վերայ սրբագրութեան սորայ»): Վերջինս անհրաժեշտ է նկատում մասնավորեցնել Մովսես Տաթևացի Կաթողիկոսի տոնացուցային-ծիսական որոշ նորամուծություններն ու սրբագրումները[24]: Հետաքրքիր է հիշատակագրողի սեփական մոտեցումն այդ սահմանումներին. «Եթէ հաճեցին կամք եղբայրութեան ձերոյ՝ տեառն գոհութիւն, եւ եթէ ոչ ախորժիցէք՝ կամք ձեր եղիցին»: Նման մոտեցումը եկեղեցականին օժտում է արարողական ազատականությամբ, որ ամենևին բնորոշ չէ մըրցակցող կաթողիկե դավանությանը:

---

[23] Մեր ձեռքի տակ եղած հնատիպ օրինակում նա այս հիշատակարանը բովանդակող էջերը պակասում են, ուստի բնագիրը քաղում ենք Լ. Գ. Մինասյանի նկարագրությունից (նշվ. աշխ., էջ 34), հմմտ. «Հայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 27:

[24] Խաչատուր Կեսարացու «Ժամագիրք»-ի հիշատակարանի սույն տեղեկության կապակցությամբ Ն. Ակինյանը գրում է. «Այս եւ նման կարգադրութիւնները, որոնցմով բարեզարդեց Մովսէս եկեղեցին, կը հետապնդէին ծածուկ նպատակը, գրաւիչ ընծայել Աստուծոյ տաճարը ժողովրդեան եւ հրապուրել զանոնք խուռնընթաց ներկա գտնուելու ծիսակատարութեանց, արարողութեանց ներդաշնակ թեմադրութիւնը պիտի վառէր ներկաները բարեպաշտ զգածումներով եւ կրթէր անոնց սրտերը պաշտամանց խնկաբոյր ազդեցութեան տակ» (Հ. Ն. Ակինեան, Մովսէս Գ. Տաթեւացի Հայոց Կաթողիկոսն եւ իր ժամանակը, Վիեննա, 1936, էջ 173):

Հրատարակության գլխավոր հիշատակարանում (էջ ՈԳ/603-ՈՁ/606) Խաչատուր Կեսարացին սահմանում է գրքի նպատակը՝ «... կարգաւորութիւն հասարակաց աղօթից զեկեղեցեաց Հայաստանեայց», ապա և բնորոշում իր գլխավորած միաբանությունը՝ «Ընդ հովանեաւ սուրբ Ամենափրկչի վանիցս. որ է մենաստան կուսակրօնից բանասիրաց»: Պակաս ուշագրավ չեն տպագրությունը խթանող պարագայի հստակ անվանումը. «Քանզի այս ամէներջանիկ վարդապետն Խաչատուր օր ըստ օրէ տեսանէր զտպագրութիւնս ի մէջ ազգացն լատինացւոց՝ ցանկայր միշտ որպէսզի լիցի ի մէջ Հայաստանեայց ևս: Եւ յարաժամ խնդրէր հնար գիւտի արուեստիս այսորիկ եւ իբրեւ ոչ գտաւ ուստեք առ ի լնուլ զփափաք ցանկութեան իւրոյ, ապաւինեալ այնուհետեւ ի Հոգին Սուրբ, որ բաշխէ զշնորհս իւր առատապէս որք յուսան ի նա. սկսաւ աշխատիլ իւրով միաբան ուխտիւն. մինչ զի ի կատար էհան զտպագրութիւնս եւ ափոեալ տարածեաց զգիրս ի մէջ Հայաստանեացս, որ եւ ժամագիրքս զայս աշխատասէր կամօք ջանացեալ յաւարտ էհան ձեռամբ իւրով...» (էջ ՈԴ)[25]:

Վերոբերյալ տեղեկության երկու ծայրերը ի մի բերելով՝ կունենանք գրքի տպագրության և կիրառության լիարժեք հավաստում՝ «ցանկայր միշտ որպեսզի լիցի ի մէջ Հայաստանեաց ևս», և ապա՝ «ափոեալ տարածեաց զգիրս ի մէջ Հայաստանեացս»:

Ինչպես արդեն ասել ենք, սեփական հնարանքով տպարան ստեղծելու և տպագրություն գլուխ բերելու իրողությունը ամենևին չէր գայթակղում Խաչատուր Կեսարացուն՝ գոհանալու ինքնագործունեությամբ: Նա հրաշալի գիտակցում էր եվրոպական գրատպության կենտրոններում հայերեն տառեր ձուլել տալու, մայրեր պատրաստելու, տեխնիկական այլազան սարքավորանքներ ձեռք բերելու և, ի վերջո, վարպետ տպագրիչների աշխատանոցում աշակերտներ պատրաստել տալու անհրաժեշտությունը, ուստի առաջին իսկ տպագրությունից հետո (1638 թ.), իր հմուտ աշակերտներից մեկին՝ Հովհաննես վարդապետ Քթոեշենց Ջուղայեցուն ուղարկեց Իտալիա: Վերջինս 1644 թ. Լիվոռնոյում տպագրեց «Գիրք եւ Սաղմոսք Դաւթի, որ եւ Սաղմոսարան կոչի: Տպագրեալ եղեւ ի հայրապետութեանն Հայոց տէր Փիլիպոսի սրբազան կաթողիկոսի, հրամանաւ եւ կամօք երջանիկ Խաչատուր վարդապետին Կեսարացոյ, ձեռամբ եւ հոգացողութեամբ նուաստ Յովհաննէս վարդապետի Ջուղացոյ լիւրում տպարանի, զոր կայացոյց յԻտալիա...»[26]: Գրքի չհամարակալված 3-7 էջերում տպագրիչի խոսքն ու ուղերձն է «Աւ երջանիկ տէրն իմ՝ տէր Խաչատուր րաբունեաց պետն, ի նուաստ Յովհաննիսէ Ջուղացոյ բանի սպասաւորէ»: Այստեղից ու հիշատակարանից տեղեկանում ենք, որ Հովհաննեսը մեկ տարի ծախսել է ճանապարհներին, նախ հասել Վենետիկ, ուր և «վերահասու է

---

[25] Լ. Գ. Մինասյանի գրքում «որք յուսան ի նա, սկսաւ աշխատիլ» հատվածը մասամբ աղավաղ ընթերցմամբ է տրված՝ «որք յուսանին սակաւ աշխատիլ» (էջ 31):

[26] Նկարագրությունը տե՛ս «Հայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 28-29:

եղել գործառնութեանցս», այսինքն տպագրական գործ է տեսորել, ապա անցել Հռոմ «եւ անդ սկիզբն արարի նորագոյն գրոց եւ տպոց եւ աւարտեալ մասն ինչ ի գործոցս՝ առի զարհեստաւորս եւ դիմեցի ի Լիվոռնոյ. եւ անդ զտեղի կալեալ՝ մեծաւ ջանիւ եւ բարի դիտաւորութեամբ զտիւ եւ գիշեր անդադար աշխատելով՝ լրումն տուաք տպագրութեանս, յերկարելով յաշխատութիւնս, բաց ի ճանապարհէն, Գ (3) ամ եւ Գ (3) ամիս, անմխիթար յամենայն կողմանց»: Շարունակության մեջ կան զանազան այլ մանրամասնություններ, բայց կարևորն այն է, որ 1050 օրինակով կատարված այս տպագրությունը նա համարում է «միջին կերպ», «փորձ» իր ունեցած տառատեսակների ու զարդագրերի գործածության: Տպագրության «ձեռնտուները» (հովանավորները), ինչպես և սպասելի էր, «բարեպաշտասէր վաճառականք» են, իսկ բուն թելադիրն ու բնագիր ընձեռնողը՝ խաչատուր վարդապետ Կեսարացին[27]: Թե վերջինիս խմբագրությամբ տպագիր կերպարանք ստացած «Սաղմոսարան»-ը ժամանակակիցների միջավայրում ինչ ճանաչում ու հեղինակություն ուներ՝ կարելի է վստահանալ 1673/4 թվականին Մարսելում Ոսկանի և նրա քրոջորդու տպագրած «Սաղմոսարանի» ծանուցման այն տեղեկությամբ, թե բնագիրը արտատպված է «ի ճշմարիտ եւ ստոյգ յօրինակէ տեառն Խաչատրոյ Կեսարացւոյ մեծի հռետորի»[28]: Մինչ այդ էլ, 1661-1662 թվականներին, Ավետիս Ղլիճենցի (Ոսկան Երևանցու եղբոր) և Կարապետ Անդրիանացու Ամստերդամում տպագրած «Սաղմոսարան»-ի զաղափար երկու օրինակներից մեկը Խաչատուր Կեսարացու խմբագրություն-հրատարակությունն է, որի մասին խոսվում է հիշատակարանում. «Այլեւ յերկուց հանդիսացեալ օրինակաց սրբագրեցաւ. մինն առաջնոյ ասացելոյն (իմա՝ «զկերպ եւ զօրինակ տառին առեալ էր յերջանիկ ռաբունապետէն Մօսիսէ, նաեւ զգաղափար Սաղմոսարանիս» - Ա.Կ.) եւ միւսն՝ ի Կեսարացւոյ տէր Խաչատրոյ ռաբունապետի տպեալ յատենեանցն, սակս որոյ զբառս ոմանս եդինք առընթեր ի լուսանցսն՝ ստորասական եւ բացասական նշանօք»[29]: Սաղմոսների գիտաքննական հրատարակությամբ անշուշտ կպարզվի, թե ինչ բնագրական ինքնատիպություններով է օժտված Խաչատուր Կեսարացու անվան հետ կապված խմբագրություն-սրբագրությունը: Բայց որ այն ճանաչում ու տարածում է ունեցել՝ այլևս կասկածից դուրս է[30]:

---

[27] «Հայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 29, հմմտ. Գ. Զարպհանալեան, Պատմութիւն հայկական տպագրութեան, Վենետիկ, 1895, էջ 86-91:

[28] Նույն տեղում, էջ 67:

[29] Նույն տեղում, էջ 39:

[30] Հովհաննես Զուղայեցու «Սաղմոսարանի» օրինակ ձեռքի տակ չունենալու պատճառով դժվարանում ենք ստույգ որոշել, թե «Առաքարանի» Գ. Զարպհանալյանի և Երևանյան 1988 թվականի հրատարակության ունեցած ընթերցումներից ո՞րն է բնագրային՝ «աղօթիւք տեառնդ իմոյ աւարտեցաք զտպագրութիւնս ամթերի եւ անպակաս կատարելութեամբ. որք են տիպք զանազանք՝ ըստ զանազան որակութեան եւ քանակութեան. մեծք եւ փոքրք՝ ութիւք որոշեալք. ընդ որոց է եւ միւթ երգոց եւ շարականաց» (Գ. Զարպհանալեան, նշվ. աշխ., էջ 87), թե «... որք են տիպք զանազանք՝ ըստ զանազան որակութեան եւ քանակութեան մեծ եւ փոքրութիւնք որոշեալք, ընդ որոց...»:

Հովհաննես վարդապետ Ջուղայեցին, Գ. Զարպհանալյանի արդարացի կոահմամբ. «այնչափ իրարմէ զանազանեալ տառեր եւ կաղապարք շինել տուեր է շատ ծախքով. եւ միայն մէկ տեսակը իր վարդապետին (իմա՝ Խաչատուր Կեսարացուն - Ա.Կ.) եւ ընթերցողուց կը ներկայացնէ...»[31], և քանի որ Գ. Զարպհանալյանի աշխատության հրատարակության տարիներին, 1647 թ., Նոր Ջուղայում լույս տեսած «Պարզատումար»-ը դեռ հայտնի չէր ուսումնասիրողին, ոչ էլ Խաչատուր աբեղա Ջուղայեցու «Պատմութիւն պարսից»-ն էր հրատարակված, իրավացի էր մխիթարյան հոր հարցումը, թե «Մեզ անծանօթ կը մնայ. թէ այնչափ ծախք եւ կազմած ինչ բանի ծառայեր են, ինչ եղեր են այն տառերն եւ կաղապարք, որովհետեւ Սաղմոսարանովս կը լռէ նաեւ Ցովհաննու Ջուղայեցւոյ տպագրական գործունէութիւնը եւ անունը...»[32]:

Մենք արդեն գիտենք, որ Հովհաննես վարդապետ Քթոեշենց Ջուղայեցին ուսուցչի՝ Խաչատուր Կեսարացու մահից (1646 թ.) մեկ տարի անց վերադարձավ Նոր Ջուղա՝ իր հետ բերելով ձուլել տված տառերն ու կաղապարները, տպագրական կազմածքներն ու կլիշեները, և այստեղ տպագրեց «Պարզատումար» կոչվող գիրքը: Սակայն այդ առաջին ձեռնարկի հիշատակարանից պարզ է դառնում, որ ուսուցչի կորստից հետո միաբանության մյուս անդամները տպագրության արվեստի հանդեպ սպասելի հետաքրքրություն ու շահագրգռություն չունեն: Սահակի ու Մեսրոպի աշակերտների պես «եւ մեք հրամանաւ սուրբ հօրն մերոյ Խաչատուր վարդապետին,- գրում է Հովհաննես վարդապետը, - բազում աշխատութեամբ զարհեստս զայս ածեալ ի յարեւելից ի յարեւմուտս[33] գտի զնա վախճանեալ, եւ եղեն անընդունելիք աշխատութիւնք մեր յայլոց, վասն որոյ եւ աղէկիզել ապաշաւեմ յոյժ՝ որպէս եւ յայնժամ քերթողքն: Այլ զի մի՛ ընդունայնասցի աշխատութիւնք իմ եւ ջանք վասն գտանին (sic)[34] իմոյ, նաեւ թերեւս շարժիցէ ոք ի նախանձ առաջանալոյ գործոցս՝ նայելով ի շահաւետութիւն եւ ի արդիւնաւորութիւն տպագրութեանս, ապաւինեալ ի հոգին սուրբ ձեռնարկեցի տպել զՊարզատումարս, որ ըստ Ագարիայինն...»[35]:

Ինչպես երևում է, «ի նախանձ շարժվողներ» գրեթե չեն գտնվել, ուստի անավարտ է մնացել Հովհաննես վարդապետի՝ Նոր Ջուղայում կատարած երկրորդ ձեռնարկումը, որ Խաչատուր աբեղա Ջուղայեցու տեղեկությամբ վերաբերել է Աստվածաշնչի ամբողջական բնագրին: Պատմիչը տեսել է այդ կիսավարտ տպագրությունը և գովել այն՝ «սա կարի լաւագոյն ունելով զթուղթն եւ զգիրն, քան զառաջին տպեալ գրեանսն»[36]: Մասնագիտական գրականության մեջ ընդունված է այս

---

[31] Գ. Զարպհանալեան, նշվ. աշխ., էջ 90:

[32] Նշվ. աշխ., էջ 91:

[33] Սպասելի էր ճիշտ հակառակը՝ «ի յարեւմտից ի յարեւելս»: Դժվարանում ենք ասել՝ վրիպումը բնագրային է, թե տպագրական: Ուղղելիքը արձանագրել է նաև Լ.Գ. Մինասյանը (նշվ. աշխ., էջ 43):

[34] Լ.Գ. Մինասյանի ընդօրինակմամբ՝ «ջանք վերագտին իմոյ» (անդ.):

[35] «Հայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 31:

[36] Խաչատուր աբեղայ Ջուղայեցի. Պատմութիւն Պարսից, էջ 121:

անավարտ տպագրությունը զետեղել 1650 թվականի տակ[37]: Շատ հնարավոր է, որ Թավերնիեի «Ճանապարհորդություն Պարսկաստանում» գրքում հիշատակվող «Թուղթք Պօղոսի» հրատարակությունը ևս պատկանում է այս Հովհաննես վարդապետ Ջուղայեցուն, թեև դժվար բացատրելի է նրա «ատաղձագործաց գլխավոր» որակումը, ինչ ավելի շուտ կարող էր Հակոբջանին վերաբերել[38]:

Հովհաննես վարդապետ Քթոնեշենց Ջուղայեցին, ինչպես նշեցինք, սպասելի ընդունելություն չգտավ Նոր Ջուղայում. մասամբ փոխվել էին տեղիս հայոց տնտեսական պայմանները, մասամբ էլ այն պատճառով, որ վանական միաբանությունը Դավիթ առաջնորդի օրոք գբաղված էր առավել առաջնահերթ այլ գործով՝ վանքի ու օժանդակ կառույցների շինարարությամբ: Ինչպես երևում է, ինքը՝ Հովհաննես վարդապետն էլ բավարար չափով հետևողական ու ուսուցչի չափ հեղինակություն ունեցող չէր, ուստի Նոր Ջուղայում Խաչատուր Կեսարացու մեծազոր ջանքերով ու նվիրումով սկիզբ առած տպագրական գործը աստիճանաբար թուլացավ ու XVII դարի 50-ական թվականներին փաստորեն դադարեց[39]: Եվ, այնուամենայնիվ, 1638-1647 թվականների միջև ընկած տասնամյակը հայոց տպագրության պատմության արդյունավոր էջերից է, իսկ նրա հիմնադիր Խաչատուր Կեսարացին ու իր աշակերտները՝ «անմոռաց յիշատակութեան արժանաւոր... ոչ լոկ բազմաքիրտն եւ բազմավաստակ ջանից պատճառաւ, այլ եւ արտադրած երկին՝ մատենին արուեստական ազնուութեամբ, անվթար եւ գրեթէ անսխալ տպագրութեամբ, հաճոյատեսիլ ձեւովք տառից, մաքրութեամբ եւ ընտրութեամբ ուրիշ ամէն հանգամանաց թղթոյ, պատկերաց եւ զարդուց»[40]:

Շուրջ չորս տասնամյակ անց միայն Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի միաբանները, կաթողիկե վարդապետության քարոզչությանը ընդդիմանալու անհրաժեշտության թելադրանքով, վերստին դիմեցին գրատպությանը՝ հրապարակ բերելով Աղեքսանդր Ջուղայեցու «Գիրք ատենական, որ ասի վիճաբանական» աշխատությունը (1687 թ.):



---

[37] «Հայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 32:

[38] Տես Հ.Գ. Զարպհանալյան, նշվ. աշխ., էջ 86, հմմտ. Լ. Գ. Մինասյան. նշվ. աշխ., էջ 45: Խաչատուր աբեղա Ջուղայեցին Հովհաննես վարդապետի վերաբերյալ իր տեղեկություններն ավարտում է հետևյալ ամփոփմամբ. «Բայց եւ զայլս իսկ զտցես ի լիակատար պատմութեան նորա, զորմէ եւ ես ի կարճոյ արտահանեալ համառօտ աստստին մատենագրեցի ի հրճուանս քո» («Պատմութիւն Պարսից», էջ 120): Արդյո՞ք սա նշանակում է, թե Հովհաննես Ջուղայեցին ունեցել է «Լիակատար պատմութիւն» կոչվող երկ, ինչպես այդ ընկալել է Մ. Թաղիադյանը (տե՛ս «Ազգասէր», Կայկաթա, 1845, թիվ 4, էջ 30):

[39] Հովհաննես վարդապետ Ջուղայեցին տպագրական վերջին փորձերը կատարելուց հետո էջմիածնում եպիսկոպոս ձեռնադրվեց և իբրև թեմական առաջնորդ ու վանահայր Հին Ջուղա ուղարկվեց, ուր և սպանվեց օտարների ձեռքով:

[40] Հ. Գ. Զարպհանալեան, նշվ. աշխ., էջ 91:

ՊՐՈՖ. ԴՐ. ՅՈՒԼԻՈՒՍ ԱՍՖԱԼԳ

2001 թ. հունվարի 12-ին, 81 տարեկան հասակում, անսպասելիորեն դադարեց բաբախել նշանավոր բանասեր, արևելագետ, Քրիստոնյա Արևելքի գրականությունների և լեզուների հետազոտող, Մյունխենի և Թբիլիսիի համալսարանների պատվավոր պրոֆեսոր, Վրաստանի ԳԱ արտասահմանյան անդամ, Քրիստոնյա Արևելքի ժողովուրդների լեզուների և միջնադարյան մատենագրությունների ճանաչված մասնագետ Յուլիուս Ասֆալգի սիրտը:

Նա ծնվել է 1919 թ. նոյեմբերի 6-ին Խիմգաուի մարզի Վերին Աշաու քաղաքում: Գիմնազիան ավարտելուց հետո նա սկզբում փիլիսոփայություն և աստվածաբանություն է ուսանել Ֆրեյզինգում և Այխշտատում, իսկ զինծառայությունից և հետպատերազմյան գերությունից հետո (1946/7 թ.) ուսումը շարունակել է Մյունխենում: Այստեղ էլ նա, ի միջի այլոց, սկսում է լրջորեն զբաղվել արևելյան լեզուներով, իսկ 1948 թ. ամառային քննաշրջանից հետո փոխադրվում է Քրիստոնյա Արևելքի ուսումնասիրության ամբիոն: Այս բնագավառում նրա ուսուցիչներն են եղել նշանավոր արևելագետներ, պրոֆեսորներ Վիլհելմ Հենցշտենբերգը և Անտոն Շպիտալերը, որոնց ղեկավարությամբ երիտասարդ գիտնականը լծվել է Քրիստոնյա Արևելքի լեզուների (արաբերեն, ասորերեն, ղպտերեն, հայերեն, վրացերեն և եթովպերեն) ուսումնասիրության և հիշատակված ժողովուրդների միջնադարյան մատենագրությունների հետազոտության գործին: Մեծանուն գիտնականի հետաքրքրությունները պրոֆ. Գեորգ Գրաֆի ազդեցությամբ տեղափոխվել են սկզբում քրիստոնյա-արաբական մատենագրության ուսումնասիրության ոլորտ, հետագայում տարածվել են նաև վրացագիտության և հայագիտության ասպարեզ:

Երկարատև հետազոտական աշխատանքի ընթացքում ստեղծվում է նրա «Քահանայության կարգը» (Die Ordnung des Priestertums) աշխատանքը, որը վերարտադրությունն ու հետազոտությունն է ղպտական եկեղեցու հնագույն ծիսական գրքե-

րից մեկի (1955 թ.): Այդ ուսումնասիրությունն իբրև դոկտորական դիսերտացիա պաշտպանելուց (1955 թ.) հետո, հեղինակը ձեռնամուխ է եղել հին վրացական մատենագրության մեջ հինկտակարանային մարգարեների գրքերի հնագույն ընդօրինակություն-մատյանների հետազոտությանն ու հրապարակմանը (Altgeorgische Übersetzungen der Propheten Amos, Machaeas, Jonas, Sophonias und Zacharias)՝ ըստ Երուսաղեմի, Աթոսի և Սինայի հնագույն ձեռագրերի (1961 թ.): Այս աշխատանքը նրան մեծ ճանաչում է բերել և, 1961 թ. համալսարանում դասավանդելու իրավունք ստանալու հրապարակային քննարկումում գիտխորհրդի կողմից բարձր գնահատականի արժանանալուց հետո, թույլ է տվել բարձրագույն դպրոցում դասախոսական աշխատանք կատարել:

1966 թվականից Յուլիուս Ասֆալգը ղեկավարել է Քրիստոնյա Արևելքի լեզուների և բանասիրության Մյունխենի համալսարանի մասնագիտացված ամբիոնը, ուր նրա ղեկավարությամբ ուսանել է արևելագետների մի քանի սերունդ: Յուլիուս Ասֆալգը հատկապես ուշադրությամբ է շրջապատել Քրիստոնյա Արևելքի մշակույթը կրող ուսանողներին, որոնց թվում եղել են արաբներ, ասորիներ, հայեր, ղպտիներ ու վրացիներ: Նրա դասախոսական գործունեությունը անընդհատորեն շարունակվել է նաև նրա կենսաթոշակի անցնելու տարիներին:

Յուլիուս Ասֆալգի հեղինակած աշխատանքների մեջ հաստատուն արժեք ունեն Գերմանիայում պահպանվող ասորական (1963), հայկական (1962) և վրացական (1963) միջնադարյան գրչագրերի ձեռագրացուցակները, որոնք սեղանի գիրք են գիտության այդ բնագավառներով զբաղվող մասնագիտների համար: Յոզեֆ Մոլիտորի աշխատակցությամբ կազմած հայկական ձեռագրերի ցուցակն ընդգրկում է Բեռլինի, Բոլոնի, Գոսլարի, Դարմշտադտի, Ենայի, Էրլանգենի, Թյուբինգենի, Հալլեի, Մարբուրգի Մյունխենի, Նյուրնբերգի, Շտուտգարտի, Ֆուլդայի մինչ այդ անհայտ շուրջ 38 մատյան (գրախ. տե՛ս ՀԱ, 1963, էջ 437, REA, t.I, 1964, p.433-436, Le Museon, v.LXXVII, 1964, p. 266-267, «Բազմավէպ», 1967, էջ 107): Տքնաջան աշխատանքի արդյունք այդ հետազոտությունները նոր թափ են հաղորդել Գերմանիայում Քրիստոնյա Արևելքի մատենագրությունների ուսումնասիրությանը և համաշխարհային հռչակի արժանացրել հեղինակին: Յուլիուս Ասֆալգի ջանքերով գերմանական արևելագիտության սեփականությունն է դարձել Կոռնելի Կեկելիձեի Վրաց եկեղեցական մատենագրության պատմության թարգմանությունը (1955 թ.): Նրա հեղինակած գրախոսությունների նյութն են դարձել Քրիստոնյա Արևելքի բանասիրությանն ու մատենագրություններին վերաբերող բազմաթիվ հետազոտություններ, որոնց մանրակրիտ վերլուծությանը հեղինակն անդրադարձել է «Oriens Christianus» և այլ ամսագրերում: Տարբեր հանդեսներում, ժողովածուներում և հանրագիտարաններում հրապարակած հոդվածների միջոցով նա լայն ճանաչման է արժանացրել Քրիստոնյա Արևելքի գիտական հետազոտության խնդիրները: Հիշատակելի է Էռնեստ Համերշմիդտի հետ Յուլիուս Ասֆալգի հրապարակած հայ-

կական ծիսական սիմվոլիկային նվիրված ուսումնասիրությունը (Abriß der armenischen Kultsymbolik. in: Symbolik des orthodoxen und orientalischen Christentums. Stuttgart 1962. S. 235-254): Գիտնականի բազմակողմանի գիտելիքների ամբարումն է «Քրիստոնյա Արևելք համառոտ հանրագիտական բառարանը» (Kleines Lexikon des Christlichen Orients, Wiesbaden. 1975), ուր Պոլ Կրյուգերի հետ համակարգել ու պատասխան է տվել արաբ. ասորի, եթովպ. դպտի, հայ և վրաց եկեղեցիների պատմության և մշակույթի բազմազան ու բազմաբնույթ խնդիրների: Յուլիուս Ասֆալգի գիտական գործունեության մեջ առանձնահատուկ տեղ ունի «Oriens Christianus» ամսագիրը, որի հրատարակիչներից է սկսած 1965 թ.: Այստեղ նա կարողացել է հայտնաբերել Քրիստոնյա Արևելքի նորանոր հետազոտողներ, ուղղություն տվել գերմանական և համաշխարհային Արևելագիտության այս բնագավառին: Նմանատիպ գործունեություն նա երկար տարիներ վարել է նաև Քրիստոնյա Արևելքի մատենագրությունների հրապարակման հանձնաժողովը՝ ղեկավարելով արաբական մասնաճյուղի աշխատանքները:

Յուլիուս Ասֆալգը նաև այն երջանիկ գիտնականներից է, որի վաստակը գնահատվել է արդեն կենդանության տարիներին: 1990 թ., նրա ծննդյան 70-ամյակի կապակցությամբ, մեծանուն գիտնականի ընկերներն ու աշակերտները հրապարակել և նրա տարելիցին են նվիրել Քրիստոնյա Արևելքի լեզուների և մատենագրությունների ուսումնասիրության խնդիրներին վերաբերող ծանրակշիռ հետազոտությունների մի ժողովածու: Այստեղ (Lingua Restituta Orientalis) է հրապարակված նաև նրա աշխատությունների մատենագիտությունը:

Յուլիուս Ասֆալգի աշակերտները և ճանաչողները ընդգծում են նրա չափազանց արդյունավետ և բազմակողմանի մանկավարժական գործունեությունը, նվիրվածությունը գիտությանը, բարձր են գնահատում նրա մարդկային արժանիքները:

Երրորդ հազարամյակի շեմին ընդհատվեց Քրիստոնյա Արևելքի ուսումնասիրության բնագավառում իր կյանքը ներդրած գիտնականի կյանքի թելը:

ԱԶԱՏ ԲՈՋՈՅԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 1-ին, երկուշաբթի.- Գ. օր Ծննդեան պահոց: Կաղանդ, Տարեմուտ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արիստակես աբեղա Այվազյանը: «Հայր մեր»-ից առաջ Գարեգին արքեպս. Պնքչյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց Հայրապետական մաղթանք:

Հունվարի 5-ին, ուրբաթ.- Ճրագալույց Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արսեն արքեպիսկոպոս Բերբերյանը: «Հայր մեր»-ից առաջ Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագից հետո ողջ միաբանությունն ու ուսանողությունը, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողության ներքո շարժվեցին Վեհարան, որտեղ փնօրհնեքի արարողությունը կատարելուց հետո, գնացին սեղանատուն՝ Տիրոջ Ծննդյան ավետիսը ցնծությամբ նշելու համար:

Հունվարի 6-ին, շաբաթ.- ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը Սուրբ Ծննդյան իր պատգամը ուղղեց հայ ժողովրդին (տե՛ս էջ 3):

Հրեթացս Ս. Պատարագի Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ կատարվեց Ջրօրհնեքի արարողություն:

Ս. Պատարագին ներկա էին ՀՀ կառավարության, ՀՀ Ազգային ժողովի, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված արտակարգ և լիազոր դեսպաններ, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, բազմաթիվ հույրեր:

Հունվարի 7-ին, կիրակի.- Բ. օր Մնանդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Աշոտ աբեղա Մնացականյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ Սուրբ և անմահ Պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ վասն հանգրեն ննջեցելոց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հունվարի 13-ին, շաբաթ.- Ը. օր Մնանդեան: Տօն Անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սահակ աբեղա Շաքարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հունվարի 14-ին, կիրակի.- Ա. կիրակի զկնի Մնանդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ա. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսը: Հընթացս Ս. Պատարագի Վեհափառ Հայրապետի ձեռամբ կատարվեց ճեմարանավարտ յոթ սարկավագների՝ Արտակ սրկ. Սահակյանի, Աշոտ սրկ. Ղազարյանի, Սամվել սրկ. Կիրակոսյանի, Հայկ սրկ. Պողոսյանի, Արսեն սրկ. Պատուրյանի, Բաբկեն սրկ. Նանյանի և Արման սրկ. Սարոյանի քահանայական ձեռնադրությունը: Ձեռնադրության ավարտին Վեհափառ Հայրապետը «Փա՛ռք քեզ, Աստուած, Փա՛ռք քեզ, յաղագս ամենայնի, Տէ՛ր, փառք քեզ» բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 38):

Հունվարի 21-ին, կիրակի.- Բ. կիրակի զկնի Մնանդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Դանիել աբեղա Թումանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հունվարի 28-ին, կիրակի.- Գ. կիրակի զկնի Մնանդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մոմիկ վարդապետ Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

"ЭЧМИАДЗИН"
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(Январь 2001)

ОФИЦИАЛЬНАЯ ИНФОРМАЦИЯ

1. Новогоднее послание Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, армянскому народу всего мира, 31 декабря 2000 г. (с. 3-5).
2. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю 1700-летия принятия христианства как государственной религии в Армении, 6 января 2001 г., № 34 (с. 6-10).
3. Поздравительные письма, открытки и телеграммы, которыми обменялись Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, главы других христианских церквей, иерархические престолы армянской церкви и официальные лица по случаю Нового Года и Рождества (с. 11-13).
4. Лампада Григория Просветителя освещает наш путь к Богу (транспортировка в Св. Эчмиадзин лампады, зажженной от вечного огня Григория Просветителя в Хор Вирапе, и священное зажигание свечей от этой лампады), 31 декабря 2000 г. (с. 14-16).
5. Аудиенция делегации Совета Европы, под руководством Президента Комитета Министров, Министра иностранных дел Латвии Индулиса Берзинша, у Его Святейшества Гарегина II, 4 января 2001 г. (с. 17).
6. Католикос Гарегин II, "Нет смерти для нас, пока вера жива в наших деяниях": Празднование Рождества в Св. Престоле Эчмиадзина, 6 января 2001 г. (с. 18-19).
7. Аудиенция члена Бундестага Фолкера Рюхе у Его Святейшества Гарегина II, 10 января 2001 г. (с. 20).
8. Аудиенция Генерального секретаря НАТО Джорджа Робертсона у Его Святейшества Гарегина II, 16 января 2001 г. (с. 21).
9. Новые назначения в Св. Престоле и в армянской епархии Грузии (Его Преосвященство епископ Парен Аветикян назначен главой Администрации Св. Престола, сохранив одновременно пост администратора-директора Св. Престола, а Преподобный аббат Бабкен Салбиян назначен исполнителем обязанностей главы Самцхе-Джавахской епархии) - (с. 22).

10. Дантевский Центр г. Равенны будет отмечать 1700-летие принятия христианства как государственной религии в Армении (Аудиенция в Св. Эчмиадзине Директора Дантевского Центра Преподобного Отца Энцо Фантини у Его Святейшества Гарегина II), 19 января 2001 г. (с. 23).

В СВЯТОМ ПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

11. **ДПИР ДАВИД МАРГАРЯН** - Празднование Нового Года в Св. Престоле Эчмиадзина, 31 декабря 2000 г. - 1 января 2001 г. (с. 24-30).
12. **ОРАРЕНОСЕЦ ВАЧИК ЗАРГАРЯН** - Торжественное празднование Нового Года и Рождества в семинарии Вазгенян в Севане, 13 января 2001 г. (с. 31-35).
13. **ДПИР ГАЙК БАРСЕГЯН** - Посвящение в сан священника и пожалование клобуков в Св. Престоле Эчмиадзина (помещены биографии новопосвященных аббатов Аветиса Саакяна, Мкртича Прошяна, Вазгена Наняна, Геворка Сарояна и священников Вирапа Газаряна, Хорена Киракосяна, Мамбре Патуряна), 13-14 января 2001 г. (с. 36-44).

РЕЛИГИОЗНЫЕ ИССЛЕДОВАНИЯ

14. **АРХИЕПИСКОП АРСЕН БЕРБЕРЯН** - Знания, необходимые христианам (научное исследование) - (с. 45-50).
15. **ИГУМЕН ЕВМЕНИЙ** - Эгоцентризм (научное исследование, переведенное с русского языка аббатами Мкртичем Прошяном и Вазгеном Наняном) - (с. 51-55).

1700-ЛЕТИЕ

16. "Эчмиадзин" (Слова Ованеса Ованесяна, музыка Комитаса Геворкяна), песня для четырехголосового хора и фортепиано, для голоса и фортепиано, для голоса и инструментов (с. 56-67).

ИСТОРИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

17. **АНАТОЛИЙ ПЕТРОСЯН** - Первоначальная композиция Эчмиадзинского Собора (научное исследование) - (с. 68-76).
18. **АЙКАЗ ОВАНЕСЯН** - Первое исследование истории Армении в России: "Обзор истории Армении" Сергея Глинки (научное исследование) - (с. 77-90).
19. **ПЕТРОС ОВАНЕСЯН** - Новооткрытая статья-рецензия Николая Адонца, посвященная вопросам истории середины XIX века Армянской церкви (по

случаю 130-летия рождения Адонца; исследование, текст: "Биография: Архиепископ Саркис Сарафян и армяне-католики того времени, написанная Преподобным верховным архимандритом Галемкяряном, членом Конгрегации Мхитаристов Вены, 1908 г.") - (с. 91-107).

ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

20. **АЙЦЕМИК КОРКОТЯН** - Публикации архимандрита Хачатура Кесараци (научное исследование) - (с. 108-123).
21. **АЗАТ БОЗОЯН** – Доктор, профессор Юлиус Асфальг (1919-2001 гг.). Некролог (с. 124-126).
22. Краткие церковные новости. Информация о Святой Службе, проповедях и других церемониях в Кафедральном Соборе и Св. Престоле Эчмиадзина в течение января (с. 127-128).

"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(January 2001)

OFFICIAL INFORMATION

1. New Year Message of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, to Armenian all over the World, 31 December 2000 (p. 3-5).
2. Encyclical of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, on the Occasion of the 1700th Anniversary of the Adoption of Christianity as State Religion in Armenia, 6 January 2001, no. 34 (p. 6-10).
3. Congratulation letters, Christmas cards and Telegrams exchanged on the occasion of Christmas and the New Year between His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, Heads of other Christian Churches, Armenian Hierarchical Sees and Official Figures (p. 11-13).
4. The Torch of the Gregory the Illuminator lights up our Way to God (Transportation to Snint-Echmiadzin of a Torch lit up from Gregory the Illuminator Eternal Fire of Khor Virap and lighting up Candles with it), 31 December 2000 (p. 14-16).
5. Audience given by His Holiness Gareguin II to the Delegation of the Council of Europe headed by Indulis Berzinsh, Acting Chairman of the Ministers Committee, Ministre of Foreign Affairs of Latvia, 4 January 2001 (p. 17).
6. Catholicos Gareguin II, "There is no Death for us as long as Faith is living in our Deeds": Christmas Celebration at the Holy See of Echmiadzin, 6 January 2001 (p. 18-19).
7. Audience given by His Holiness Gareguin II to Volker Ruhe, member of the Bundestag, 10 January 2001 (p. 20).
8. Audience given by His Holiness Gareguin II to George Robertson, Secretary General of the NATO, 16 January 2001 (p. 21).
9. New Appointments at the Holy See and the Armenian Diocese of Georgia (His Eminence Bishop Paren Avetikian is appointed as Head of the Administration of the Holy See, remaining at the same time Administrator-Director of the Holy See Museums; Reverend Abbot Babken Salbiian is appointed as Acting Head of the Samtskhe-Djavakhk Diocese) - (p. 22).
10. The Dante Center of Ravenna will celebrate the 1700th Anniversary of the Adoption of Christianity as State Religion in Armenia (Audience given in Saint-Echmiadzin

by His Holiness Gareguin II to Reverend Father Enzo Fantini, Head of the Dante Centre, 19 January 2001, (p. 23).

AT THE HOLY SEE AND IN THE DIOCESES

11. **DPIR DAVID MARGARIAN** - New Year Celebration at the Holy See of Saint-Echmiadzin, 31 December 2000 - 1 January 2001 (p. 24-30).
12. **CHASUBLE-BEARER VACHIK ZARGARIAN** - Solemn Celebration of Christmas and the New Year at the Vazguenian Seminary of Sevan, 13 January 2001 (p. 31-35).
13. **DPIR HAYK BARSEGHIAN** - Priest Ordination and Mitre Donation at the Holy See of Saint-Echmiadzin (Biographies of new ordinated Abbots Avetis Sahakian, Mekertich Proshian, Vazguen Nanian, Guevork Saroyan and Priests Virap Ghazarian, Khoren Kirakossian, Mambre Patourian), 13-14 January 2001 (p. 36-44).

RELIGIOUS STUDIES

14. **ARCHBISHOP ARSEN BERBERIAN** - Necessary knowledge for Christians (investigation) - (p. 45-50).
15. **ABBOT EVMENY** - Egocentricity (investigation translated form Russian by Abbots Mekertich Proshian and Vazguen Nanian) - (p. 51-55).

1700th ANNIVERSARY

16. "Echmiadzin" (Words by Hovhannes Hovhannissian, music by Komitas Guevorkian), song for four-part chorus with piano accompaniment, for soloist with piano, for soloist with instruments accompaniment (p. 56-67).

HISTORICAL STUDIES

17. **ANATOLY PETROSSIAN** - Initial Composition of the St.-Echmiadzin Cathedral (investigation) - (p. 68-76).
18. **HAYKAZ HOVHANNISSIAN** - First Investigation of Armenian History in Russia: "A Review of Armenian History" by Serguei Glinka (investigation) - (p. 77-90).
19. **PETROS HOVHANNISSIAN** - A newly found article of Nicolas Adontz, dedicated to Armenian Church History of the middle of the 19th century (On the occasion of the 130th anniversary of Adontz's birth; investigation, text: "Biography: Archbishop Sarkis Sarafian and Catholic Armenians of the Time by Reverend Supreme Archimandrite Galamkiarian, Member of the Mekhitarists Congregation of Vienna, 1908") - (p. 91-107).

PHILOLOGICAL STUDIES

20. **AYTSEMIK KORKOTIAN** - Publications of Archimandrite Khachatour Kessaratsi (investigation) - (p. 108-123).
21. **AZAT BOZOYAN** - Professor Dr. Julius Asfalg (1919-2001). Necrology (p. 124-126).
22. Brief Church News. Information about the Holy Masses, Sermons and other Ceremonies held at the Holy See and the St.-Echmiadzin Cathedral in January (p. 127-128).

"ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(Janvier 2001)

INFORMATION OFICIELLE

1. Message de Nouvel An de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à l'adresse des Arméniens du monde entier, 31 décembre 2000 (p. 3-5).
2. Encyclique de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens à l'occasion du 1700e anniversaire de l'évangélisation de l'Arménie, 6 janvier 2001, no. 34 (p. 6-10).
3. Lettres de félicitation, cartes postales et télégrammes échangés à l'occasion des fêtes de Noël et du Nouvel An entre Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, les chefs des autres Eglises chrétiennes, les sièges hiérarchiques de l'Eglise arménienne et les personnalités officielles (p. 11-13).
4. Le flambeau de Gregoire Illuminateur éclaire notre chemin vers Dieu (transport à St.-Etchmiadzine d'un flambeau allumé au feu éternel de Grégoire l'Illuminateur à Khor Virap et allumage de cierges à ce même flambeau) 31 décembre 2000 (p. 14-16).
5. Audience donnée par Sa Sainteté Garéguine II à la délégation du Conseil de l'Europe, menée par Indulis Berzinch, Président du Comité des Ministres, Ministre des Affaires étrangères de la Lettonie, 4 janvier 2001 (p. 17).
6. Catholicos Garéguine II, "Nous vaincrons la mort tant que la foi vit dans nos actions": Festivités de Noël au Saint-Siège d'Etchmiadzine, 6 janvier 2001 (p. 18-19).
7. Audience donnée par Sa Sainteté Garéguine II à Volker Rühe, membre du Bundestag, 10 janvier 2001 (p. 20).
8. Audience donnée par Sa Sainteté Garéguine II à George Robertson, Secrétaire Général de l'OTAN, 16 janvier 2001 (p. 21).
9. Nouvelles nominations au Saint-Siège d'Etchmiadzine et au diocèse arménien de Géorgie (Son Eminence l'évêque Paren Avétikian est nommé chef de l'Administration du Saint-Siège, tout en conservant son poste d'administrateur-directeur des musées du Saint-Siège; le Révérend abbé Babken Salbyan est nommé chef par intérim du diocèse de Samtskhé-Djavakhk (p. 22).
10. Le Centre Dante de Ravenne célébrera le 1700e anniversaire de l'adoption du christianisme comme religion d'Etat en Arménie (Audience donnée à St.-Etchmiadzine

par Sa Sainteté Garéguine II au Révérend Père Enzo Fantini. Directeur du Centre Dante, 19 janvier 2001 (p. 23).

AU SAINT-SIEGE ET DANS LES DIOCESES

11. **DPIR DAVID MARGARIAN** - Célébration du Nouvel An au Saint-Siège d'Etchmiadzine, 31 décembre 2000 - 1er janvier 2001 (p. 24-30).
12. **PORTE-CHASUBLE VATCHIK ZARGARIAN** - Célébration solennelle de Noël et du Nouvel An au Séminaire Vazguémian de Sévan, 13 janvier 2001 (p. 31-35).
13. **DPIR HAYK BARSEGHIAN** - Ordination de prêtres et donation de mitres au Saint-Siège d'Etchmiadzine (Biographies des abhés Avétis Sahakian, Mekertitch Prochian, Vazguen Nanian, Guévork Saroyan et des prêtres Virap Ghazarian, Khoren Kirakossian, Mambré Patourian nouvellement ordonnés), 13-14 janvier 2001 (p. 36-44).

ETUDES RELIGIEUSES

14. **ARCHEVEQUE ARSENE BERBERIAN** - Connaissances indispensables aux chrétiens (recherche scientifique) - (p. 45-50).
15. **ABBÉ EVMENY** - L'égocentrisme (recherche scientifique traduite du russe par les abhés Mekertitch Prochian et Vazguen Nanian)- (p. 51-55).

1700e ANNIVERSAIRE

16. "Etchmiadzine" (Paroles de Hovhannès Hovhannissian, musique de Komitas Guévorkian), chant pour choeur à quatre voix, accompagné de piano, pour voix accompagnée de piano, pour voix accompagné d'instruments (p. 56-67).

ETUDES HISTORIQUES

17. **ANATOLY PETROSSIAN** - La composition initiale de la cathédrale de St.-Etchmiadzine (recherche scientifique) - (p. 68-76).
18. **HAYKAZ HOVHANNISSIAN** - La première recherche sur l'histoire de l'Arménie en Russie: "Un aperçu de l'histoire d'Arménie" par Serguei Glinka (recherche scientifique) - (p. 77-90).
19. **PETROS HOVHANNISSIAN** - Un article nouvellement découvert de Nicolas Adontz, consacré aux questions de l'histoire du milieu du XIXe siècle de l'Eglise arménienne (à l'occasion du 130e anniversaire de la naissance d'Adontz; recherche scientifique, texte: "Biographie: L'archèvêque Sarkis Sarafian et les Arméniens catholiques de l'époque par le Révérend archimandrite suprême Galamkiarian de la Congrégation des Mekhitaristes de Vienne, 1908") - (p. 91-107).

ETUDES PHILOLOGIQUES

20. **AYTSEMIK KORKOTIAN** - Les publications de l'archimandrite Khatchatour Kessaratsi (recherche scientifique) - (p. 108-123).
21. **AZAT BOZOYAN** - Le professeur Dr. Julius Asfalg (1919-2001). Nécrologue (p. 124-126).
22. Brèves nouvelles ecclésiastiques - Information sur les Saintes Messes, les sermons et les autres cérémonies accomplies en janvier au Saint-Siège et à la Cathédrale d'Etchmiadzine (p. 127-128).